



# ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

- ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՅՔ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ**  
 Ա. Հովսեփյանի ելույթը իրավաբանների համահայկական համաժողովում
- ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՉԱՏԵԼԸ**
- ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
 Կրիմինալոգիական բնութագիրը
- ԲԱՆԿԱՅԻՆ ՊԱՐՏՆԵՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ**
- ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՅԱԿԱՐԳԸ**  
 Մահվան 800-ամյակի առթիվ

# ՄԵԾ ՕՐԵՆՍԳԵՏՆ ՈՒ ՄՏԱԾՈՂԸ

Այս տարի լրանում է միջնադարի մեծագույն մտածող, օրենսգետ և օրենսդիր, եկեղեցական և հասարակական գործիչ, մանկավարժ և առակագիր Մխիթար Գոշի մահվան 800 ամյակը: Անցած երկար ու ձիգ ութ դարերի ընթացքում ոչ միայն չի խամրել Գոշի հարուստ գրական ժառանգությունը, այլև նոր իմաստ ու որակ է ձեռք բերել: Հաջողությամբ դիմագրավելով դարերի փորձաքննությանը, այսօր էլ նրա հայեցակարգը՝ իրավունքի գերակայության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, մարդու իրավունքների հարգման, արդար ու ճշմարիտ դատաքննության, անվճար կրթության և այլ հարակից հարցերի վերաբերյալ, երբևիցե չի կորցրել իր տեսական և գործնական նշանակությունը:



# №78

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՐՄԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ - նախագահ  
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ  
ՎԱՅՐԱՍ ՇԱՅԻՆՅԱՆ  
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.  
375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72  
[www.genproc.am](http://www.genproc.am)

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝  
03.09.2013 թ.  
Ֆորմատ՝ 70 X 100 1/16  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2013 թ.

# 2013

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնարկային հրատարակման համար թույլատրելի գիտական պարբերականների ցանկում:

# «ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀՈՒՉԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԻՅ ԴԵՏՔ Է ԱՆՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ԴԵՊԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ»

*«Հ գլխավոր դատախազ, արդարադատության պետական  
խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր  
ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ելույթը  
իրավաբանների համահայկական 2-րդ համաժողովում*

5 հուլիսի 2013թ. ք. Երևան

## Համաժողովի հարգելի մասնակից-ներ

Թույլ տվեք, նախ գոհունակություն հայտնել, որ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ կազմակերպվել է իրավաբանների մերկայացուցչական և խիստ կարևոր այս համաժողովը, որն իմ խորին համոզմամբ կարող է լույս սփռել Հայոց ցեղասպանության իրավական շատ կնճռոտ հարցերի վրա և լուրջ ազդակ դառնալ Հայոց ցեղասպանության, և ընդհանրապես, հայկական հարցի իրավական ուսումնասիրության համար:

Խիստ արդիական և հետաքրքիր են նաև քննարկվող թեմաները՝ հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և հայ իրավական միտքը, ցեղասպանության հետևանքների վերացման իրավական հիմնահարցերը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Սփյուռքում ձևավորված տարածաշրջանային հանձնախմբերի գործունեության իրավական հարցերը և այլն:

Ուրախալի է, որ այսօր արդեն շատ երկրներ ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, բայց, ցավոք, միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը դեռ վերջնական լուծում չի ստացել: Այդ պատճառով, այս կամ այն երկրի կողմից ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը լավագույն դեպքում մեզ՝ հայերիս, հուզական և բարոյական բավարարության զգացում է պատճառում, մասնավոր, նման որոշումները



խաթարում են թուրքիայի սասանված հեղինակությունը:

Հայոց ցեղասպանության փաստը միջազգային հանրության կողմից ճանաչելուն խոչընդոտում են տարբեր երկրների՝ հիմնականում գերտերությունների տնտեսական և աշխարհաքաղաքական շահերը, երբեմն՝ այդ շահերի բախումը: Այդպիսին է իրավիճակն այսօր, այդպիսին է եղել նաև մեկ դար առաջ, երբ այդ նույն շահերի պատճառով գերտերությունների աշխարհաքաղաքական անկշտում ձգտումների զոհասեղանին հայտնվեց մեր հնագույն ժողովուրդը:

Հարկ է նշել նաև, որ հաճախ, Հայոց ցեղասպանության ճանաչման կամ չճանաչման հարցը դարձել է թուրքիայի վրա քաղաքական ճնշում գործադրելու հզոր միջոց: Մենք այդ իրողություններից պետք է դասեր քաղենք: Ամենից առաջ **Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հուզական-բարոյական հարթությունից պետք է անցում կատարել դեպի իրավական հարթություն:** Ի՞նչ է դա նշանակում: Դա նշանա-

կում է, որ այսօր ստեղծված տարածաշրջանային և միջազգային բարդ իրավիճակում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և ընդհանրապես, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերը անհնար է լուծել առանց գիտականորեն հիմնավորված իրավական փաստարկների: Այսինքն, թե՛ Հայոց ցեղասպանության ճանաչումը, թե՛ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը պետք է ունենան անթերի միջազգային-իրավական ապահովում: Եվ այդ բարդ խնդիրը կոչված ենք իրագործելու մենք՝ հայ իրավաբաններս:

Չի կարելի ասել, թե հայ իրավաբանները ոչինչ չեն արել Հայոց ցեղասպանության ճանաչման և Հայկական հարցի լուծման իրավական ապահովման գործում: Այստեղ բավական է հիշատակել միջազգային իրավունքի ճանաչված մասնագետ, իրավաբանական գիտություններ դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Բարսեղովի**ն: Հիշենք այդ նվիրյալ իրավաբանի այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են **«Հայերի ցեղասպանությունը միջազգային իրավունքի համաձայն հանցագործություն է»**, **«Միջազգային իրավունքի թուրքական դոկտորինան՝ ցեղասպանության քաղաքականության գործիք»** և այլ հրապարակումներ: Այս աշխատություններում Յու. Բարսեղովը միջազգային իրավունքի տեսանկյունից քննարկում է 1876 թվականից մինչև 1923 թվականը Թուրքիայում հայերի նկատմամբ տեղի ունեցած ոճրագործությունները, հիմնավորում է, որ դրանք պիտի որակվեն որպես ցեղասպանություն և Թուրքիան պետք է իրավական պատասխանատվություն կրի կատարված ոճրագործության համար: Ընդ որում, ուշագրավ է, որ Յու. Բարսեղովը կտրականապես դեմ է այն համոզմունքին, որ ցեղասպանությունը տեղի է ունեցել 1915 թվականին: Այդ համոզմունքը բնորոշ է ինչպես հայերի, այնպես էլ այլ ժողովուրդների առօրեական գիտակցությանը: Յու. Բարսեղովը, խորտակելով այդ կարծրատիպը, իրավաբանորեն ապացուցում է, որ Հայոց ցեղասպանությունը սկիզբ է առել

1876 թվականին, Օսմանյան կայսրությունում, ապա ընդհատումներով շարունակվել է մինչև 1923 թվականը: Այսինքն, Թուրքիայում Հայոց ցեղասպանությունն իրականացրել են թե՛ թուրք սուլթանները, թե՛ երիթուրքերը, թե՛ քեմալականները: Դա նշանակում է, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը այս կամ այն կոնկրետ իշխանության գործը չէ, մասնավորապես, միայն Օսմանյան կայսրությունը չէ, որ պատասխանատվություն է կրում Հայոց ցեղասպանության համար, այլև ժամանակակից Թուրքիան, որի հիմնադիր **Քեմալ Աթաթյուրքի** ձեռքերն էլ մինչև արմունկները ներկված են հայերի արյամբ:

Ավարտելով խոսքս՝ Յու. Բարսեղովի՝ հայերի ցեղասպանության իրավական հետազոտությունների մասին, հատկապես ցանկանում եմ հիշատակել այդ մեծ երախտավորի կողմից կազմված և խմբագրված **«Հայերի ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության վերաբերյալ փաստաթղթերի ժողովածուն»**: Այս ժողովածուն եզակի է ինչպես փաստագրական նյութերով, այնպես էլ զուտ իրավական ուղղվածությամբ: Եթե նմանօրինակ նախկին ժողովածուների նպատակը ցեղասպանության բուն փաստի ապացուցումն էր, ապա այս ժողովածուն կազմվել է իրավական կտրվածքով և վերաբերում է Թուրքիայի իրավական պատասխանատվությանը:

Հուսով եմ, Յուրի Բարսեղովի գործը շարունակողներ կունենան: Հայ իրավաբանները, խոսքս հատկապես վերաբերվում է երիտասարդներին, պետք է շարունակեն այս ուղղությամբ անհրաժեշտ հետազոտություններ և վերլուծություններ կատարել:

Այն, որ Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանությունը հիմնարար կերպով ապացուցված է, անվիճելի փաստ է: Թուրքերի այդ քստմնելի ոճրագործության բազմաթիվ ապացույցներ կան՝ ականատեսների վկայություններ, նամակներ, օրագրեր, պաշտոնեական փաստաթղթեր, ցեղասպանությանն անմիջականորեն մասնակցած թուրքերի և այդ իրադարձություններին ականատես

օտարերկրացիների հիշողություններ: Բայց այդ ամենից գատ մենք ունենք նաև թուրքական իշխանությունների ինքնախոստովանությունը, որն ամրագրված է թուրքական դատարանների կողմից 1919-1920 թվականներին կայացված դատավճիռներում: Այդ տարիներին թուրքական դատարանները ձեռնարկել են մի շարք դատավարություններ, որոնցում որպես ամբաստանյալներ հանդես են եկել թուրքական պետական և քաղաքական գործիչներ, զինվորականներ, պաշտոնատար անձինք: Նրանք դատապարտվել են հայերի զանգվածային սպանությունների և բռնի տեղահանությունների համար: Այդ դատավճիռները Հայոց ցեղասպանությունը դատապարտող պաշտոնեական, իրավական վավերագրեր են, որոնք դժվարությամբ կարող են վիճարկել անգամ ներկայիս թուրք ազգայնամուլները: Կարծում են, որ իրավական հետազոտությունների այս ուղղությունը խիստ հեռանկարային է և արդյունավետ:

Խոսելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման մասին, մենք հիմնական պատասխանատու ենք համարում Թուրքիային: Թուրքիան, իրավաբանական լեզվով ասած, ոճրագործության կատարողն է: Եվ դա այդպես է: Բայց մենք՝ իրավաբաններս, լավ գիտենք, որ ոճրագործները հաճախ ունենում են հանցակիցներ՝ կազմակերպիչներ, դրդիչներ, օժանդակողներ: Իսկ եղև էլ են արդյոք անհատ անձինք, միջազգային բացահայտ կամ գաղտնի կազմակերպություններ, ժողովուրդներ և պետություններ, ովքեր կազմակերպել, օժանդակել կամ դրդել են Հայոց ցեղասպանությունն իրականացնողներին: Եվ գլխավորը՝ ինչ նպատակով: Գրականության մեջ արդեն հայտնվել են որոշ տեղեկություններ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների, օժանդակողների, նույնիսկ համակատարողների մասին: Բայց այդ տեղեկություններում բարձրաձայնված միջազգային կազմակերպությունների և պետությունների մասին ես առայժմ լռում եմ, քանի որ դրանք սոսկ վարկածներ են, որոնք իրավական լուրջ հետա-

զոտությունների կարիք ունեն: Հայ իրավաբանների խնդիրներից մեկն էլ ես համարում եմ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների, դրդիչների և օժանդակողների բացահայտումը:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման իրավական հարցերին, ապա այստեղ էլ հայ իրավաբանները լուրջ անելիքներ ունեն: Այստեղ մի շարք իրավաբանական խնդիրներ են ծագում: Անվիճելի է, որ Հայոց ցեղասպանության հետևանքների վերացումը կապված է փոխհատուցման հետ: Ի՞նչ բնույթ պետք է ունենա այդ փոխհատուցումը, զուտ բարոյակա՞ն, թե՞ նաև գույքային և տարածքային: Ինչպիսի՞ն է փոխհատուցում ստացող սուբյեկտների շրջանակը: Այն պետք է ընդգրկի ցեղասպանության զոհերի ժառանգների՞ն, Հայ առաքելական Եկեղեցու՞ն, Հայաստանի Հանրապետության՞ը, թե՞ բոլորին միասին: **Իմ խորին համոզմամբ, ցեղասպանության զոհերի ժառանգները պետք է նյութական փոխհատուցում ստանան, Հայ Եկեղեցուն պետք է վերադարձվեն Թուրքիայի տարածքում հրաշքով կանգուն մնացած Եկեղեցիները և Եկեղեցապատկան հողերը, Հայաստանի Հանրապետությունը պետք է ստանա իր կորցրած տարածքները և այլն: Բայց այդ բոլոր պահանջները պետք է ունենան անթերի իրավական հիմնավորումներ:**

Մենք բոլորս տեղյակ ենք, որ միջազգային ապահովագրական ընկերությունները 2007 թվականից սկսած որոշել էին վճարել Թուրքիայում ցեղասպանության զոհ դարձած անձանց ժառանգներին համապատասխան ապահովագրական վճարներ: Սակայն վճարումները վերջերս դադարեցրեցին: Ինչու՞: Իհարկե, անժխտելի է Թուրքիայի ճնշումների դերը, բայց եթե մենք իրավաբանորեն հիմնավորված, անվիճելի փաստարկների տիրապետեինք, այդ գործընթացը տրամաբանական ավարտ կունենար:

Իհարկե, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը խիստ կարևոր է հայ ժողովրդի, նաև թուրք ժողովրդի, ինչու՞ չէ, նույնիսկ համայն մարդկության համար: Հայոց ցեղասպանության մի-

ջազգային ճանաչումը ոչ միայն հուզական-բարոյական բավարարվածության զգացում կառաջացներ, ոչ միայն հայ ժողովրդին թույլ կտար թոթափելու անլիարժեքության սոցիալ-հոգեբանական բարդույթը, այլև լիարժեք կլուծեր փոխհատուցման հետ կապված բոլոր հարցերը: Սակայն ահա մեկ դար է, ինչ հայ-թուրքական հարաբերությունները դոփում են տեղում, և չնայած, բազմաթիվ պետություններ պաշտոնապես ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, մենք ոչ մի շոշափելի արդյունքի չենք հասել: Համոզված եմ, որ նույն իրավիճակում կհայտնվենք նաև մեկ հարյուրամյակ հետո: Եվ նման իրավիճակի պատճառը միայն Թուրքիայի ժխտողական դիրքորոշումը և գերտերությունների աշխարհաքաղաքական հակասությունները չեն: Իմ խորին համոզմամբ, պատճառը նաև Հայոց ցեղասպանության ճանաչման և հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ մեր դիրքորոշումն է:

Իմ կարծիքով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը չի կարելի հայկական հարցի լուծման կախարդական բանալին համարել և հայ ժողովրդի նյութական, մարդկային և մտավոր ռեսուրսներն ամբողջովին ուղղել միայն այդ հարցի լուծմանը: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը հայկական հարցի լուծման և, ընդհանրա-

պես, հայ-թուրքական հարաբերությունների համապարփակ կարգավորման սուկ մեկ բաղադրիչն է, խիստ կարևոր, բայց ընդամենը մեկ բաղադրիչը: Իսկ **հայկական հարցի լուծումը և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, որն ունի զուտ իրավական բնույթ, պետք է լուծվի իրավական հարթությունում, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների հիման վրա:** Դա նշանակում է, որ համապատասխան միջազգային-իրավական փորձաքննությունների պետք է ենթարկվեն հայ ժողովրդին, նրա տարածքներին առնչվող բոլոր միջազգային պայմանագրերը՝ Բեռլինի Կոնգրեսից սկսած մինչև վերջին հայ-թուրքական չվավերացված պայմանագիրը: Հակառակ դեպքում մենք կունենանք այն, ինչ ունենք:

Ի՞նչ է կատարվում այսօր: Համարյա ամեն օր, Ադրբեջանից լսվում են անենաբարձր պաշտոնատար անձանց բարբառանքները, թե՛ Սյունիքը ադրբեջանական տարածք է, Երևանը ադրբեջանական տարածք է, դե, Արցախն անվիճելիորեն ադրբեջանական տարածք է: Իսկ մենք լռում ենք, լավագույն դեպքում Ադրբեջանից հնչող պահանջներն անհիմն ենք համարում: Համաձայն եմ, դրանք, իրոք, բարբառանք են, այնքան ակնհայտ կեղծիք է և սուտ, որ անհարմար է թվում նույնիսկ դրանց պատասխանելը: Լավագույն դեպքում խորհուրդ



ենք տալիս ադրբեջանցիներին ծանոթանալ հնագույն պատմիչների գործերին, որոնց «Ադրբեջան» անվանումն անգամ հայտնի չէ: Բայց արդյո՞ք առավել արդյունավետ չէր լինի ադրբեջանցիներին հիմնավորված հակընդդեմ պահանջներ կայացնել: Այսպես, Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն Նախիջևանն անջատվել է Հայաստանից և որպես ինքնավար նահանգ հանձնվել է Ադրբեջանի հովանավորությանը: Առայժմ չանդրադառնալով Մոսկվայի 1921թ. մարտի 18-ի պայմանագրի օրինականությանը, նշեն միայն, որ Ադրբեջանի Կենտգործկոմի 1923թ. հունիսի որոշմամբ ինքնագլուխ վերանայվեց նշված միջազգային պայմանագիրը, փոփոխվեց Նախիջևանի կարգավիճակը, և այդ երկրամասը դուրս բերվեց Ադրբեջանի հովանավորության տակից և ընդգրկվեց Ադրբեջանի կազմում: Այդ որոշումը միջազգայի իրավունքի այնպիսի կոպիտ խախտում էր, որ նույնիսկ Թուրքիայի կառավարությունը 1923թ. հուլիսին հանդես եկավ բողոքի նոտայով և Ադրբեջանի Կենտգործկոմի այդ որոշումը զնահատվեց որպես բռնագավթում: Իրավունք ունե՞նք մենք այսօր հայտատարարելու, որ Նախիջևանը Հայաստանի անբաժանելի մասն է, բայց բռնագավթած՝ Ադրբեջանի կողմից: Անկասկած, իրավունք ունենք, բայց չգիտես ինչու լռում ենք:

Այժմ վերադառնանք հայ ժողովրդին առնչվող միջազգային պայմանագրերին: Նշեն, որ այս հարցում էլ միջազգային իրավունքի հայ մասնագետները ուշագրավ ուսումնասիրություններ են կատարել և խիստ հետաքրքրական եզրակացությունների են հանգել: Այդ կապակցությամբ ցանկանում են անդրադառնալ մի քանի հարցերի: Միջազգային իրավունքի մեր մասնագետների ուսումնասիրություններից երևում է, որ 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը հայ ժողովրդի համար խիստ կարևոր միջազգային-իրավական փաստաթուղթ է: Թեև այդ պայմանագիրը չի վավերացվել մասնակից երկրների կողմից, բայց և չի դենոնսացվել Լոզանի 1923թ. հուլիսի 23-ի պայմանագրով: Սևրի պայ-

մանագիրը չվավերացված, այլ ոչ թե ուժը կորցրած պայմանագիր է: Սակայն հայ ժողովրդի և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից խիստ կարևոր է ոչ թե Սևրի պայմանագիրը, այլ այդ պայմանագրի հետ կապված ԱՄՆ նախագահ **Վուդրո Վիլսոնի** 1920թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճիռը, որով սահմանվում են Հայաստանի տարածքները: Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի համաձայն, եթե կողմերի միջև վեճ կա և նրանք համաձայնում են առկա վեճի լուծումը հանձնարարել երրորդ կողմին, ապա մեկընդմիջտ ընդունում են, որ իրավարարի ցանկացած որոշում կողմերը պարտավոր են կատարել: Ընդ որում, իրավարար վճիռը վերջնական է, բողոքարկման ենթակա չէ և չունի ժամանակային որևէ սահմանափակում: Հայաստանի, Թուրքիայի և ևս տասնվեց երկրների համար այդպիսի իրավարար վճիռ է ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի նշված վճիռը, որով Հայաստանին են անցնում Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգները՝ 103599 քառակուսի կիլոմետր տարածքով: Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի համաձայն Թուրքիան, Հայաստանը, ինչպես նաև մյուս Պայմանավորվող Բարձր Կողմերը համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Հայաստանի և Թուրքիայի սահմանների որոշումը ներկայացնել ԱՄՆ Նախագահի իրավարար վճռին:

Կարող է հարց ծագել, որ եթե Սևրի պայմանագիրը ուժի մեջ չի մտել, ապա ուժի մեջ չի մտել նաև նրա 89-րդ հոդվածը, հետևաբար, ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը նույնպես իրավական ուժ չունի: Սակայն հարցն այդքան պարզունակ չէ և չի կարող միարժեք բացասական լուծում ունենալ: Նշված հոդվածն ընդամենը Հայաստանի, Թուրքիայի և մյուս երկրների կամահայտության ձևակերպումն է, որի հիման վրա ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնը ձեռնամուխ է եղել և կայացրել է իրավարար համապատասխան վճիռ: Սևրի պայմանագրի հետագա վավերացումը կամ անվավեր թողնելը որևէ կապ չունի



կողմերի կամահայտության հետ: Պատահական չէ որ Լոզանի 1923թ. հուլիսի 24-ի պայմանագրով կարգավորված են Թուրքիայի սահմանները Յունաստանի, Բուլղարիայի հետ, Սիրիական տարածքների շփման գոտում, մինչդեռ հայ-թուրքական սահմանի կարգավորման մասին ոչ մի խոսք չկա: Մասնավորապես, Լոզանի պայմանագրով Կարսի նահանգը չի ընդգրկված ներկայիս Թուրքիայի տարածքում: Դա նշանակում է, որ ներկայիս հայ-թուրքական սահմանը չի համապատասխանում Լոզանի պայմանագրին:

Ի դեպ, այն, որ ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը իրավաբանական ուժ ունեցող անբեկանելի վճիռ է, հայտարարել են նաև ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգի կոնգրեսի անդամ **Էնտոնի Պորտանտինոն** և ԱՄՆ կոնգրեսական **Ջուդի Չուն**:

Այստեղ կարելի է առարկել, թե հայ-թուրքական սահմանի հարցը արդեն իսկ կարգավորված էր Մոսկվայի ռուս-թուրքական 1921թ. մարտի 21-ի պայմանագրով, որի համաձայն Թուրքիային հանձնվեցին Կարսն ու Արդահանը, Նախիջևանն անջատվեց Յայաստանից և ինքնավար նահանգի կարգավիճակով հանձնվեց Ադրբեջանի հովանավորությանը: Բայց այդ պայմանագիրը չի կարող միջազգային լիարժեք պայմանագիր համարվել, որովհետև պայմանագրի կողմերը պայմանագիրը կնքելու պահին միջազգային հանրության կողմից ճանաչված չէին և չէին կարող համարվել միջազգային իրավունքի սուբյեկտ: Բացի այդ, Յայաստանին թույլ չտվեցին մասնակցելու անգամ ռուս-թուրքական բանակցություններին, և նա այդ պայմանագիրը չի ստորագրել: Իսկ միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներից մեկն այն է, որ երրորդ կողմը, ով չի ստորագրել պայմանագիրը, որևէ պարտավորություն չի կարող կրել:

Այստեղ կարելի է կրկին առարկել, թե Յայաստանը մասնակցել է 1921թ. հոկտեմբերին Կարսում թուրքերի հետ տեղի ունեցած բանակցություններին և ստորագրել է Մոսկվայի պայմանագրի դրույթները կրկնող, ավելին Սուրմալուի

գավառը թուրքերին հանձնելու մասին 1921թ. հոկտեմբերի 21-ի պայմանագիրը: Սակայն այդ պայմանագիրն ի սկզբանե անվավեր էր, քանի որ Յայաստանը Ռուսաստանի մասն էր և միջազգային իրավունքի սուբյեկտ չէր:

Միջազգային-իրավական այս լրջագույն խնդիրը ես թռուցիկ շոշափեցի, քանզի նպատակս ոչ թե նշված պայմանագրերի մանրակրկիտ իրավական հետազոտությունն է, այլ նման հետազոտության անհրաժեշտության վրա համաժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրելը: Վստահ եմ, որ հայ իրավաբանները անհրաժեշտ ներուժ ունեն՝ հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված բոլոր միջազգային իրավական պայմանագրերը մանրակրկիտ հետազոտելու և անհրաժեշտ եզրակացությունների հանգեցնելու համար:

Այսօր հայ-թուրքական սահմանի հարցը դեռևս կարգավորված չէ: Մենք տարածքային վեճեր ունենք ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի հետ: Կարծում եմ, որ այդ վեճերի իրավաբանական լուծման համար անհրաժեշտ է պատրաստել հայցային մի մեծ փաթեթ, համապատասխան իրավաբանական հիմնավորումներով և այն ներկայացնել Յայաստանի իշխանություններին՝ հետագայում այն ՄԱԿ-ի իրավական վճիռներ կայացնող հիմանական մարմնին՝ Արդարադատության միջազգային դատարանին հանձնելու հարցը լուծելու համար:

Համոզված եմ, որ եթե Ադրբեջանն ունենար մեր՝ իրավաբանորեն հիմնավորված հավակնությունների հարյուրերորդ մասը, արդեն դիմած կլիներ ոչ միայն Արդարադատության միջազգային դատարան, այլև հնարավոր և անհնար բոլոր ատյաններ:

Յուսով եմ, որ այս համաժողովը նոր ազդակ կլինի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը իրավական հարթություն տեղափոխելու անհրաժեշտ հետազոտություններ և ուսումնասիրություններ կատարելու համար:

Չմոռանանք, որ ժամանակը մեր դեմ է աշխատում:

*«Հ գլխավոր դատախազ, իրավաբանական գիտությունների դոկտոր ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ելույթը Իրավաբանների համահայկական երկրորդ համաժողովում լայն արձագանք է գտել հայ և օտարազգի իրավաբանների, պետական-հասարակական գործիչների, ճանաչված վերլուծաբանների շրջանում:  
Ձեզ ենք ներկայացնում առանձին արձագանքների անդրադարձը զանգվածային լրատվության միջոցների հրատարակումներում:*

**Լուրջ քաղաքական տեղաշարժ.  
Հայաստանն իր հողերն է պահանջում Թուրքիայից**

**Հարութ ՍԱՍՈՒՆՅԱՆ**  
«Կալիֆորնիա Կուրիեր» թերթի  
հրատարակիչ և խմբագիր (ԱՄՆ)



1991 թվականի անկախությունից ի վեր Հայաստանի ղեկավարները դժկամ էին Հայոց ցեղասպանության ճանաչումից անդին այլ պահանջներ ներկայացնել Թուրքիային: Հայ պաշտոնատարները միայն վերջին տարիներին են սկսել խոսել «ցեղասպանության հետևանքների վերացման մասին»՝ առանց նշելու «հետևանքները» և դրանց «վերացման» միջոցները: Սակայն այս ամսվա սկզբին լուրջ տեղաշարժ հայտարարվեց Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ Թուրքիայի առնչությամբ, երբ գլխավոր դատախազ **Աղվան Յովսեփյանն** իրավաբանների համահայկական միջազգային համաժողովում կոչ արեց վերադարձնել հայկական պատմական տարածքները: Սա առաջին անգամն է, որ պետական բարձրաստիճան մի պաշտոնյա հանդես է գալիս հրապարակային նման պահանջով Թուրքիայից: Աղվան Յովսեփյանն իր ծավալուն և համապարփակ ելույթում հայտարարեց, որ տարբեր պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը «**հուզական-բարոյական**» հարց է: Գլխավոր դատախազը կոչ անելով անցում կատարել դեպի «**իրավական դաշտ**», նշեց, որ Հայոց ցեղասպանության հետևանքները վերացնելու համար «**ցեղասպանության զոհերի ժառանգները պետք է նյութական փոխ-**

**հատուցում ստանան, Հայ եկեղեցուն պետք է վերադարձվեն Թուրքիայի տարածքում հրաշքով կանգուն մնացած եկեղեցիներն ու եկեղեցապատկան հողերը, Հայաստանի Հանրապետությունը պետք է ստանա իր կորցրած տարածքները**»: Գլխավոր դատախազ Յովսեփյանը պնդեց, որ եթե հայերը այս ավելի համարձակ մոտեցումը չորդեգրեն՝ ոչ մի շոշափելի արդյունքի չեն հասնի հաջորդ հարյուրամյակում, ինչպես որ չեն հասել վերջին հարյուր տարվա ընթացքում: Նա առաջարկեց վերանայել Հայաստան-Թուրքիա հարաբերությունները կարգավորող բոլոր միջազգային պայմանագրերը՝ սկսած Բեռլինի 1878 թվականի Կոնգրեսից մինչև 2009 թվականի ստորագրված, բայց չվավերացված արձանագրությունները: Նա նաև Նախիջևանի շրջանը հայտարարեց «Հայաստանի անբաժանելի մաս, բայց բռնազավթված Ադրբեջանի կողմից»: Յովսեփյանը կոչ արեց աշխարհի չորս կողմից հավաքված հայ իրավաբաններին պատրաստել իրավական փաթեթ Ադրբեջանից և Թուրքիայից տարածքային պահանջների մասին և այն ներկայացնել Հայաստանի կառավարությանը՝ հետագայում Արդարադատության միջազգային դատարան դիմելու համար:

Սովորաբար, որևէ երկրի գլխավոր դատախազի հայտարարությունները մեծ կշիռ չեն ունենում միջազգային հարաբերություններում, եթե չլինեն այն հանգամանքը, որ մի շարք բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, այդ թվում՝ նախագահ **Սերժ Սարգսյանը**, Սահմանադրական դատարանի նախագահ **Գագիկ Հարությունյանը**, Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը**, Հայաստանի արդարադատության նախարար **Հրայր Թովմասյանը**, ինչպես նաև Արցախի արդարադատության նախարար **Արարատ Դանիելյանը**, նույնպես ելույթներ ունեցան արդարության վերականգնման մասին իրավաբանների համաժողովում: Ակնհայտ էր, որ Գլխավոր դատախազը նշանակվել էր որպես Հայաստանի կառավարության խոսնակ՝ Ցեղասպանության հարյուրամյակի նախօրեին թուրքիայի հանդեպ նրա ավելի կոշտ դիրքորոշումն արտահայտելու համար: Նախագահ Սարգսյանն ավելի շրջահայաց լեզու օգտագործելով, քան թե Գլխավոր դատախազը, իրավաբանների համաժողովում ասաց.



«**Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, դատապարտումը և դրա հետևանքների վերացումը մշտապես արդիական են լինելու: Քանի դեռ գոյություն ունի Հայոց պետությունը՝ անհաջողության են մատնվելու այս պատմական իրողությունը ուրանալու և մոռացության տալու բոլոր փորձերը: Մարդկության դեմ գործված այս մեծագույն հանցագործությունը պետք է մեկընդմիջտ ճանաչվի և դատապարտվի՝ առաջին հերթին հենց Թուրքիայի կողմից»:** Ըստ կառավարության նոր քաղաքականության ուղղվածության՝ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը հայտարարեց, որ ստեղծվելու է հատուկ հանձնախումբ՝ Հայոց ցեղասպանության պահանջներին հետամուտ լինելու համար անհրաժեշտ իրավական թղթածրար պատրաստելու

նպատակով: Վերջում, համաժողովի մասնակիցները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, պնդելով, որ «**հայ իրավաբանների առաջնահերթ խնդիրը ոչ թե Ցեղասպանության ակնհայտ իրողության փաստումն է, այլ՝ հետևանքների հաղթահարման առումով իրավական հիմնավոր ու ամբողջական թղթածրարի պատրաստումը**»:

Սա ողջունելի իրադարձություն է Հայաստանի կառավարության և Սփյուռքի միջև համախոհություն ստեղծելու առումով՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ միասնական նպատակներ իրագործելու համար: Սակայն, զուտ հուզական ոգեշունչ հայտարարության շրջանակներից դուրս գալու համար Հայաստանի ղեկավարները պետք է ձեռնարկեն հետևյալ երկու անհապաղ քայլերը. 1. Հետ կանչել Հայաստանի կառավարության ստորագրությունը անարդյունավետ հայ-թուրքական արձանագրություններից: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրեին անհմաստ է առաջ շարժվել Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու ապարդյուն ջանքերով՝ միաժամանակ դատական հայցադիմում պատրաստելով փոխհատուցման համար: 2. Ստեղծել միջազգային իրավունքի մասնագետների մի խումբ՝ Թուրքիայի դեմ Միջազգային դատարանում և/կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դատական գործի կազմակերպումը սկսելու համար: Թեպետ թերահավատները կարող են լրջորեն չընդունել Հայաստանի իշխանությունների վերջին քաղաքական հայտարարությունները՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը նման կասկածներ չունի: Նախորդ շաբաթ ԱՆկարան դատապարտեց Հայաստանի տարածքային պահանջները՝ զայրացած հայտարարելով, որ «ոչ ոք չի համարձակվի տարածքներ պահանջել Թուրքիայից»:

Թարգմանությունը՝ անգլերենից

**«ԵՍ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ ԵՄ ԱՆՈՒՄ ԲՈԼՈՐԻՆ»**

*Բաքվում ասել է Թուրքիայի արտգործնախարարը՝  
արձագանքելով ՀՀ գլխավոր դատախազին*

2013թ հունիսի 16-ին երկօրյա պաշտոնական այցով Ադրբեջան մեկնած Թուրքիայի արտգործնախարար **Ահմեդ Դավութօղլուն** Բաքվի օդանավակայանում դիմավորել է միայն թուրք դեսպան **Ալփեր Ջոշքունը**, ուղեկցելով նրան հյուրանոց: Այսինքն՝ Ադրբեջանի արտգործնախարարության որևէ աշխատակից այդ պահին ներկա չի եղել Յեյդար Ալիևի անվան օդանավակայանում, որ դիմավորի «ավագ եղբոր» արտգործնախարարին, էլ չենք խոսում **Էլմար Մամեդյարովի** մասին:



Թեև այս անտարբերությունը չի խանգարել Թուրքիայի արտգործնախարարին, որ Բաքվում 20 տարվա «անգործության» համար դատապարտի ԵԱՀԿ Մինսկի խմբի կամ միջազգային հանրության առջև վերստին բարձրացնի ադրբեջանական օկուպացված տարածքների ծամծված հարցը, որն իբր Ադրբեջանի մակերեսի 20 տոկոսն է կազմում, այսինքն՝ անվերապահորեն սատարի հայ սպանելու համար մարդասպան ստահակին ազգային հերոս հռչակած ադրբեջանցի հրոսակին:

Նախորդ օրը CNN-Turk-ն էլ անդրադարձել է Թուրքիայի արտգործնախարար

ար Ադրբեջան այցելությանը: Այն տարբերությամբ, որ թուրքական հեռուստատեսությունը, մի կողմ թողած Դավութօղլուի հանդիպումները, կայքէջում ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազի հայտարարություններին նրա արձագանքը:

Ըստ CNN-Turk-ի՝ Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն ՀՀ գլխավոր դատախազ **Ա. Հովսեփյանի** հայտարարությունների առնչությամբ Բաքվում ասել է. «Ես չափն իմանալու կոչ եմ անում բոլոր նրանց, ովքեր փորձում են թեկուզ մեկ խճաքար պոկել Թուրքիայի տարածքից: Առաջարկելը դեռ մի կողմ, ոչ ոք այդ բանը չի կարող նույնիսկ մտքով անցկացնել»:

Այնուհետև Դավութօղլուն զառանցանք է համարել հողային պահանջները և ընդգծել է, որ բոլորը չափ ու սահման պետք է իմանան, որպեսզի հնարավոր լինի խաղաղություն հաստատել Հարավային Կովկասում: Ապա նա ավելացրել է. «Մեզանից հող պահանջելը չափը չիմանալ է: Ես բանականության կոչ եմ անում բոլորին: Մեզ համար սկզբունք է և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»:

**Պաշտոնաթող թուրք դեսպանի արձագանքը**

*Նա ասել է այն, ինչ չէր ասում Թուրքիայի  
արտգործնախարարության խոսնակը*

Թուրքիայի արտգործնախարարության խոսնակի արձագանքից առաջ՝ հուլիսի 9-ին Նյու-Յորքի «Թուրքական» կայքէջում ՀՀ գլխավոր դատախազի հայտարարությանը անդրադարձել էր նախկին դեսպան **Օմեր Էնգին Լյութեմը**: Նա նշել է, որ իրավաբանների համահայկական 2-րդ համաժողովի բացման խոսքում ՀՀ նախագահը գոհունակությամբ է

արտահայտվել նրանց մասին, ովքեր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի վրա են գրավում այլ երկրների ուշադրությունը:

Ապա Լյութեմն ավելացրել է. «Թեև Հայոց ցեղասպանության հայկական թեզի ճանաչումը այլ երկրներում և միջազգային կազմակերպություններում եղել է Հայաստանի բոլոր նախագահների առաջադր

րանքը, սակայն վերջիններս ցեղասպանությունը ճանաչելու ու դատապարտելու բացահայտ պահանջ չեն ներկայացրել թուրքիային: Հայ-թուրքական արձանագրությունների ձախողումից հետո նախագահ Սարգսյանը սկսեց խստացնել թուրքիային հասցեագրված քննադատությունների ոճը, իսկ վերջին 2 տարիներին ձեռնամուխ եղավ ցեղասպանության ճանաչման և դատապարտման պահանջ ներկայացնելուն թուրքիային: Սակայն նա դրանով չի բավարարվում, այլ համառորեն «ցեղասպանության հետևանքների վերացման» հարցն է բարձրացնում: Դա ենթադրում է փոխհատուցում վճարել տեղահանության ժառանգներին, վերադարձնել առգրավված հայկական կալվածքները՝ եկեղեցիները ներառյալ, ինչպես նաև թուրքիայից տարածք գիջել Հայաստանին: Դրանով հանդերձ նախագահ Սարգսյանն ու այլ գործիչներ հողային պահանջի մասին բացահայտ չէին արտահայտվում:

Այդ «բացը», եթե տեղին է ասել, լրացրել է ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը: Նա ասել է, որ թուրքիա-Հայաստան սահմանը իրավաբանորեն հաստատված չէ, կրկնել է սփյուռքի տեսակետները, թե Լոզանի պայմանագիրը չի մերժել Սևրը, ուժի մեջ է նախագահ Վիլսոնի իրավարար որոշումը, Լոզանը թուրքիա-Հայաստան սահմանի մասին որոշում չի ընդունել, ինչ վերաբերվում է Մոսկվայի և Կարսի պայմանագրերին, որոնցով գծվել է սահմանը, ապա կարելի է առարկել դրանց:

Գլխավոր դատախազը հիշեցրել է, որ Ադրբեջանը, բացի Ղարաբաղից, ադրբեջանական տարածք է համարում նաև Երևանը, ուստի դրան հակադրվելու համար պետք է առաջ քաշել Նախիջևանի հայկական պատկանելության խնդիրը:

Այսպիսով, գլխավոր դատախազը դարձել է թուրքիային բացահայտ հողային պահանջ ներկայացնող առաջին պաշտոնական գործիչը Հայաստանում: Թեև Հովսեփյանի խոսքերը հնարավոր է վերագրել իրավաբանի անձնական կարծիքին, սակայն դժվար է ենթադրել, որ նա այսպիսի կարևոր հարցում, առանց Նախագահ Սարգսյանի հավանության, մնան հայտարարություն անի:

Ինչ վերաբերվում է այլ երկրներում հայկական պահանջների պաշտպանության հավանականությանը, ապա հողային պահանջները, որոնք հակասում են ՄԱԿ-ի սկզբունքներին, նույնիսկ պատերազմի պատճառ են համարվում, որպես կանոն հավանության չեն արժանանում: Հզոր թուրքիայի իմիջը մեզ թույլ չի տալիս, որ կարևորենք պահանջները: Այլապես դրանք կարող են դրական արձագանք գտնել: Չի բացառվում, որ Եվրոմիության հետ Ասոցացման պայմանագիր ստորագրող Հայաստանը 2014-ին միության անդամ երկրներում և կառույցներում ավելի ուժգին հնչեցնի հայկական այդ պահանջները: Համենայն դեպս, արձանագրությունների ձախողմամբ արդեն լարված թուրքիա-Հայաստան հարաբերությունները հողային պահանջներով ներքաշվում են արկածախնդրության մեջ»:

Պաշտոնաթող դեսպան Լյուբեմը «հզոր թուրքիայի» իմիջի մասին արտահայտվելիս ականա պատասխանում է, թե ինչու է խուսափում թուրքական կողմն ՀՀ գլխավոր դատախազի պահանջներին պաշտոնապես արձագանքելուց: Գալով թուրքիայի արտգործնախարարի խոսնակի և Լյուբեմի արձագանքներին, ապա դրանք առանձին խնդիր են, և մասնավոր մոտեցում են պահանջում:

## Թուրքիան արձագանքեց Աղվան Հովսեփյանի հայտարարությանը



Իրավաբանների համահայկական երկրորդ համաժողովի Երևանում հունիսի վերջին կազմակերպված շրջանակներում դատախազ Աղվան Հովսեփյանը հայտարարել էր, որ Հայաստանի Հանրապետությունը պահանջատեր է թուրքիայից, որ հայ-թուրքական սահմանը մինչև այսօր իրավական հաստատում չունի, և որ թուրքիան պետք է նաև տարածքային փոխհատուցում անի Հայաստանին, որը, փոստորեն, ըստ դատախազ Հովսեփյանի հիմնավորման, Ցեղասպանության տուժող կողմն է:

Չատեր է թուրքիայից, որ հայ-թուրքական սահմանը մինչև այսօր իրավական հաստատում չունի, և որ թուրքիան պետք է նաև տարածքային փոխհատուցում անի Հայաստանին, որը, փոստորեն, ըստ դատախազ Հովսեփյանի հիմնավորման, Ցեղասպանության տուժող կողմն է:

Անկարայի պատասխանը ուշացումով, այդուհանդերձ եղավ: Մասնավորաբար, դատախազ Յովսեփյանի հայտարարությունից միայն 8 օր հետո Թուրքիայի ԱԳՆ-ն որոշեց պատասխանել, պատասխանի անգլերեն տարբերակը թուրքական ԱԳ նախարարության պաշտոնական կայքում տեղադրվեց մեկ օր էլ ուշ: Բացի սրանից՝ Անկարայի պատասխանը հնչեց Թուրքիայի ԱԳ նախարարության կազմակերպած՝ լրագրողների հետ հարցուպատասխանի ժամանակ, և հնչեց ոչ թե որպես բանախոսի ելույթի առանձին պարբերություն, այլ «ի պատասխան լրագրողի հարցի»: Ընդ որում, պատասխանողը ոչ թե Թուրքիայի ԱԳ նախարարն էր, ոչ էլ անգամ փոխնախարարը, այլ նախարարության մամուլի խոսնակը, ընդամենը: Այդպիսով Թուրքիան անարձագանք չի թողնում Երևանից հնչած աննախադեպ հայտարարությունը, բայց և արձագանքում է իմիջիայլոց, առանց հատուկ կարևորություն տալու: Աղվան Յովսեփյանի հայտարարությանը Թուրքիայի ԱԳՆ մամուլի խոսնակը արձագանքել էր մասնավորաբար ասելով.

«Որևէ պետություն չի կարող համարձակություն ունենալ պահանջելու Թուրքիայից տարածքներ»:

Բայց Թուրքիայից հնչած արձագանքի եղանակն ամենևին էլ կարևոր չէ, ուշագրավն այն է, որ Անկարան Երևանից հնչած մեսիջը հասկացել է այնպես, ինչպես որ պետք է հասկանար: ԱԳՆ մամուլի թուրք խոսնակը ինքն է շեշտել, որ «Յայսատանի նախագահի ողջույնի ուղերձով մեկնարկած իրավաբանների համահայկական համաժողովում...» է ելույթ ունեցել գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանը, հետևաբար Թուրքիան հասկացել է, որ այն, ինչ ասել է ՅՅ գլխավոր դատախազը, ոչ միայն նրա մասնավոր ու մասնագիտական դիրքորոշումն է, այլև Յայսատանի պետական քաղաքականությունը:

Թուրքիան հասկացել է, որ Յայսատանի Յանրապետությունն իրենից տարածք է պահանջում և ոչ միայն տարածք: Իսկ թե ո՞վ ու ինչպե՞ս է Թուրքիայից խոսում այս մեսիջի ընկալումից, դա ամենևին էլ կարևոր չէ:

## Դավութօղլուն սպառնում է պահանջներ ներկայացնողներին

Անկարան չի պատրաստավում Թուրքիայի տարածքից անգամ մեկ քար տալ ինչոր մեկին, ու ովքեր Թուրքիային տարածքային պահանջներ են ներկայացնում, արդյունքում՝ նրանք են տուժում նման դիրքորոշումից, ասել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար **Ահմեդ Դավութօղլուն**՝ մեկնաբանելով ՅՅ գլխավոր դատախազ **Աղվան Յովսեփյանի** խոսքերը, որ Յայոց ցեղասպանության զոհերի ժառանգները պետք է դրամական փոխհատուցում ստանան, Յայ Եկեղեցուն պետք է վերադարձվի հրաշքով պահպանված եկե-

ղեցիներին ու եկեղեցուն պատկանած հողերը, իսկ Յայսատանը պետք է հետ ստանա կորցրած հողերը: Յայտնում է **«Ռեզոնանս»** լրատվական գործակալությունը: «Նույնիսկ դրա վերաբերյալ միտքն արևուտդ է: Եթե մենք խաղաղ Կովկաս ենք ուզում, ապա ամեն երկիր պետք է իմանա իր սահմանները: Յակառակ դեպքում կտուժեն նրանք, որոնք պահանջներ կուներեն նրանք, որոնք պահանջներ կուներեն», - ասել է Դավութօղլուն հուլիսի 17-ին Բաքվում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:

Արձագանքները ներկայացվել են պարբերական հրատարակությունների, լրատվական գործակալությունների և ինտերնետային ռեսուրսների հիման վրա:

## ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅՈՒՄ

*ՀՀ դատախազության 2013թ. մայիսի 15-ին կայացած նիստում, որը վարում էր ՀՀ գլխավոր դատախազ ԱԳՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, նորանշանակ դատախազների երդման արարողությունից հետո, քննարկեցին օրակարգում ընդգրված հարցերը:*

2012 թվականի աշնանային զորակոչի արդյունքների շուրջ զեկուցումներով կոլեգիայի նիստում հանդես եկան ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Գևորգ Կոստանյանը** և ՀՀ գլխավոր դատախազության ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչության պետ **Դավիթ Սարգսյանը**:

Քննարկվող հարցի շուրջ արտահայտվեցին ՀՀ գլխավոր դատախազ **Ա. Հովսեփյանը**, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ **Ա. Թամազյանը**, **Ա. Դանիելյանը**, Երևան քաղաքի դատախազ **Յ. Բաղալյանը**, Արարատի մարզի դատախազ **Ս. Մնացականյանը**, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն **Գ. Սարգսյանը**, ՀՀ զինվորական կոմիսարի ժամանակավոր պաշտոնակատար **Յ. Մուրադյանը**, ՀՀ զինվորական կոմիսարիատի զորակոչային բաժնի պետ **Ա. Գալստյանը**:

Կոլեգիայի նիստի օրակարգային մյուս հարցով՝ «2012թ. ընթացքում արձանագրված՝ կանխամտածված և կեղծ սնանկության դեպքերի գրանցման, հաշվառման, բացահայտման և քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ իրականացված

*նացված դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը»*, զեկուցեց ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ **Գրիգոր Նավասարդյանը**:

Հարցի քննարկմանը մասնակցեցին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ **Ա. Թամազյանը**, **Ա. Դանիելյանը**, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետեր **Ա. Գոյունյանը**, **Ա. Նիկողոսյանը**, **Կ. Փիլոյանը**, Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ **Յ. Սարգսյանը**, Արմավիրի մարզի դատախազ **Ս. Սինանյանը**, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետ **Էդ. Սարիկյանը**:

Քննարկումների արդյունքներն ամփոփեց և կոնկրետ հանձնարարականներ տվեց ՀՀ գլխավոր դատախազ **Ա. Հովսեփյանը**:

Կոլեգիան քննարկված հարցերով ընդունեց համապատասխան որոշումներ, որոնք ուղղարկվել են ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ դրանց կատարումն ապահովելու համար:

\*\*\*

*2013 թվականի հուլիսի 17-ին տեղի ունեցավ ՀՀ դատախազության կոլեգիայի հերթական նիստը, որը վարում էր ՀՀ գլխավոր դատախազ ԱԳՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ: Նորանշանակ դատախազների երդման արարողությունից հետո կոլեգիան ձեռնամուխ եղավ օրակարգում ընդգրված հարցերի քննարկմանը:*

«2012թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2013թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում ձեռքակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր ընդունելիս բուժզննության ընթացքում հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ

ստացած իրազեկումներով ՀՀ դատախազության կոլեգիայի 2012թ. օգոստոսի 10-ի որոշման պահանջների կատարման վիճակի մասին» հարցի ուսումնասիրման արդյունքները ներկայացրեց ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հար-

կադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետ Վարդան Ավետիսյանը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Ա. Թամազյանը, Ա. Դանիելյանը, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետեր Ա. Գոյունյանը, Ա. Հարությունյանը, Դ. Սարգսյանը, Կ. Փիլոյանը, ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ գլխավորող դատախազներ Վ. Մարգարյանը, Ս. Սինանյանը, Յ. Հարությունյանը, Տ. Սարգսյանը, Յ. Մարտիրոսյանը, Կ. Շահբազյանը,



ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետի տեղակալ Յ. Պալյանը, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի ընօրեն Գ. Սարգսյանը, ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Ա. Զախարյանը, ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական Կ. Առուստամյանը, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետի տեղակալ Ռ. Հովհաննիսյանը:

*Օրակարգի մյուս՝ «2012 թվականի ընթացքում տրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննության*

*նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակի մասին»* հարցի շուրջ զեկուցումով հանդես եկավ ՀՀ գլխավոր դատախազության ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչության պետ Դավիթ Սարգսյանը:

Ներկայացված զեկուցման շուրջ արտահայտվեցին ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Ա. Թամազյանը, Ա. Դանիելյանը, ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետ Կ. Փիլոյանը, Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Ս. Խաչատրյանը, ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության պետի տեղակալ Ռ. Արամյանը, ՀՀ տրանսպորտի և

կապի նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանը, ՀՀ ԱՆ փոճագիտական կենտրոնի տնօրեն Ժ. Ծատուրյանը, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Զավադյանը:

Քննարկված հարցերով ՀՀ դատախազության կոլեգիան ընդունեց համապատասխան որոշումներ, որոնք ուղարկվել են դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կենսագործման համար:

ՀՀ դատախազության կոլեգիայի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը:

\*\*\*

*«Հ դատախազության կոլեգիայի 2013թ. օգոստոսի 7-ին կայացած ընդլայնված նիստում, որը վարում էր ՀՀ գլխավոր դատախազ ԱԴՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, ամփոփվել են 2013 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատանքի արդյունքները:*

Ըստ աշխատանքի ուղղությունների կոլեգիայում զեկուցումներով հանդես են եկել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Արամ Թամազյանը, Մնացական

Սարգսյանը, Արմեն Դանիելյանը, Գևորգ Կոստանյանը, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Հարություն Հարությունյանը:



Կոլեգիայի նիստում մասնավորապես քննարկվել են նախորդ 6 ամիսների ընթացքում պետական շահերի պաշտպանության ոլորտում, մարդու դեմ ուղղված հանցագործությունների, կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակի, դրանց վերլուծությունների և ուսումնասիրության աղյուսքները, այդ ուղղությամբ կատարված աշխատանքները:

Հանցավորության վիճակը ըստ ոլորտների ներկայացրած ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները՝ իրենց զեկուցումներում վերլուծել են հանցավորության վիճակի շարժընթացը, ինչպես նաև իրավապահ մարմինների ձեռնարկած կանխարգելիչ քայլերը:

ՀՀ գլխավոր դատախազը տվել է կոնկրետ հանձնարարականներ առանձին հանցատեսակների բացահայտման աշխատանքները բարելավելու համար դատախազական հսկողությունն ուժեղացնելու

ուղղությամբ: Մասնավորապես գոհացուցիչ չի գնահատվել բնակարանային գողությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը, առանձին տարածքներում անչափահասների կողմից հանցագործությունների կատարման մեջ մասնակցության դեպքերի աճը և հանձնարարվել է դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին կատարել համապատասխան վերլուծություններ՝ խնդիրները վեր հանելու և միջոցառումների ծրագիր մշակելու համար:

**«Անփույթ, աշխատանքի նկատմամբ անտարբեր վերաբերմունք, առավել ևս աչքակապության, կեղծիքների դրսևորումները չեն հանդուրժելու»,**- հայտարարել է ՀՀ գլխավոր դատախազը՝ տալով կոնկրետ ցուցումներ աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների զեկուցումներին՝ ըստ հսկողության ոլորտների, կարող եք ծանոթանալ ՀՀ դատախազության ինտերնետային էջի «Հոդվածներ, ելույթներ» բաժնում՝ [www.genproc.am](http://www.genproc.am)

## **ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ**

**«Հ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն ընդունել է ՀՀ-ում Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Կրինա Ռոդիքա Պրունարիուին, ով ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում:**



Ա.Հովսեփյանը բարձր է գնահատել դեսպանատան հետ ձևավորված համագործակցությունը և շնորհակալություն հայտնել դեսպանին՝ իր պաշտոնավարման ընթացքում երկու երկրների դատախազությունների միջև փոխգործակցությունը զարգացնելու, համագործակցության հուշագրի ստորագրման գործում ունեցած մեծ ներդրման համար:

ՀՀ գլխավոր դատախազը դեսպանին պարզապես տրեմել է դատախազության 95-ամյակի հուշամեդալով:

Իր հերթին տիկին դեսպանը շնորհակալություն է հայտնել համատեղ աշխատանքի համար՝ արձանագրելով, որ կշարունակի մնալ Հայաստանի բարեկամը:

**«Չ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2013թ. հուլիսի 30-ին  
ընդունել է «Հ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆֆերնին»  
Հանդիպման ընթացքում քննարկվել են  
փոխգործակցությանը վերաբերող մի շարք հարցեր:**



Կողմերը բարձր են գնահատել հանցավորության դեմ պայքարում, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, դատաիրավական բարեփոխումների շրջանակներում ձևավորված համագործակցության փորձը, արդյունքները՝ նախանշելով առաջիկա առաջնահերթությունները:

Ա.Հովսեփյանը շնորհակալություն է հայտնել պրն Ջեֆֆերնին՝ Հայաստանի և ԱՄՆ-ի իրավապահ մարմինների միջև համագործակցության զարգացման գործում ունեցած ներդրման համար և նրան պարգևատրել դատախազության 95-ամյակի հուշամեդալով:

\*\*\*

**«Չ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2013թ. օգոստոսի 12-ին  
ընդունել է Հարվարդի համալսարանի Եվրասիայի անվտանգության  
ծրագրի ղեկավար Սերգեյ Կանապյովին»  
Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցությանը  
վերաբերող հարցեր:**


Ս.Կանապյովը բարձր է գնահատել համալսարանի կողմից իրականացված ծրագրում Հայաստանի դատախազության ներկայացուցչի մասնակցության պատրաստվածության որակը՝ կարևորելով համագործակցության ակտիվացումը:

Հյուրը մասնավորապես առաջարկել է ակտիվացնել Հարվարդի համալսարանի կրթական, վերապատրաստման տարբեր ծրագրերում ՀՀ դատախազության ներկայացուցիչների ներգրավվածությունը:

Նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել համագործակցությունը զարգացնելու ուղիների, այդ թվում՝ համատեղ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:



**«Չ գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանը 2013թ. օգոստոսի 28-ին ընդունել է ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Բրունո Սկապինին և Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպան Այիմդոս Բոզժիգիթովին:**



Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցությանը վերաբերող հարցեր՝ կարևորելով հատկապես հան-

ցավորության դեմ պայքարում, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում իրավապահ մարմինների համագործակցությունը՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ գլխավոր դատախազը շնորհակալություն է հայտնել դեսպաններին՝ Իտալիայի, Ղազախստանի և Հայաստանի դատախազությունների միջև համագործակցության զարգացման ուղղությամբ ձեռնարկած քայլերի համար և պարգևատրել նրանց «ՀՀ դատախազության 95 տարի» հոբելյանական մեդալով:

**«ՀՀ դատախազության 95 տարի» հոբելյանական մեդալով պարգևատրվել է 8 դիվանագետ՝ Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Ռումինիայի, Իտալիայի և Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպանները, ինչպես նաև ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավարը և իրավաբանական հարցերով խորհրդատուն:**

**ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՃ ԳԻՆԱՍՏԱՆ**

ՀՀ դատախազության պատվիրակությունը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Արմեն Դանիելյանի** գլխավորությամբ, աշխատանքային այցով 2013թ. օգոստոսի 14-ից 19-ը եղել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում՝ մասնակցելու «Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքար» թեմայով սեմինարին:

Սեմինարը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գերագույն ժողովրդական դատախազության միջև 2012-2013թթ. համագործակցության ծրագրի շր-

ջանակներում՝ նվիրված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ փորձի փոխանակման, պրակտիկայի, պայքարի արդյունքների և արդյունավետության վերաբերյալ քննարկումներին, որի ժամանակ ելույթ են ունեցել Ա.Դանիելյանը և պատվիրակության մյուս անդամները:

Հայաստանի Հանրապետության դատախազության պատվիրակությանն ընդունել է նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գլխավոր դատախազ պարոն **Ցաո Չյանմինը**, որի ժամանակ քննարկվել են համագործակցությանը վերաբերող հարցեր:



**ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ**  
**ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ**  
**ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**« ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՀՐԱՄԱՆՈՎ.**

● Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական **Գևորգ ԵՐԵՄՅԱՆԸ** նշանակվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ՝ ազատվելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Ձեյթուն վարչական շրջանների դատախազի պաշտոնից:

● Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական **Ջոն ՖԱՐԽՈՅԱՆԸ** նշանակվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Ձեյթուն վարչական շրջանների դատախազ՝ ազատվելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազի պաշտոնից:




ԴՅ գլխավոր դատախազությունը, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և Հայ պետական ծառայողների միության աջակցությամբ, լույս է ընծայել **«ԴՅ դատախազության համակարգի պետական ծառայողների և քաղաքացիների միջև հաղորդակցման հմտությունների կատարելագործումը և պետական ծառայողների էթիկայի կանոնների կիրառումը»** ուղեցույցը:

# ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՅԱԿԱՐԳԸ

## Մահվան 800-ամյակի կապակցությամբ

### Գառնիկ ՍԱՖԱՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Այս տարի լրանում է միջնադարի մեծագույն մտածող, օրենսգետ և օրենսդիր, եկեղեցական և հասարակական գործիչ, մանկավարժ և առակագիր Մխիթար Գոշի մահվան 800 ամյակը: Անցած երկար ու ձիգ ութ դարերի ընթացքում ոչ միայն չի խամրել Գոշի հարուստ գրական ժառանգությունը, այլև նոր իմաստ ու որակ է ձեռք բերել: Հաջողությամբ դիմագրավելով դարերի փորձաքննությանը, այսօր էլ նրա հայեցակարգը իրավունքի գերակայության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, մարդու իրավունքների հարգման, արդար ու ձշմարիտ դատաքննության, անվճար կրթության և այլ հարակից հարցերի վերաբերյալ, երբևիցե չի կորցրել իր տեսական և գործնական նշանակությունը:

Ինչպես իրավագիտորեն նշում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի առաջին հետազոտողը և իրատարակողը՝ վարդապետ Վահան Բաստամյանը՝ իր աշխատության առաջաբանում. «12-րդ դարի վերջերում երևում է մի նշանավոր և գիտնական վարդապետ, որ վառված աստվածապաշտության, ազգասիրության և մարդասիրության վսեմ զգացմունքներով՝ ձեռնամուխ է լինում մի մեծ և հավիտենական հիշատակության արժանի գործին՝ նա հորինում է

եկեղեցական կանոնների և աշխարհական օրենքների ու իրավաբանական ավանդույթների մի ընդարձակ ժողովածու: Այդ նշանավոր վարդապետը Մխիթար Գոշն է, և այդ երևելի ժողովածուն՝ նրա Դատաստանագիրքն է, այս մի հատ վարդը մեր իրավաբանական մատենագրության չոր ու ցամաք պարտեզի մեջ»<sup>1</sup>:

«... մի անգին գոհար է մեր մատենագրության մեջ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Մխիթարայ Գոշի, Դատաստանագիր Զայոց: Իրավաբանական հետազոտությամբ հանդերձ ծանոթագրությամբ Վահան Ժ. Վարդապետի Բաստամյանց: Ի Վաղարշապետ, 1880, էջ 80 (այսուհետ՝ Դատաստանագրքի հոդվածները տեքստում):

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 108:

Գոշի իրավական հայեցակարգի մարդասիրությունը հատկապես ակնառու է արտացոլվել հանցագործության և պատժի հարցերում: Ինչպես հայտնի է, միջնադարում մեղքը ընկալվել է երկու իմաստով՝ կրոնական և իրավական: Աստծո պատվիրաններից ամեն մի շեղում համարվել է մեղք՝ այս բառի կրոնատեղեցական իմաստով: Թեև մարդու կողմից սահմանված օրինականությունը համարվել է աստվածային օրինականությունից ածանցված, բայց դրանք չեն նույնացվել, ուստի «մեղքը» իրավական իմաստով համարվել է միայն առաջինի խախտումը: Այս իրավահայեցողության շնորհիվ հանցավոր և պատժելի արարքների շրջանակը հաճախ խիստ ընդարձակվում էր, որի հետևանքով պատժելի էին համարվում ավազակությունն ու սրբահայրությունը, մարդու սպանությունն ու անասնասպանությունը, գողությունն ու սրբագողությունը, հրծիգությունն ու կախարդությունը, կաշառակերությունն ու հոգևորականության չարաշահումները, բռնաբարությունն ու անասնամոլությունը, մարմնական վնասվածքներն ու սիմոնականությունը և այլն:

Հանցագործության ընդհանուր իրավաբանական հասկացությունը և ընդհանրապես իրավաբանական ինստիտուտների և կատեգորիաների հասկացությունների վերացարկված սահմանումները՝ պատմական նոր դարաշրջանի արգասիքն ու արդյունքն են: Դրանք գիտական վերացարկման ուժով ստեղծված սահմանումներն են, որոնք յուրահատուկ են արդի իրավական ակտերին: Հենց դրանով էլ վերջիններս տարբերվում են միջնադարյան դատաստանագրքերից և այլ իրավական ակտերից, որոնց բնորոշ են կոնկրետությունն ու որոշակիությունը: Միջնադարյան հայ իրավունքն այս հարցում բացառություն չէ: Ո՛չ «Կանոնագիրք Հայոց»-ում, ո՛չ ազգային դատաստանագրքերում չկա հանցագործության բնորոշումը: Դրա փոխարեն որոշակի իրավանորմերում նախատեսված են կոնկրետ հանցագոր-

ծության տեսակներ՝ ավազակություն, աստվածահայրություն, սրբագողություն, սպանություն, մարմնական վնասվածք և այլն:

Սակայն այս հանգամանքը ամենևին էլ չի նշանակում, որ միջնադարյան հայ իրավունքում փորձեր չեն արվել հանցագործության էության, այն ծնող պատճառների բացատրման և պարզաբանման ուղղությամբ: Ուսումնասիրությունը<sup>3</sup> ցույց է տալիս, որ հին և միջնադարյան հայ պատմիչները, փիլիսոփաները, եկեղեցական, պետական գործիչները, իրավագետներն ու օրենսդիրները տարբեր առիթներով անդրադարձել են այդ հարցին: Նրանցից ոմանք հանցագործությունը համարել են մարդու ազատ կամքի դրսևորման, ազահության, ընչաքաղցության, նախանձի, հարբեցողության և այլ համանման երևույթների հետևանք:

Հանցագործությանը, այն ծնող պատճառներին անդրադարձել է նաև դարաշրջանի կարևորագույն իրավական հուշարձանը՝ Գոշի Դատաստանագիրքը: Գոշին հայտնի է, որ մարդկային բնությունը մեկընդմիջ տրված ինչ-որ անփոփոխ բան չէ, այն ապրում է լինելիության ու քայքայման անընդհատ գործընթաց, որի հետևանքով էլ մարդը շեղվում է անմեղության ու արդարության հանդեպ ունեցած ներքին ձգտումից և դառնում մեղսագործ. «Եւ զի թեպէտ բնաւորական է ամենեցուն լաւին ցանկալ եւ անսխալ յիրս յամենայն լինել, սակայն ոչ է հնար որի լինելութեան եւ յապականութեան է բնութիւնս» / Դատ., էջ 69/ և մեղքը կատարյալ էակին դարձնում է անկատար, ատելությունը խափանում է սերն ու կարեկցությունը. **«Ձի գիտութիւնն որ ի բնութենէ ունեայ չարութիւն շիջոյց, եւ զկատարեալ ստեղծումն մեղքն անկատար գործեաց, եւ զսէրն, եւ վշտակցութիւնն, ատելութիւն խափանեաց»** / Դատ., էջ 10/: Իսկ ո՞րն է մեղքի և ատելության աղբյուրը: Այս հարցին Գոշը պատասխանում է՝ հոգու և մարմնի բազմաթիվ թուլություններ

<sup>3</sup> Տե՛ս Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962, էջ 225-250:

րի հետևանքով մարդը միշտ մոռացկոտ է բարու նկատմամբ. **«2ի բարարածական բնութիւնս միշտ մոռացող է բարւոյն վասն բազում ախտից հոգւոյ եւ մարմնոյ»** /նույն տեղը/: Հետևաբար, մարդկանց հոգևոր և մարմնական պահանջները բավարարման անհրաժեշտությունից է, որ ծնվում է անարդարությունը, խաբեությունն ու զրկողությունը: Այսպիսով, Մխիթար Գոշը իրավախախտումների պատճառը փնտրում է սոցիալական երևույթների մեջ: Խոսելով կոնկրետ հանցագործությունների մասին՝ Գոշն անմիջապես մատնացույց է անում դրանք ծնող նյութական և սոցիալական պատճառները՝ նշելով կարիքը, թշնամությունը, ազախությունը, նախանձը, հարբեցողությունը և այլն: Ըստ Դատաստանագրքի, մեղքը (իրավական առումով) ծագում է ոչ թե բնությունից, այլ այն դեպքում, երբ մարդը գիտակցաբար խախտում է օրենքը, **«զի ըստ բնութեան ոչ է մեղք, այլ ըստ օրինաց դրութեան յայտնելոյ գիտութիւն»** /Դատ., էջ 116/: Ուրեմն, ըստ Դատաստանագրքի, հանցագործությունը օրենքով պաշտպանված որոշակի հասարակական հարաբերությունների դեմ ուղղված ոտնձգություն է: Ավելին, Դատաստանագիրքն ամրագրում է քրեական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկը՝ չկա հանցանք, չկա պատիժ առանց օրենքի. **«Առանց դատաստանի մի տուգանեսցի, այլ ըստ կարի լիցի թէ յանցաւոր ի տէրութիւն գտցի, իսկ յայլս յանցաւոր գտեալ դատաւորօք վճարեսցի»** /Դատ., էջ 317/: «Դատաստանագիրքը» հանցագործության սուբյեկտ է ճանաչում միայն մարդուն, այն էլ՝ մեղսունակ և որոշակի տարիքի հասած: Այս դրույթը ներկայիս իրավագիտակցության տեսանկյունից շատ բնական և սովորական է, բայց ժամանակի համար կարևոր նշանակություն ուներ, հանգամանք, որ վկայում է հայ իրավական մտ-

քի զարգացման մասին: Ոչ միայն հին ու զարգացած ավատատիրության շրջանում, այլև 14-15-րդ և նույնիսկ 16-րդ դարերում եվրոպայում և այլ երկրներում հանցագործության սուբյեկտ են համարվել նաև կենդանիները, անգամ բնության ուժերն ու անշունչ առարկաները<sup>4</sup>:

Գոշի Դատաստանագիրքը մարդու քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքում դրել է սուբյեկտիվ մեղքը իր տարատեսակներով, դիտավորություն **«գիտութեամբ»** /, անզգույշ **«անգիտութեան»** / և խառն:

Դատաստանագրքի մի շարք հոդվածներում, մասնավորապես 2-րդ մասի 117 հոդվածում Գոշը խոսում է նաև դիտավորյալ սպանությունների մասին: Որպես այդ կարգի սպանության օրինակներ Գոշը մատնացույց է անում հետևյալները.

**ա/ երբ որևէ մարդ, մտածելով չարագործին ուղղել, նրան փայտով ծեծում է, որի հետևանքով մահ է առաջանում**

**բ/ երբ որևէ մեկը ուրիշին քարով կամ փայտով ծաղկում է մինչև նրա ուժասպառ դառնալը, որին հետևում է մահը, ընդ որում այդպիսի սպանությունը նույնացվում է սրով կամ նման զենքով կատարվող սպանություններին**

**գ/ երբ որևէ մեկը ուրիշի վրա կացին է շարտում և դրա պատճառած մարմնական վնասվածքից մահ է առաջանում, ընդ որում մահվան պատճառը պարզելու համար պատվիրում է հանգամանորեն ստուգել մարմնական վնասվածքների բնույթն ու աստիճանը, «նոյնպես եւ որ փայտահատ ինչ ձգիցէ եւ ի ծանրութենէ երկսւթոյն եւ ի սրբոյն իսկ եւ ի ձեռացն երեւի հարուածն, ի բազմապատիկ դիմաց հարուածոյն, որ ի վերայ են. գուշակէ զեղեալն»**

<sup>4</sup> Стѣн Стоянов А. Н., Уголовное право Рима от древнейших времен до Юстиниана включительно. Записи Харьковского университета, 1895, том 3, е. 101; Я. Конторович, Процессы против животных в средние века, СПб., 1887; Курс советского уголовного права. Часть общая, том I, 1968, с. 395.

դ/ ավազակների կողմից կատարվող սպանությունը, եթե նույնիսկ այդ սպանությունը չի զուգորդվում մարմնական վնասվածքների ու խեղումների հետ,

ե/ թունավորմամբ կատարվող սպանությունը, լինի կնոջ կողմից իր ամուսնու նկատմամբ, թե ընդհանրապես մերձավորի կողմից իր մերձավորի նկատմամբ կատարված, միևնույն է:

Այս օրինակներից երևում է, որ Գոշը դիտավորյալ սպանությունների նկատմամբ և թվարկմամբ միաժամանակ դրսևորել է դիտավորության որպես մեղքի ձևի իր ընդհանրական ըմբռնումը: Դիտավորությունը Դատաստանագրքում հանդես է գալիս որպես հանցագործի հոգեկան այնպիսի վերաբերմունք իր գործողությունների ու դրանց հետևանքների նկատմամբ, երբ անձը նախատեսում է իր գործողությունների հետևանքները, կամ էլ գիտակցաբար թույլ է տալիս այդ գործողությունների կատարումն ու հետևանքների վրա հասնելը:

Դատաստանագրքին որոշակիորեն հայտնի էր նաև քրեական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ անհրաժեշտ պաշտպանությունը: Հայտնի է, որ անհրաժեշտ պաշտպանությունը հանցավոր արարքի և նրա սուբյեկտի դեմ ուղղված օրինաչափ պաշտպանությունն է:

Մխիթար Գոշի Դատաստանագրքում այդ ինստիտուտի մասին ուղղակի կամ անուղղակի կերպով խոսվում է առաջին մասի 44, 79 և երկրորդ մասի 40 ու 117 հոդվածներում: Այսպես, առաջին մասի 44 հոդվածում Գոշը մատնանշում է. **«Եթե ոք անմեղ զնացել ուղեւոր եւ ոչ զոք ունէր յառաջ թշնամի պատահեալ, այլ թէ որ ամենեցուն զողն և աւազակն նմա դիպեսցի եւ սպանցէ սա զնոսա, մի իբրեւ սպանող դատեսցի ի սուրբ եկեղեցւոյ: Բայց վասն ահագին սեղանոյն սրբեսցէ զանձն աուրս սակաւս, զմտաւ ածեալ թէ ընդէ՞ր իսկ եւ ւսկանայք դիպեսուն, թէպետեւ յԱս-**

**տուծոյ իցէ մատնութիւնն»:**

Այսպիսով, Գոշը հարձակվող գողերի և ավազակների սպանությունը հանցավոր, ուրեմն և պատժելի արարք չի համարում: Դատաստանագրքի երկրորդ մասի 40 հոդվածում Գոշը հենվելով Մովսիսական օրենքների վրա, լուծում է գողերի հանցավոր հարձակման դեմ ուղղվող անհրաժեշտ պաշտպանության հարցը: Այստեղ էլ Դատաստանագիրքը նրանց նկատմամբ, որպես կանոն, թույլատրում է անհրաժեշտ պաշտպանության դիմել, հատկապես այն դեպքում, երբ ոտնձգությունը կատարվում է գիշեր ժամանակ. **«Իսկ եթէ ի տուն գացի գող եւ խոցեալ մեռանցիցի, չէ այն նման, ի սպանութիւն. ապա թէ արեւն ի վերայ նորա ծագեսցի, մահապարտ է՝ փոխարէն մեռցի: Ընդ խաւար գիշերոյ անգիտացեալ՝ ոչ համարի մեղս սուրբ օրէնքն, իսկ ընդ լուսոյ թագլին՝ իբր կամաւոր սպանող դատի իրաւամբք, զօ մարդագողոց հրամայեսցաւ մեռունիլ, եւ կամաւորի եւ ակամայի ապաշխարութիւն սահմանցիցի եւ փրկանք լիցի, որպէս ցուցեալ է: Եւ զողօնն կորուսեալ՝ չորրորդ հատուցի, եւ ոչ կորուսեալսն՝ կրկին»:**

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ անհրաժեշտ պաշտպանության մասին հիմնավորված ու փաստարկված իրավանորմների գոյությունը Գոշի Դատաստանագրքում վկայում է, որ նույնիսկ պետականության բացակայության պայմաններում (թերևս Դատաստանագիրքը գրվել էր հայոց վերականգնելիք պետության համար), հայ իրավունքը խնդրո դարաշրջանում որոշակի զարգացում է ապրել:

Հին և միջին դարերի քրեական իրավունքը հանցագործությունը դիտում էր ոչ միայն աշխարհիկ կարգերի խախտում, այլ նաև Աստծո և կրոնի դեմ ուղղված ոտնձգություն, ըստ այդմ էլ՝ պատիժը ոչ միայն հատուցում էր կատարված արարքի համար, այլ նաև հանցագործի մեղքերի մաքրում<sup>5</sup>:

Խնդրո հարցում Մխիթար Գոշի Դատաստանագիրքը դարաշրջանի

<sup>5</sup> Стів Боголепов Н., Учебник истории римского права, М., 1900, с. 47.



օրենսդրության համեմատ ավելի խոհեմ ու մարդասիրական մոտեցում է դրսևորում: Մարդկանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար Դատաստանագիրքը նախատեսում է հիմնական երկու սկզբունք.

ա/ քրեական պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի մեղքը՝ աշխարհիկ իրավական իմաստով,

բ/ պատասխանատվության անհատականացումը, այսինքն՝ յուրաքանչյուր մարդ ենթակա է քրեական պատասխանատվության միայն իր կատարած արարքի համար:

Վերջին դրույթը ամրագրված է Դատաստանագրքի երկրորդ մասի 34 հոդվածում. «Մի մեռանիցին հարքն ընդ որդւոց եւ մի որդիք մեռանիցին ընդ հարանց. իւրաքանչիւր ոք ի մեղս իւրում մեռցի: Եւ զայս ասէ յաղագս այնորիկ, որ թէ պատահի մահապարտ լինել ըստ օրինաց, հարք թէւ կամիցին վասն զորդիսն ապրէցուցանելոյ մեռանիլ՝ մի մեռցին, այլ մեռցի որդին մահապարտ, զի մի թիրեայք դատաստանն: Նմանապէս եւ մի որդիք ընդ հարց մեռցին: Նաեւ դատաւորք թէ ոչ կարասցեն զորդիսն մահապարտ ըմբռնել՝ եւ ոչ պարտին զհայր ի մահ դատապարտել: Եւ այս ի մեզ հաստատուն կացցէ» / Դատ., էջ 396/:

Գոչի ողջախոհությունն ու մարդասիրությունը առավելապես ցայտուն է դրսևորվում կոնկրետ պատիժների սահմանման հարցում, որի հիմքում ընկած են հետևյալ պահանջները.

ա/ Պատիժը պետք է համապատասխանի կատարված հանցավոր արարքի վտանգավորության աստիճանին. «Իսկ պատիժն ըստ վնասու համեմատ լիցի, որպէս չարագործաց չարականան հատանել զանդամ, նմանելով աստուածային դատաստանին» /Դատ., էջ 428/:

բ/ Պատիժ նշանակելիս պետք է պարզել հանցագործի անձը, նրա մեղքի աստիճանը կատարված արարքում, հանցագործության կատարման միջոցներն ու մեթոդները, պատճառներն ու հետևանքները. «Եւ զդատաստանս դատաստանի այսպէս պարտիմք իմանալ: Զի յորժամ սպանողի եւ

կամ այլ չարագործի կրկին ցուցանէ պատիժս, քննել արժան է, զի յորժամ զգին արեանն առցեն, թեթեւ ապաշխարութիւն լիցի: Թէպէտ արեամբ գնոյ վճարիլ կարծի, մի արասցեն առանց ապաշխարութեան, զի չիք գին մարդոյ, բայց միայն փոխանակ մեռանիլ ըստ օրինացի եւ կանոնաց: Այլ զի թէպէտ զիւրն գնելով զարիւն՝ զսպանելոյ կարծի, այլ չիք մարդոյ գին, ապաշխարութեամբ լցցի, զի գինն ըստ կարի եղաւ եւ ոչ ըստ արժանւոյն: Այդ բաւական լիցի թէ չիցէ սովորութեամբ չարն, ապա թէ կարծիս իցէ դարձեալ վնասու զխրատն առցէ եւ ի ձեռս: Իսկ եթէ աղքատ իցէ, բաւական լիցի խրատն: Իսկ տուգանք յաղագս արքունեաց գրեցաւ ըստ կարի, իսկ աւարն փոխանակ տուգանի, այլ արեան գինն իւրոցն լիցի: Այդ ըստ դատաստանի լիցի յայտ եկելոյն: Իսկ անյայտքն խոստովանութեամբ ուղղիցին ըստ իւրոյն սահմանի: Միանգամայն ամենայն դատաստան ըստ իրին քննութեամբ լիցի» /Դատ., էջ 438/:

գ/ Պատիժը պետք է կրի նա, ով կատարել է հանցագործությունը, այսինքն՝ հանցագործության սուբյեկտը, եթե վերջինս մեղսունակ է. «Եթէ իշխանք եւ այլք ի թագաւորական տանէ յանցաւորք թագաւորի լիցին, եւ կամ այլ նուաստք իշխանի, ըստ դատաստանի է զկնի յանցաւորացն մահու զորդիս եւ զեղբայրս ի ժառանգութիւն նոցա կացուցանել եւ մի պատճառաւ հարց որդիք զրկեցին եթէ համաբարոյք նոցա չիցեն, զի իւրաքանչիւր ի մեղս իւր մեռցի ըստ տէրունական հրամանի» /Դատ., էջ 319-320/:

դ/ Պատիժը, վերջին հաշվով, պետք է հետապնդի հանցագործին «ուղղելու», «բուժելու» նպատակ. «Պարտ է եւ բանս լինել դատաւորին, զի զստահակն ի բանտ արկցէ զի խրատեսցին» /Դատ., էջ 33/:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ ըստ Դատաստանագրքի պատժի հիմնական նպատակը ոչ միայն հանցագործին որոշակի ֆիզիկական տանջանքներ և զրկանքներ պատճառելը, այլ նաև նրան «ուղղելն», «բժշկելն» էր:

Մխիթար Գոչի Դատաստանագիրքը

դարաշրջանի մյուս իրավական հուշարձանների համեմատությամբ, աչքի էր ընկնում նաև ոչ խիստ պատիժներով: Յիմնական պատժատեսակներն էին՝ մարմնական պատիժներ, տուգանքներ, հոգևոր-կեղեցական պատիժներ և, վերջապես՝ մահապատիժ:

Գոշի Դատաստանագիրքը, որպես բացառիկ պատժատեսակ նախատեսում էր նաև մահապատիժը: Ավելորդ չենք համարում նշել, որ նույն դարաշրջանի եվրոպական իրավական հուշարձանները, ինչպիսիք են «Սաքսոնական կապիտուլյաները», գերմանական «Կարոլինյան», աչքի էին ընկնում իրենց դաժան պատժահամակարգով, որտեղ տեսակարար կշիռը կազմում էր մահապատիժը<sup>6</sup>:

Գոշի կարծիքով, հայոց թագավորները վերացրել են մահապատիժը, քանի որ այն հակասում էր մարդասիրությանը. **«Ձի մերոց թագադրաց ոչ հրամայեցաւ զհաւատացեալ սպանանել, բայց միայն խրատել»** /Դատ., էջ 387/: Գոշը «վասն մարդասիրութեան մեր օրինաց» սահմանում է, որ եթե դավաճանը /քաղաքը կամ բերդը թշնամուն մատնողը/ քրիստոնյա է, ապա նրան չպետք է մահվան դատապարտել, այլ մահապատիժը փոխարինել ավելի մեղմ պատժով, բայց եթե նույն հանցանքը կատարել է մի «այլազգի», ապա նրան պետք է անպայման մահվան դատապարտել: Նույնիսկ, եթե քրիստոնյան քրիստոնյային «սպանցել կամաւ», մահապատիժը պետք է փոխարինել արնագնով /հօգուտ տուժողի/ և տուգանքով /հօգուտ թագավորի/, իսկ եթե «այլազգին» քրիստոնյային սպանի «կամաւ», ապա նրան պետք է մահվան դատապարտել: Ահա այդ հոդվածը. **«Ձքադաքատուրս եւ զբերդատուրս, եթէ ճշմարիտ իցէ եւ յայլազգեաց, մատնիցէ մահու, ապա թէ բաւական իցէ փրկել զանձն, զկին եւ զմանկունս յարթունիս կալեալ վաճառիցէ եւ տարագիր ի ժառանգութենէ արասցէ խրատեալ յաչս: Ապա թէ ի գլուխ չարնելանիցէ եւ ընդ ձեռամբ գայցէ, մի ապրեցուցէ: Իսկ եթէ քրիստոնեայ եւ հանդերձեալ իցէ յայլազգի մատնել եւ թէ ի**

**քրիստոնեայս, նոյն դատաստան մահու է եւ այլոց, բայց վասն մարդասիրութեան մեր օրինաց խրատիցի յաչս կամ ի ձեռս, կամ յայլս, զի սպաշխարութեան հասանիցէ եւ մի կորիցէ չարին յանգ ոչ ելելոյ... իսկ եթէ սպանանիցէ այլազգի զքրիստոնեայ կամաւ, սպանցի փոխանակ նորա. ապա թէ ակամայ, խրատիցի ի ձեռս եւ զգին արեան տուգանեսցի»** /Դատ., էջ 307-308/:

Դատաստանագիրքը, որպես կանոն, մահապատիժը փոխարինել է արնագնով ու տուգանքով, երբեմն նաև՝ անդամահատումով, բանտարկությամբ, աքսորով և այլն, ըստ այդմ էլ մերժելով Մովսիսական «ամձի փոխարեն անձ», «արյան փոխարեն արյուն» սկզբունքը:

Գործնական-կիրառական առումով նշանակալի է Գոշի ուսմունքը դատարանի, դատավորի կարգավիճակի և դատավարության մասին:

Թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր դատարանների դատավորներին Գոշի Դատաստանագիրքը ներկայացնում էր հետևյալ պահանջները, դատավորը պետք է լինի չափահաս, հմուտ, քաջուսուն, հանճարեղ, գիտուն, օրենսգետ, բարի, առքինի, աննախանձ, ուշիմ, զգաստ, անաչառ, խիստ, հանդուրժողական, անկաշառ և մարդկային այլ դրական հատկանիշներով օժտված անձնավորություն. **«Եւ արդ պարտ է դատաւորին հմուտ լինելու քաջուսուն, եւ հանճարեղ, եւ գիտուն Սուրբ Գրոյ եւ ամենայն մարդկային, զի անսխալ զդատաստանն առնիցէ: Պիտոյ է եւ կատարեալ գոլ հասական, եւ ուշիմ, մտաւոր եւ զգաստ, զի մի յոչ իմանալոյ ի հարկէ սխալանս ինչ գործիցի ...Ուստի պարտ է ամենայնիւ գիտուն եւ զգաստ եւ հանճարեղ լինել եւ անաչառ»** /Դատ., էջ 25-26/:

Այսպիսով, տեսնում ենք, թե ինչպիսի մեծ պատասխանատվություն է դնում Գոշը դատավորների վրա, ինչ վեհ զոացմունքներ է նա փորձում դատավորներին ներշնչել: Որքան արդիական են հնչում Գոշի պահանջներն ու խորհուրդները դատավորների նկատմամբ, որոնց իրականացումը բավականին դժվար է նույնիսկ

<sup>6</sup> Стів Хрестоматия памятников феодального государства и права, М., 1961, с. 33-34.

արդի ժամանակաշրջանում, ուրեմն՝ դժվար էր, եթե ոչ անհնար, Գոշի ապրած դարաշրջանում:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը կտրականապես դեմ էր դատավարության ինկվիզիցիոն ձևին, ըստ որի ապացույցներ ձեռք էին բերվում բացառապես ծեծի, խոշտանգումների և այլ բարբարոսական մեթոդների միջոցով:

Դատավարության կողմերը կոչվում էին **«դատախազ»**, **«նոխխ»**, **«ամրաստան»** /վերջինս՝ մեղադրյալի իմաստով/ և այլն:

Տարբերություն չկար քաղաքացիական և քրեական դատավարությունների միջև, կողմերն օժտված էին միևնույն իրավունքներով: Մեղադրողի դերում կարող էին հանդես գալ ինչպես տուժածը, այնպես էլ նրա բարեկամները: Մեղադրյալը ներկայացնում էր իր մեղադրանքը դատարանին և պարտավորվում այն ապացուցել: Եթե մեղադրյալն ընդունում էր իր մեղքը կամ էլ չէր կարողանում մերժել մեղադրանքը, դատավարությունն ավարտվում էր և կայացվում դատավճիռ: Սակայն, եթե մեղադրյալը ինչ-ինչ ապացույցներով չէր ընդունում մեղքը, ապա մեղադրողը պարտավոր էր ապացուցել նրա մեղավորությունը կատարված արարքի համար<sup>7</sup>:

Քաղաքացիական գործերով դատավարությունը սկսվում էր, երբ պահանջատերը հայցով դիմում էր դատարան: Չայցը կարող էր լինել ինչպես բանավոր /որպես կանոն այդպիսին էր/, այնպես էլ գրավոր /եթե վեճը անշարժ գույքի վերաբերյալ էր/:

Կողմերը դատարանի առջև ձևական-իրավաբանական տեսանկյունից հավասար էին, սակայն ինչպես իրավացիորեն նշում է պրոֆ. **Խ. Թորոսյանը**. «Դատարանի առջև կողմերի հավասարությունն իրականում գոյություն ուներ միևնույն դասային ներկայացուցիչների, այլ ոչ թե տարբեր դասակարգերի միջև»<sup>8</sup>:

Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի, ապացույցների հիմնական տեսակ-

ներն էին համարվում, վկաների ցուցմունքը, իրեղեն ապացույցները, գիտուն մարդկանց եզրակացությունները կամ կարծիքները, խոստովանությունը, երդումը:

Վկաների ցուցմունքը Գոշի Դատաստանագիրքը համարում էր ամենահավաստի և կարևորագույն ապացույցը. **«Եւ հարկ է վկայիք լինել դատաստանն, զի զդատախազացն յերկար վիճողութիւն նաքօք հատանէ դատաւորն, զի թէ ոչ էին մոռացեալ զառաքելոյ օրէնսն՝ զի հրամայէ զընկերին խորհել եւ էչ զհւրն, ոչ էին եկեալ յայտոսիկ: Վասն այնորիկ դատաւորն ոչ կարէ հաւատալ մինչ ի գալ վկայիցն. այլ եւ նոխխքն վկայիք առաւել շիջանին յորժամ անկասկածք, եւ դատաստանն ուղիղ երեւի»** /Դատ., էջ 37/: Դատաստանագիրքն ընդհանուր առմամբ դեմ էր ձևական ապացույցներին և պահանջում էր, որ դատավորը պետք է **«Ճզգրտելով»** հարցաքննի ու լսի վկաների ցուցմունքը, որպեսզի լոկ ենթադրությունների հիման վրա դատավճիռ չկայացնի. **«...պարտ է վկայիցն մի առնել վայրապար զտեսանելն լամ զլսելն, այլ հաստաութեամբ ճզգրտել եւ ապա վկայել: Նոյնպէս եւ դատաւորն ի ժամ դատաստանին, ճզգրտելով հարցք եւ լսիցէ ի վկայիցն, զի մի ըստ գրեցելս ոմն կարծեօք դւտեսցէ»** /Դատ., էջ 45/:

Այսպիսով, Դատաստանագիրքը դեմ էր վկաների ցուցմունքներն անվերապահորեն ընդունելուն, ինչպես այդ բնորոշ էր ավատատիրական դարաշրջանի իրավական շատ հուշարձանների<sup>9</sup>: Ավելին, Գոշը զգուշացնում էր, որ դատավճիռ չկայացվի զրպարտության հիման վրա. **«մի ի պատճառս զրպարտութեան փոփոխեցին»** /Դատ., էջ 317/:

Այս հանգամանքը, իհարկե, պատիվ է բերում Դատաստանագրքի հեղինակին և միաժամանակ վկայում խնդրո դարաշրջանի հայ իրավունքի պատշաճ մակարդակի մասին: Սակայն Գոշը չի կարողացել լրիվ ձերբազատվել դարաշրջանի

<sup>7</sup> Տե՛ս Խոսրօվ Թորոսյան, Суд и процесс в Армении X-XIII вв., Ереван, 1985, с. 195-196.

<sup>8</sup> Տե՛ս Խոսրօվ Թորոսյան, նշվ. աշխ., էջ 255:

<sup>9</sup> Տե՛ս Խրестоматия памятников феодального государства и права, М., 1961.

իրավահայեցողությունից /որը նաև անհնար էր/ և հավատարիմ է մնացել ավատատիրական իրավունքի ապացույցների տեսությամբ: Դատաստանագիրքը արժանահավատ **«հաւատարիմ»**/ է համարել 25 տարին լրացրած երկու և ավելի մարդկանց կամ մեկ չափահասի ու մեկ մանուկի կամ երեք մանուկի վկայությունը, **«իսկ երկունքն եւ երեքն լինել հաւատարիմ որպէս արեգակն եւ լուսին, զի հասուցեալ են վկայ հաւատարիմ յերկինս, որպէս ասէ Դաւիթ: Եւ երրորդ հաւատարմութիւն՝ զի հասակաւ կատարեալք իցեն եւ կտո ալեօք պատուեալ, որով առաւել երեւի պատիւ նոցա: Բայց պարտ է եւ զհասակն ցուցանել եւ զժամանակին հարկաւորութիւնն... կարծեմ թէ ի դէպ է զքսանեւիինգ ամացն հաւատարիմ կարծել ի վկայութիւն»** /Դատ., էջ 37-38/:

Դատաստանագիրքը նաև խտրակա-նություն է դնում վկաների միջև՝ ելնելով նրանց կրոնական պատկանելիությունից ու սեռից: Այսպես, ըստ Դատաստանագրքի, չի կարելի ընդունել **«անօրինաց»** վկայությունը քրիստոնյաների վերաբերյալ, նույնիսկ՝ եթե նրանք շատ են և ուղիղ /ճիշտ/ են խոսում: Չի կարելի ընդունել նաև «հերձվածողների» վկայությունը, **«իսկ ըստ ազգաց կրօնից՝ ոչ է պարտ զանօրինաց վկայութիւն ընդունել ի վերայ քրիստոնէից, թէպէտեւ բազումք լինին եւ ուղիղ խօսին, որպէս եւ Քրիստոս ոչ ըկալաւ զգիւացն վկայութիւնն ...եւ ոչ զհերձուածողացն վայութիւն չէ պարտ ընդունել, զի թէ Տեառն չեն ծշմարիտ վկայք... իսկ զկանայս ոչ է պարտ ընդունել վկայս»** /Դատ., էջ 40/: Բայց եթե այնպես պատահի, որ տվյալ դեպքի կամ գործի միակ վկաները կանայք լինեն, ապա կարելի է ընդունել նրանց վկայությունը, պայմանով, որ նրանք վատահամբավներից **«ի վատթարաց»**/ չլինեն և կրկնակի թվով լինեն /քան պահանջվում է, եթե վկաները տղամարդիկ լինեին/, այսինքն՝ 2-3 տղամարդու փոխարեն լինեն 4-6 կին: Ըստ որում, կին վկաները իրավունք չունեն դատարան մտնել՝ ցուցմունք տալու համար, այլ

իրենց ասելիքը տանը պետք է հաղորդեն նույնքան թվով տղամարդկանց, որոնք կզան ու նրանց փոխարեն վկայություն կտան: Գոչն իր տեսակետը «հիմնավորում» էր նրանով, որ կանայք չեն կարող քահանա, զինվոր լինել, հունձ անել **«հնձան հարկանել»**/, շուկայում առևտուր անել և տղամարդու հագուստ հագնել, ուրեմն նրանք չեն կարող նաև վկա լինել, մանավանդ, որ դյուրագրգիռ են: Բայց կանայք կարող են կանանց և իրենց ամուսինների մասին վկայություն տալ. **«Իսկ զկանանց վկայութիւնն ի վերայ կանանց ընդունել պարտ է. եւ նոյնպէս զկանանցն յարանց, որպէս եւ զրեցաւ»** /Դատ., էջ 41/:

Եթե միջնադարյան դատավարական իրավունքում խոստովանությունը համարվում էր **«ապացույցների թագուհի»**, ապա Գոչն ապացույցի այդ տեսակին այնքան էլ կարևորություն չի տալիս: Ճիշտ է՝ Դատաստանագիրքը մի քանի անգամ հիշատակում է խոստովանությունը, սակայն այն համարում է ոչ թե ապացույցների թագուհի, այլ երկրորդական մի կռվան՝ վեճը լուծելու համար: Մասնավորապես, Դատաստանագրքի առաջին մասի 59 հոդվածում նշված է. **«Քահանայ թէ ի պղծութեան գտանիցի եւ ինքն յայտնեսցին եւ խոստովան ոչ լինիցի, եւ յայտնապէս յանդիմանել ոք չկարէ, ի կամս նորա թողցեն լինել եւ չլինել, եւ յեպիկոպոսին»** /Դատ., էջ 159-160/:

Դատաստանագիրքը, որպես կանոն, դեմ է նաև երդմանը՝ որպես ապացույցի ձևի. «զերդմունս մեք ոչ հրամայեցաք եւ ոչ հրամայեմք. այլ զի սովորել են անօրեն եւ անպատշաճ երդնուլ, մեք կամեցաք զանհրաման գործն ի սահմանս եւ ի կանոնս ապաշխարութեան ածել» /Դատ., էջ 29/: Սակայն Գոչը ստիպված է եղել ընդունել երդումը որպես ապացույցի ձև և այդ մասին նորմեր սահմանել՝ այն սահմանափակելու նպատակով միայն, քանի որ մարդկանց մեջ երդվելը շատ տարածված է եղել:

Գոչը վճռականապես դեմ էր **«երդում տալուն»** այն դեպքերում, երբ գործով վկաներ կան: Եթե վկաներ չկան, ապա կարելի է երդում տալ, ընդ որում, քա-

ղաքացիական գործերով պետք է երդվի պատասխանողը, իսկ քրեական գործերով /գողության, շնության, սպանության և ավազակության/ տուժողը կամ հանցագործին բռնողը, բայց ոչ հանցագործը, քանի որ նման «չարագործները» չեն տատանվի, չեն վախենա երդվելուց **«ոչ զանգիտեն երդնուլ»** /:

Վերջապես նշենք, որ այն դեպքերում, երբ երդունը ընդունվում էր որպես ապացույց, երդվողը պետք է անպայման ապաշխարություն կրեր, քանի որ նա **«մեղք»** էր գործել: Մխիթար Գոշի Դատաստանագիրքը չէր ընդունում նաև **օրդալիան**՝ որպես ապացույց: **Օրդալիան** դատավարական քննության /փորձության/ մի բարբարոսական մեթոդ էր, որով փորձում էին բացահայտել «ճշմարտությունը»: Այդ «փորձությանը» իրենց ենթարկում էին երկու կողմերն էլ՝ և՛ մեղադրողը, և՛ մեղադրվողը, բայց ավելի հաճախ միայն մեկ կողմը՝ պատասխանողը /քաղաքացիական գործերով/ և մեղադրվողը /քրեական գործերով/: Պատասխանողը կամ մեղադրյալը ինքն իրեն ենթարկում էր փորձության /օրդալիայի/, որպեզի «ապացուցի» իր անմեղությունը: Նա դրանով իրեն հանձնում էր «աստվածային դատարանին»՝ ակնկալելով Աստծո ողորմությունը: Օրդալիան արտահայտվում էր երդման և հաղորդություն ընդունելու, շիկացած երկաթը ձեռքն առնելու, սառը ջուրը մտնելու կամ մենամարտելու /անզեն, զենքով/ միջոցով: Օրդալիայի ենթարկվածը «ապացուցում» էր իր իրավացիությունը, եթե նա մարմնական վնասվածք չէր ստանում կամ մենամարտում պարտություն չէր կրում:

Այսպիսով, Դատաստանագիրքը բացասական վերաբնունք ուներ խոստո-

վանության ու երդման նկատմամբ, համենայն դեպս դրանց կարևորություն չէր տալիս, միաժամանակ չէր ընդունում «ապացուցի» բարբարոսական տեսակը՝ օրդալիան:

Ամենայն հավանականությամբ Գոշը դեմ է եղել նաև վարձու դատապաշտպանների մասնակցությանը դատավարությանը: Համենայն դեպս, նա խորհուրդ է տալիս չվարձել ճարտասան ատենախոս մարդու և նրա միջոցով ստությամբ հաղթել դատարանում. **«Մի բնաւ ի վարձու կալցին զատենախօս ճարտասան մարդս եւ ստութեամբ յաղթեսցես ի դատաստանի»** /Դատ., էջ 35/:

Դատավարությունը, որպես կանոն, բանավոր էր և կրում էր հրապարակային բնույթ, այսինքն՝ դռնբաց էր: Կողմերին լսելուց հետո, դատարանը ձեռնամուխ էր լինում վկաների հարցաքննությանը:

Դատարանի որոշումը կարող էր կայացվել դատաքննությունից անմիջապես հետո կամ էլ դատավորների կարճատև խորհրդակցությունից հետո **«Եւ դատաւորին պարտ է ոչ առնուլ կամ երիսարս փորձած գիտնականս ունել ի դատաստանին եւ ապա հատանել դատաստան... Այլեւ երկայնամիտ եւ ներող լիցին դատաւորք, զի բազում անգամ պատահէ զի դժուարագիւտ եւ անյայտ լիցի դաստանն, մի կարճամտեալ լուծեցեն, այլ համբերելով պահեսցեն զաւուրս եւ պարապով քննեալ դարձեալ ատենիւ կտրեսցեն զդատաստանն»** /Դատ., էջ 30-31/:

Վերջում ամփոփենք, որ Գոշի վերոնշված քրեաիրավական ուսմունքը շատ կողմերով կարող է տեսական ուղեցույց հանդիսանալ մեզանում իրականացվող դատաիրավական բարեփոխումների

# ՀՀ ՂԵՏԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ԵՎ ՀՍԿՈՂ ԴԱՏԱԽԱՉԻ ԿՈՂՄԻՅՑ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՅՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԱՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՅՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՁԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

## Արթուր ԴԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության բաժնի պետ,  
Իրավաբանական գիտությունների դոկտոր

## Արամ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի  
աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ

*Մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է կրկնակի դատապարտման և պատժման անթույլատրելիության սկզբունքը (non bis in idem): ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»: Միջազգային մի շարք պայմանագրերում նույնպես զետեղված է նշված սկզբունքը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետում և Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի 50-րդ հոդվածում, 1985թ. հունիսի 14-ի Շենգենյան համաձայնագրի կիրառման մասին կոնվենցիայով «նույն արարքների համար» (mimes faits) դատական հետապնդումն արգելվում է: Միջազգային իրավունքի մասնագետ Ֆ. Ռայմոնդոն non bis in idem սկզբունքը դիտում է որպես միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունք<sup>1</sup>:*

Նույն արարքի համար կրկին չդատվելու իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում, որի համաձայն՝ «ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավազորության շրջանակներում կրկին անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատա-

պարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մեծ պալատը 2011 թվականին Ջոլտուսիսին ընդդեմ Ռուսաստանի գործով որոշման մեջ անդրադարձել է **non bis in idem** սկզբունքին և՝ կրկնակի անգամ նույն իրավախախտման համար դատական պատասխանատվության չենթարկվելը դիտարկել է որպես հիմնարար իրավունք:

Միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրությունում ամրագրված

<sup>1</sup> Fabian Raimondo, General Principles of Law in the Decisions of International Criminal Courts (Martinus Nijhoff Publishers and VSP, 2008), P. 94-95.

նշված դրույթը քրեական դատավարության իրավունքում առանձնացվել է որպես դատավարական ինքնուրույն սկզբունք: **Non bis in idem** սկզբունքն իրենից ներկայացնում է պետության չորս նեգատիվ պարտականությունների համակարգ, որի տարրերը սերտորեն փոխալսմանավորված են, և դրանց ինքնուրույնությունը սուկ հարաբերական է: Այդ երաշխիքներն են. նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելու, դատապարտելու, դատելու, քրեական հետապնդման ենթարկելու արգելքները<sup>2</sup>:

Մինչդատական վարույթում այս սկզբունքի կիրառումը կարևոր երաշխիք է, որպեսզի կասկածյալը և մեղադրյալը անորոշ ժամկետով չգտնվեն քրեական հետապնդման վիճակում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր-ի.) 21-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված այն դրույթը, համաձայն որի քրեական հետապնդման մարմնի գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման<sup>3</sup>: Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննի-

չի և դատախազի չվերացված որոշում (քր. դատ. օր. 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ): ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածում և բաժին 12.1-ում սահմանված են **non bis in idem** սկզբունքից շեղվելու հետևյալ հիմքերը՝

○ նոր և նոր ի հայտ եկած հանգամանքները<sup>4</sup>,

○ այն բացառիկ դեպքերը, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը<sup>5</sup>:

ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում: Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետա-

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Եր.: «Իրավունք», 2010, էջեր 193-194:

<sup>3</sup> Մինչդատական վարույթում այս սկզբունքի կիրառման հիմնախնդիրների մասին տես, Հարությունյան Ա., Մարտիրոսյան Հ., Ղանբարյան Ա. Կրկին դատապարտման և պատժման անթույլատրելիության սկզբունքի հիմնախնդիրները մինչդատական վարույթում, «Օրինականություն», 2006, թիվ 38, էջեր 25-30, Դիլբանդյան Ս. Կրկնակի դատապարտման և պատժման սկզբունքի անթույլատրելիության սկզբունքի էությունը և նշանակությունը, «Իրավագիտության հարցեր» 2006, թիվ 3:

<sup>4</sup> Նոր ի հայտ եկած հանգամանքներով քրեական հետապնդման մարմնի որոշումների վերանայման մասին տես Շահինյան Վ., Ղանբարյան Ա. Մինչդատական վարույթում կայացված ակտերի վերանայումը նոր երևան եկած հանգամանքներով, «Օրենք և իրականություն», 2008, թիվ 5, էջեր 17-18:

<sup>5</sup> Այս բացառությունը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Տես՝ Նիկիտին ընդդեմ Ռուսաստանի [Nikitin v. Russia] գործով 2004թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ:

պնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելու ոլորտում հսկողություն իրականացնող դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի լիազորությունների տարանջատման խնդիրը:

Կանխավ նշենք, որ ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածը տարբեր ժամանակահատվածներում ենթարկվել է փոփոխությունների, ներկայացվել է նոր խմբագրությամբ, սակայն այդ փոփոխությունների ընթացքում չեն պահպանվել քրեական դատավարության հանրային և մասնավոր շահերի զուգակցման, դատախազ – քննիչ փոխհարաբերություններում նրանց դատավարական գործառույթների հստակ տարանջատման հիմնարար մոտեցումները, որի արդյունքում ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածն ինքնին պարունակում է խիստ անորոշ և հակասական կարգավորումներ:

Իրավակիրառ պրակտիկայում ՀՀ գլխավոր դատախազի և հսկող դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելու լիազորությունների տարանջատման վերաբերյալ առկա են հակասական մոտեցումներ:

**Մոտեցում առաջին:** Մի խումբ իրավաբաններ գտնում են, որ հսկող դատախազն իրավասու է վերացնել քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը՝ առանց քանակական սահմանափակման: ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասում, բացի ժամկետային սահմանափակման, այլ բնույթի սահմանափակումներ նախատեսված չեն: Հսկող դատախազը քննիչի որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում իրավասու է վերացնել այն: Եթե քննիչը կրկին կարծում է քրեական վարույթը (դադարեցնում է քրեական հետապնդումը), ապա հսկող դատախազը իրավասու է նոր որոշումն ստանալու պահից յոթօրյա ժամկետում կրկին վերացնել այն: ՀՀ գլխավոր դատախազը վեցամսյա ժամկետում իրավասու է վերացնել քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի

վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը, թե հսկող դատախազը չի վերացրել այն:

Կարծում ենք, այս մոտեցումն ընդունելի չէ, քանի որ եթե հսկող դատախազը անսահմանափակ քանակով վերացնի քննիչի նշված որոշումները, ապա անձը, դատախազական և քննչական գերատեսչությունների դիրքորոշումների անհամաձայնության հետևանքով, անորոշ ժամկետով կհայտնվի քրեական հետապնդման վիճակում, ինչն ինքնին հակասում է նույն արարքի համար կրկին չդատվելու (**non bis in idem**) սկզբունքի բուն էությանը:

**Մոտեցում երկրորդ:** Իրավաբանների երկրորդ խումբը մեկնաբանելով, որ ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվող «դրանից հետո» արտահայտությունը վերաբերում է հսկող դատախազի կողմից որոշումը վերացնելու գործողությանը (և ոչ թե յոթօրյա ժամկետին), գտնում են, որ հսկող դատախազը կարող է վերացնել ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասում թվարկված որոշումները միայն մեկ անգամ, որից հետո քննիչի որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Այս մոտեցումը խոցելի է այն իմաստով, որ եթե հիմք ընդունենք, որ «դրանից հետո» արտահայտությունը վերաբերում է ոչ թե յոթօրյա ժամկետին, այլ հսկող դատախազի կողմից որոշումը վերացնելու գործողությանը, ապա կստացվի, որ ՀՀ գլխավոր դատախազը վեցամսյա ժամկետում քրեական հետապնդման մարմնի՝ օրենքով նախատեսված որոշումները կարող է վերացնել միայն այն դեպքում, երբ հսկող դատախազը մեկ անգամ դրանք վերացրել է: Մինչդեռ, ձևավորված կայուն իրավակալիքառական պրակտիկան վկայում է այն մասին, որ ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է վերացնել քրեական հետապնդման մարմնի՝ օրենքով նախատեսված որոշումները նույնիսկ այն դեպքում, երբ հսկողություն իրականացնող դատախազը չի վերացրել դրանք:

Այս մոտեցման պարագայում ստացվում է, որ ՀՀ գլխավոր դատախազի կողմից քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) կամ քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելուց հետո իրավասու է կրկին կարճել քրեական



վարույթը՝ արգելափակելով ՀՀ դատախազության քրեական հետապնդման տնօրինման գործառույթը:

Կարծում ենք, որ նման հակասական կարգավորումների և մեկնաբանությունների հիմնական պատճառն այն է, որ գործող քր. դատ. օր-ով քրեական հետապնդման ոլորտում քննիչի և դատախազի լիազորությունները հստակ տարանջատված չեն: Մինչդեռ, ՀՀ կառավարության կողմից հաստատված նոր ՀՀ քր. դատ. օր-ի նախագծում հետևողականորեն տարանջատված են քրեական հետապնդման տնօրինման ոլորտում դատախազի և քննիչի լիազորությունները, որի պարագայում քննարկվող հիմնախնդիրները չեն ծագի: Այսպես, դատախազն անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին քննիչի միջնորդության հիման վրա կայացնում է համապատասխան որոշում, հաստատում է քրեական վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը:

**Ստուգում երրորդ:** Մինչև բուն դիրքորոշումը ներկայացնելը նշենք, որ ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանությունը և պրակտիկայի ձևավորումը չպետք է հանգեցնեն նախաքննության մարմնի կողմից դատախազության քրեական հետապնդումը տնօրինելու (քրեական հետապնդում հարուցել և մեղադրանք պաշտպանել) սահմանադրական գործառույթի արգելափակմանը: Ի տարբերություն քրեական հետապնդման այլ մարմինների գործունեության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը քրեական վարույթին մասնակցող անձանց օրինական շահերի և իրավունքների պահպանման կարևորագույն երաշխիքներից է<sup>6</sup>: Դատախազական հսկողության սահմանադրական գործառույթի պատշաճ իրականացման համար պետք է առկա լինեն անհրաժեշտ նախադրյալներ և պայմաններ<sup>7</sup>:

Մինչև խնդրի օրենսդրական և համա-

կարգային լուծում տալը, ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման ժամանակ առաջարկում ենք ձևավորել հետևյալ պրակտիկան: Հսկողություն իրականացնող դատախազը քրեական վարույթը կարճելու (հետապնդումը դադարեցնելու), քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ քննիչի որոշումը վերացնելու մասին որոշման հետ միաժամանակ, որպես առանձին դատախազական փաստաթուղթ, կազմում է նաև ցուցում: Քրեական վարույթը կարճելու (հետապնդումը դադարեցնելու), քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ քննիչի որոշումը վերացնելու վերաբերյալ դատախազի որոշման մեջ նշվում են միայն թույլ տրված խախտումները, իսկ ցուցումում՝ կատարվելիք գործողությունները: Այս դեպքում ցուցումն ըստ բովանդակության կարող է լինել երկու տեսակի:

**Առաջին,** եթե քրեական գործի հետագա ընթացքը որոշելու համար անհրաժեշտ են ձեռք բերել նոր ապացույցներ, ստուգել և գնահատել ապացույցները, ապա դատախազը քննիչին հանձնարարում է հավաքել անհրաժեշտ ապացույցներ, ստուգել և գնահատել դրանք և նյութերը ներկայացնել դատախազին: Նյութերը դատախազին ներկայացնելու դեպքում դատախազը լրացուցիչ ցուցումով հանձնարարում է կարճել քրեական գործի վարույթը կամ մեղադրական եզրակացություն կազմելով ավարտել նախաքննությունը:

**Երկրորդ,** եթե առկա է բացառապես իրավական հարց (օրինակ՝ դատախազությունը գտնում է, որ բնակարան մուտք գործելով հինգ հազար դրամը չգերազանցող հափշտակության դեպքում արարք կատարած անձը պետք է դատապարտվի ՀՀ քր. օր-ի 147-րդ հոդվածով (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը), իսկ քննչական ապարատը գտնում է, որ նման դեպքերում առհասարակ հանցագործություն չկա), ապա դատախազը կարող է անմիջապես ցուցում տալ քրեական վարույթն ավարտել մեղադրական եզրակացություն կազմելով:

Առաջարկի իրավական հիմքը կազմում

<sup>6</sup> Տե՛ս Брагин А.П., Пронякин А.Д. Прокурорский надзор в Российской Федерации: Учебное пособие. - М.: Изд. Центр ЕАОИ, 2007. С. 14-15.

<sup>7</sup> Տե՛ս Прокурорский надзор. Под общ. ред. Ю.Е. Винокурова.- 6-е изд., перераб. и доп. - М.: Высшее образование, 2005. С. 19-24.

են հետևյալ դրույթները: 33 քր. դատ. օր-ի 196-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով: 33 քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետի համաձայն՝ քննիչը իրավասու է որպես մեղադրյալ ներգրավելու, հանցագործությունը որակելու և մեղադրանքի ծավալի, նախաքննությունն ավարտելու կամ գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատախազի ցուցումներին համաձայն չլինելու դեպքում դրանք առանց կատարելու բողոքարկել վերադաս դատախազին: Նշված նորմերից բխում է մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննությունն ավարտելու դատախազի ցուցումի իրավաչափությունը և քննիչի կողմից այն բողոքարկելու իրավասությունը:

Առաջարկվող պրակտիկայի ձևավորման դեպքում քննիչը կամ պետք է կատարի դատախազի ցուցումը՝ մեղադրական եզրակացություն կազմելով ավարտի վարույթը, կամ էլ, առանց այն կատարելու, ցուցումը բողոքարկի վերադաս դատախազին: Եթե վերադաս դատախազը նույնպես գտնի, որ պետք է վարույթն ավարտել մեղադրական եզրակացություն կազմելով, ապա քննիչը, չունենալով այլընտրանք, պարտավոր է կատարել մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննությունն ավարտելու մասին դատախազի ցուցումը: Նման իրավիճակում քննիչը փաստացի զրկվում է վարույթը կրկին կարճելու, հետապնդումը դադարեցնելու, հետապնդում չիրականացնելու լիազորությունից, իսկ դատախազը հնարավորություն է ստանում իրականացնել քրեական հետապնդումը տնօրինելու սահմանադրական լիազորությունները: Այս պարագայում վերանում է 33 քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ դատախազի կողմից քննիչի որոշումը վերացնելու իրավասահմանափակումների հրատապությունը:

Միաժամանակ կարծում ենք, որ մինչև վերը նշված միջոցառումների իրականացումը, 33 քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի ներկայիս կարգավորման պայ-

մաններում հսկող դատախազն իրավասու է, յոթ օրվա ընթացքում, վերացնել նախ՝ քրեական գործի հարուցումը մերժելու (կամ քրեական հետապնդում չիրականացնելու) մասին որոշումը, որից հետո, եթե քննիչը կարծում է քրեական վարույթը (դադարեցնում է քրեական հետապնդումը), ապա հսկող դատախազն իրավասու է վերացնել նաև վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումը: Բանն այն է, որ նշված դեպքերում հսկող դատախազը զնահատական է տալիս տարբեր դատավարական փաստաթղթերի, մի դեպքում վերացնում է քրեական գործի հարուցումը մերժելու (քրեական հետապնդում չիրականացնելու) որոշումը՝ պատճենն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում, միաժամանակ հարուցում է քրեական գործ: Եթե քննիչը վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշում է կայացնում, ապա որոշման պատճենն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում հսկող դատախազը վերացնում է նաև վարույթը կարճելու (հետապնդումը դադարեցնելու) քննիչի որոշումը: Եթե հսկող դատախազի կողմից վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումը վերացնելուց հետո քննիչը կրկին կարծում է քրեական վարույթը (դադարեցնում է քրեական հետապնդումը), ապա նրա որոշումը կարող է վերացնել՝

○ վերադաս դատախազը բողոքի առկայության դեպքում, 33 քր. դատ. օր-ի 263-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով՝ բողոքն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում;

○ 33 գլխավոր դատախազը, անկախ բողոքի առկայությունից, 33 քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով, որոշման կայացման պահից վեց ամսվա ընթացքում:

Այսպիսով, 33 քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածում առկա անորոշ և հակասական կարգավորումները խաթարում են քրեական արդարադատության բնականոն իրականացումը, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը՝ ստեղծելով հակասահմանադրական իրավիճակ: Նման հակասությունների վերացումը պահանջում է օրենսդրական և համակարգային լուծումներ:

# ՍՈՒՏ ՄԱՏՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

## Արթուր ԴԱՎԹՅԱՆ

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

## Գևորգ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության  
դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

*Սուտ մատնությունն այն հանցագործություններից է, որոնց համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի կամ առնվազն վտանգավորությունն ու դրանց նկատմամբ բացասական վերաբերմունքն ընդգծող մոտեցումների կարելի է հանդիպել նաև հնագույն պատմական աղբյուրներում: Հանցագործության մասին սուտ տեղեկություններ հայտնելը մարդկային վարքագծի այն դրսևորումներից է, որն ուղեկցել է հասարակությանը դրա զարգացման տարբեր փուլերում: Սուտ մատնությունը, որպես կանոն, ծառայել է մրցակիցներին ձանապարհից հեռացնելու կամ նրանց համար խնդիրներ ստեղծելու միջոց:*

Սուտ մատնությունը երկօբյեկտ հանցագործություն է. այն ոչ միայն վարկաբեկում է կոնկրետ անձին, այլև վնասում է իրավապահ մարմինների գործունեության բնականոն ընթացքը: Սուտ մատնության հանրային վտանգավորությունն ավելի է ընդգծվում հանցավորության զարգացման և կատարելագործման արդի ժամանակաշրջանում, երբ դրանց դեմ պայքարն ավելի ու ավելի մեծ ջանքեր ու ռեսուրսներ է պահանջում, և զարգացող հանցավորությանը դիմակայելու համար պետություններն ընտրում են տարբերակված մոտեցումներ և ավելի թեթև հանցագործությունների դեմ պայքարում որդեգրում խնայողական քաղաքականություն: Այս պայմաններում հանցագործությունների մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների առօրյա քննության շրջանակներում միջոցների, ժամանակի, տարբեր ռեսուրսների վատնումն, իհարկե, խիստ բացասաբար է ազդում այդ պայքարի արդյունավետության վրա: Նշված հանգամանքները, բնակա-

նաբար, դառնում են սուտ մատնության դեմ պայքարի խստացման հրամայական: Այդ պայքարի արդյունավետությունը կախված է նաև սուտ մատնության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի ճիշտ մեկնաբանությունից ու կիրառությունից: Այս առումով և՛ տեսական և՛ գործնական շրջանակներում արդիական ու հրատապ է սուտ մատնության հանցակազմի այն հիմնահարցերի ուսումնասիրությունը, որոնք պայմանավորված են դրա համար քրեական պատասխանատվությանն առերևույթ առնչվող քրեադատավարական կարգավորումների առկայությամբ: Հենց նշված խնդիրներն էլ հանդիսանում են սույն հետազոտության առարկան: Հիմնախնդրի ուսումնասիրության հրատապությունը պայմանավորված է նաև գործող դատական պրակտիկայի հակասականությամբ: Ցավոք, ՀՀ վճռաբեկ դատարանը այս հիմնախնդրի վերաբերյալ դեռևս իրավական դիրքորոշում չի հայտնել:

ՀՀ քրեական օրենսգրքի «Սուտ մատ-

նությունը» վերտառությամբ 333-րդ հոդվածը ունի հետևյալ բովանդակությունը. «Հանցագործության մասին սուտ մատնությունը, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է (...)»:

Սուտ մատնությունը դասվում է արդարադատության դեմ ուղղված հանցագոր-

**դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:**

Նույն օրենսգրքի 177-րդ հոդվածը սահմանում է, որ հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանավոր (1-ին մաս): Քննչական գործողություն կատարելիս կամ դատական քննության ընթացքում հանցագործության մասին արված բանավոր հաղորդումը մտցվում է համապատաս-

*«...Սուտ մատնությունը, որպես կանոն, ծառայել է մրցակիցներին ճանապարհից հեռացնելու կամ նրանց համար խնդիրներ ստեղծելու միջոց...»*

ծությունների շարքին: Այս հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են արդարադատության իրականացման և դատական համակարգի բնականոն գործունեության ապահովմանը: Այս հանցագործության հանրային վտանգավորությունն արտահայտվում է նրանում, որ այն, ըստ էության, խաթարում է իրավապահ մարմինների բնականոն գործունեությունը, որոնք, հանցագործության մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկություն ստանալով, անհարկի միջոցներ ու ռեսուրսներ են ծախսում դրա քննության և բացահայտման ուղղությամբ:

**ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական գործ հարուցելու առիթներն են՝**

- 1) **հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.**
- 2) **հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.**
- 3) **հետաքննության մարմնի, քննիչի,**

խանաբար՝ քննչական գործողության կամ դատական միստի արձանագրության մեջ (2-րդ մաս): Այլ դեպքերում կազմվում է առանձին արձանագրություն: Եթե լրացել է դիմողի 16 տարին, նա նախազուլացվում է սուտ մատնության համար պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ (3-րդ մաս):

Հանցագործության մասին հաղորդում ընդունելիս հաղորդում տվողին սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազուլացնելու քրեադատավարական պահանջի գոյությունը որոշ տեսաբանների ու պրակտիկ իրավաբանների հիմք է տալիս պնդելու, որ հանցագործության մասին սուտ մատնության հանցակազմն առկա է միայն այն դեպքում, երբ հանցագործության մասին տեղեկություններ հայտնած անձը նախազուլացվել է սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Այս մոտեցման կողմնակիցներ են **Յա. Մ. Կուլբերգը և Ս. Յուդուշկինը**<sup>1</sup>:

Կարծում ենք՝ այսպիսի մոտեցումն ընդունելի չէ և չի բխում ո՛չ սուտ մատնության հանցակազմի վերլուծությունից և ո՛չ էլ այդ արարքի հանրային վտանգավորու-

<sup>1</sup> Տե՛ս Я.М. Кульберг. Преступления против правосудия. М, Госюриздат, 1962, стр. 37; С. Юдушкин. Ответственность за ложный донос.— “Советская юстиция:” 1974, N 2, стр. 12.

թյամբ պայմանավորված՝ դրա քրեակա-  
նացման նպատակից:

ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդ-  
վածի տառացի մեկնաբանությունը ցույց է  
տալիս, որ դրանում չկա նշում այն մասին,  
որ այդ հոդվածով նախատեսված քրեա-  
կան պատասխանատվության առաջաց-  
ման համար որպես պայման անհրաժեշտ  
է անձի նախազգուշացվածությունը սուտ  
մատնության համար նախատեսված քրե-  
ական պատասխանատվության մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվա-  
ծը սահմանում է, որ  
քրեական պատասխա-  
նատվության միակ  
հիմքը հանցանք, այ-  
սինքն՝ այնպիսի  
արարք կատարելն է,  
որն իր մեջ պարունա-  
կում է քրեական օրեն-  
քով նախատեսված  
հանցակազմի բոլոր  
հատկանիշները: Նույն  
օրենսգրքի 5-րդ հոդ-  
վածը սահմանում է, որ

**«...Այս հանցագործության  
հիմնական անմիջական օբյեկտն  
այն հասարակական  
հարաբերություններն են, որոնք  
ուղղված են արդարադատության  
իրականացման և դատական  
համակարգի բնականոն  
գործունեության ապահովմանը...»**

արարքի հանցավորությունը, դրա պատ-  
ժելիությունը և քրեաիրավական այլ  
հետևանքները որոշվում են միայն քրեա-  
կան օրենքով: Մեջբերված իրավադրույթ-  
ները վկայում են, որ քրեաիրավական  
նորմն իր մեջ պարունակում է արարքի  
քրեական պատասխանատվության բոլոր  
պայմանները: Բացառություն են կազմում  
քրեական իրավունքի տեսության մեջ ան-  
վանակոչված վկայակոչող և բլանկետա-  
յին դիսպոզիցիաները, որոնք ուղղակի-  
որեն հղում պետք է կատարեն այլ իրավա-  
կան ակտի վրա՝ որպես պատասխանատ-  
վության պայման: Քննարկվող նորմը  
դասվում է նկարագրական դիսպոզիցիա-  
ների շարքին և դրանում սպառիչ կերպով  
թվարկվում են դրանով նախատեսված  
արարքի համար քրեական պատասխա-  
նատվության բոլոր պայմանները, որոնց  
շարքում անձի նախազգուշացվածությու-  
նը, ինչպես նշվեց, նախատեսված չէ:

Սուտ մատնության համար քրեական

պատասխանատվության մասին անձը  
նախազգուշացվում է միայն իրավասու  
մարմնում հանցագործության մասին հա-  
ղորդում ներկայացնելիս և նախազգուշ-  
ացվածությունը որպես այդ հոդվածով  
քրեական պատասխանատվության են-  
թարկելու պայման դիտարկելու դեպքում  
կստացվի, որ սուտ մատնություն հնարա-  
վոր է կատարել միայն հանցագործության  
մասին այդ կերպ հաղորդում ներկայաց-  
նելով: Այնինչ, 333-րդ հոդվածում **հաղոր-  
դում** բառը ընդհանրապես, առավել ևս

որպես սուտ մատնություն կատարելու  
եղանակ չի հիշատակվում: Այդ հոդվա-  
ծում, զոհն մասնավորեցման մակարդա-  
կում, սահմանված չէ սուտ մատնության  
կատարման, այսինքն՝ իրականությանը  
չհամապատասխանող տեղեկությունները  
իրավապահ մարմնին հայտնելու եղա-  
նակը:

Մասնագիտական գրականության մեջ  
որպես սուտ մատնության եղանակ նշվում  
են քրեական գործ հարուցելու պարտա-  
կանություն ունեցող մարմիններին, պաշ-  
տոնատար անձանց հասցեագրված ցան-  
կացած գրավոր տեղեկությունները, ընդ-  
հույ, նախքան քրեական հետապնդում  
իրականացնող մարմին ներկայանալը  
առաքված դիմումը, երրորդ անձի միջո-  
ցով այդպիսի տեղեկություններ հայտնե-  
լը, ավելին նշվում է նաև բանավոր ձևով  
նման տեղեկություններ հայտնելը, որոնք  
մտցվում են որոշակի դատավարական  
գործողության արձանագրության մեջ<sup>2</sup>:

<sup>2</sup> ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, խմբ. Գ. Ս. Ղազինյանի, Երևան, 2006թ. էջ 852, Преступления против правосудия. Под ред.: Галахова А.В. - М.: Норма, 2005, с. 210:

**Տ.Ա. Կոստարևան և Ա. Ի. Չուչանը** որպես սուտ մատնության կատարման միջոց մատնանշում են նաև անանուն կամ չստորագրված նամակը<sup>3</sup>:

Փաստորեն, հանցագործության մասին տեղեկություններն իրավասու մարմնին հայտնելու եղանակները սահմանափակ չեն և անձը այդպիսի տեղեկություններ, այդ թվում՝ իրականությանը չհամապատասխանող, իրավասու մարմնին կարող է հայտնել նաև այնպիսի եղանակներով, որոնք իրենց բնույթով բացառում են անձին սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու հնարավորությունը:

**«...Հանցագործության մասին տեղեկություններն իրավասու մարմնին հայտնելու եղանակները սահմանափակ չեն...»**

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու՝ նույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել: Իսկ 176-րդ հոդվածը որպես քրեական գործ հարուցելու առիթ, նախատեսում է նաև

հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս: Նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկություններ, դրանց կապակցությամբ քննություն կատարելու պարտականություն կրող սուբյեկտները, ստանում են ոչ միայն հանցագործության մասին հաղորդում ստանալով, այլ նաև դրա հիման վրա քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու արդյունքում: Եվ պատահական չէ, որ

օրենսդիրը մինչև քրեական գործ հարուցելը ի թիվս այլոց, նախատեսում է նաև անձից բացատրություն վերցնելու հնարավորություն, ինչը մինչև քրեական գործ

հարուցելը հանցագործության մասին տվյալներ ձեռք բերելու հիմնական դատավարական միջոցներից մեկն է:

**Այսինքն՝ հանցագործությունը բացահայտելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու պարտականությունը իրավապահ մարմինների համար առաջանում է անկախ այդ տեղեկությունների ստացման ձևից և բնականաբար, ոչ միայն այն դեպքում, երբ հանցագործության մասին տեղեկությունները ստացվել են սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված անձից: Ցանկացած դեպքում, հանցագործության մասին տեղեկություններ ստանալն իրավասու մարմնին պարտավորեցնում է դրա հանգամանքների պարզմանն ուղղված միջոցներ ձեռնարկել: Տեղեկություններ հայտնող անձի նախազգուշացված լինելը որևէ նշանակություն չունի իրավասու մարմ-**

<sup>3</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу РФ. Под ред. Ю. И. Скуратова и В. М. Лебедева, 3-е изд. Москва 2000 г. стр. 771, Комментарий к Уголовному кодексу РФ. под. ред. А. И. Чучаева, М, 2010, с. 306.

նի մոտ դրանք ստուգելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու պարտականության առաջացման համար: Այս հանգամանքը կարծում ենք պետք է դիտարկել սուտ մատնության հանցակազմի օբյեկտի և դրա հանրային վտանգավորության մասին վերը ներկայացված վերլուծության համատեքստում: Անկախ նրանից՝ հաղորդման թե բացատրության միջոցով են ստացվել հանցագործության մասին սուտ տեղեկությունները, դրանք, այնքանով, որքանով երկու դեպքում էլ պատճառ են դառնում համապատասխան մարմնի կողմից հանցագործության բացահայտմանն ուղղված միջոցառումների շրջանակում ռեսուրսների վատնման, խախտում են սուտ մատնության օբյեկտ կազմող հասարակական հարաբերությունները:

*«...Նախազգուշացումը միջոց է վարույթն իրականացնող մարմնին հանցագործության մասին սուտ տեղեկություններ տրամադրելու դեպքերը բացառելու համար...»*

Դեռևս նախորդ դարի 50-ական թվականների կրիմինալիստիկական գրականության ուսումնասիրությունը կվկայի, որ հանցագործության մասին հաղորդում ընդունելիս անձին սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելն ի սկզբանե հանդես է եկել որպես կրիմինալիստիկական տակտիկական հնարք, որը նպատակ է ունեցել հնարավորինս բացառելու հանցագործությունների մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները և ժամանակի ընթացքում, հաշվի առնելով այդ հնարքի արդյունավետությունը, այն ամրագրվել է քրեադատավարական օրենքով և դարձել արդեն նորմ-երաշխիք սուտ մատնության դեպքերը որոշակիորեն բացառելու համար: Նախազգուշացումը միջոց է վարույթն իրականացնող մարմնին հանցագործության մասին սուտ տեղեկություններ տրամադրելու դեպքերը բացառելու համար, բայց ոչ պայման դրա համար նախատեսված պատասխանատվության առաջացման համար: Այս երաշխիքը, փաստորեն, գործադրվում է, երբ անձն առաջին անգամ հայտնում է հանցագործության մասին՝ դրանով պարտականություն ստեղծելով վարույթն իրականացնող մարմնի համար՝ ձեռնարկելու օրենքով

նախատեսված անհրաժեշտ միջոցներ հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ: Մինևույն ժամանակ, օբյեկտիվորեն հնարավոր ու նաև տրամաբանական չէ, քննության, այդ թվում՝ նյութերի նախապատրաստման ընթացքում յուրաքանչյուր դեպքում անձի կողմից նոր հանցագործության կամ հանցագործության նոր դրվագի մասին հայտնվելու դեպքում անձից գրավոր հաղորդում վերցնել և նրան նախազգուշացնել հնարավոր քրե-

ական պատասխանատվության մասին: Կարծում ենք, որ մեր կողմից քննադատված մոտեցման շրջանակներում ոչ իրավաչափորեն և անհարկի նույնացվում են տարբեր իրավաչափ նպատակներ հետապնդող դատավարական և նյութական իրավունքի նորմերը: Եվ վերջապես, մեր կողմից անընդունելի մոտեցումը չի համապատասխանում նաև համընդհանուր ճանաչում ստացած այն սկզբունքին, որ օրենքի չիմացությունը չի ազատում քրեական պատասխանատվությունից: Հենց այս համատեքստում հարց է առաջանում, թե ինչու սուտ մատնության համար քրեական պատասխանատվություն կարող է առաջանալ միայն այն դեպքում երբ դրա մասին անձը նախազգուշացված է, իսկ սպանության, գողության, կանխանտածված սնանկության կամ հանցագործությունը պարտակելու պարագայում այդ պայմանի մասին երբեք չի էլ հիշատակվում: Հետևաբար, մեր կարծիքով սուտ մատնության հանցակազմն առկա է բոլոր այն դեպքերում, երբ անձը քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմնին հայտնում է կատարվող, կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին՝ անկախ հայտնելու դատավարական ձևից և սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելուց:

# ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԲՈՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՃԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՄԻՆԱԼՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## Գոռ ԱԼՈՅԱՆ

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ

*Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կրիմինալոգիական բնութագիրը ներկայացնելու նկատառումներով նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ քանակական և որակական այնպիսի ցուցանիշների քննարկմանը, ինչպիսիք են այդ հանցագործությունների վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը:*

Այս իմաստով պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և նախկին ԽՍՀՄ այլ պետություններում, վերջին տարիներին ընդհանուր առմամբ արձանագրվում է բռնությամբ կատարվող հանցագործությունների (այդ թվում՝ սեփականության դեմ ուղղվածների) աճ:<sup>1</sup>

Մասնավորապես, սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող

հանցագործությունների վերջին տարիների միտումները Հայաստանի Հանրապետությունում բավականին անբարենպաստ են: Այդ մասին են վկայում ոչ միայն փորձագիտական տարբեր գնահատականները, այլև պաշտոնական վիճակագրության տվյալները (**տե՛ս աղյուսակ 1-ը**):

Ներկայացված աղյուսակից հետևում է,

### Աղյուսակ 1

## Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների շարժընթացը ԶԶ-ում 2004-2011 թթ.

Տարեթիվ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	Ընդ.
Ավագակություններ	129	108	94	76	126	151	107	106	106
Կողոպուտներ <i>դրանցից՝ բռնութ. զու որդ.</i>	114 16	161 30	171 23	123 12	224 21	265 18	249 15	238 31	1545 166
Շորթումներ	12	15	12	19	38	15	22	12	145
Տրանսպ. միջ. փախց. դեպքեր <i>դրանցից՝ բռնութ. զու որդ.</i>	127 8	96 3	131 6	137 2	66 2	54 2	60 4	53 0	724 27
Ընդ. սեփ. դեմ ուղղվ. հանց-ներ	3935	3547	4110	3674	4297	5578	5392	5802	36335
Ընդամենը հանցագործություններ	10083	8875	9757	8428	9271	14339	15477	16572	92802

որ նշված ժամանակահատվածում սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կառուց-

վածքում ԶԶ-ում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն ավագակությունները: Մասնավորապես, դրանց մասնաբաժինը սեփա-

<sup>1</sup> Տե՛ս նաև Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ер., 2007, էջ 110:



կանության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում 2.47% է, իսկ ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 0.97%: Դրանց հաջորդում են բռնությամբ զուգորդված կողոպուտները, որոնց մասնաբաժինը սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում կազմում է 0.46%, իսկ ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 0.18%: Վերջիններիս մի փոքր զիջում են շորթունները, որոնց մասնաբաժինը սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում կազմում է 0.40%, իսկ ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 0.16%:

Քննարկվող հանցագործություններից ամենափոքր տեսակարար կշիռն ունեն ուրիշ տրանսպորտային միջոցն առանց հափշտակելու նպատակի փախցնելու բռնությամբ զուգորդված դեպքերը: Այս հանցագործությունների մասնաբաժինը սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործությունների կառուցվածքում կազմում է 0.07%, իսկ ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 0.03%:

Այսպիսով, 33-ում 2004-2011 թթ. գրանցված հանցագործությունների ընդհանուր թվում ավազակությունների մասնաբաժինը միջին հաշվարկով կազմում է 0.97%, իսկ սեփականության դեմ ուղղվածների թվում՝ 2.47%: Սրանք բավականին մտահոգիչ ցուցանիշներ են, հատկապես՝ հաշվի առնելով տվյալ հանցատեսակի հանրային բարձր վտանգավորությունը:

Ընդհանուր հանցավորության կառուցվածքում ավազակություններն առավելագույն մասնաբաժինն ունեցել են 2008 թվականին (1.36%), իսկ նվազագույնը՝ 2011 թվականին (0.64%): Ընդ որում, բացարձակ թվերով ամենաշատ ավազակությունները գրանցվել են 2009թ., սակայն այդ տարի գրանցվել է նաև ընդհանուր հանցավորության աննախադեպ աճ: Այդ իսկ պատճառով նշված տարում ավազակությունների մասնաբաժինն ընդհանուր հանցավորության կառուցվածքում կազմել է ընդամենը 1.05%: Այս առումով, հետաքրքրարժան է, որ հաջորդ տարիներին, 2009թ. համեմատ, 33-ում արձանագրվել են ավելի մեծ թվով հանցագործություններ (2010թ.՝ 15477, իսկ 2011թ.՝ 16572), իսկ ավազակությունների մասնաբաժինն ընդհանուր հանցավորության կառուցվածքում

ավելի է նվազել՝ համապատասխանաբար կազմելով 0.69% և 0.64%: Ընդ որում, բացարձակ թվերով նշված ժամանակահատվածում ավազակություններն էապես նվազել են:

Ինչ վերաբերում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում ավազակությունների մասնաբաժին, ապա պետք է նշել, որ այն, ի տարբերություն ընդհանուր հանցավորության կառուցվածքում տվյալ հանցագործության մասնաբաժնի, առավել մեծ է եղել 2004 թ.-ին (3.28%), իսկ առավել փոքր՝ 2011 թ.-ին (1.83%): Պատճառն այն է, որ հենց 2011 թվականին է արձանագրվել նաև սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացարձակ թվով աճ և ավազակությունների նվազում:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալներից հետևում է նաև, որ 2004 թվականի համեմատ 33-ում կատարվող ավազակությունների բացարձակ քանակն ավելացել է միայն 2009 թ.-ին: Իսկ քննարկվող ժամանակահատվածում այս հանցագործությունների քանակական բացարձակ ցուցանիշների շթայական փոփոխությունների առումով առկա է հետևյալ պատկերը. **2005 թ.-ին 2004 թ.-նի համեմատ՝ 16.3% նվազում, 2006 թ.-ին 2005 թ.-ի համեմատ՝ 13.0% նվազում, 2007 թ.-ին 2006 թ.-նի համեմատ՝ 19.1% նվազում, 2008 թ.-ին 2007 թ.-նի համեմատ՝ 65.8% աճ, 2009 թ.-ին 2008 թ.-նի համեմատ՝ 19.8% աճ, իսկ 2010 և 2011 թթ. 2009 թ.-նի համեմատ՝ 29.1% նվազում:**

Այսպիսով, ավազակությունների կայուն նվազում նկատվում է միայն 2004-2007 թթ. ընթացքում: Մնացած տարիներին արձանագրվում է մեկ աճ, մեկ նվազում: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ առավելագույն աճն արձանագրվել է 2008 թ.-ին (+65.8%), իսկ նվազումը՝ 2010 թվականին (-29.1%):

Միևնույն ժամանակ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ նշված ժամանակահատվածում 33-ում կատարված ավազակությունները հիմնականում ուղղված են եղել անձնական սեփականության դեմ: Այսպես, 2006, 2007, 2009 և 2011 թթ. հանրապետությունում չի արձանագրվել ավազակությամբ պետական կամ հանրային սեփականության հափշտակության ոչ մի դեպք: Մինչդեռ 2004 թ. գրանցված 129 ավազակու-

թյուններից պետական կամ հանրային սեփականության դեմ է ուղղված եղել ընդամենը 2-ը, 2005թ.՝ 108-ից 1-ը, 2008թ.՝ 126-ից 2-ը, իսկ 2010թ.՝ 107-ից 1-ը: Նմանատիպ ցուցանիշներ են արձանագրվում նաև սեփականության դեմ ուղղված բռնության մեք կատարվող այլ հանցագործությունների պարագայում:

Ներկայացված վիճակագրական տվյալներից կարելի է հետևություն անել, որ ՀՀ-ում կատարվող ավագակությունների (ինչպես նաև սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող այլ հանցագործությունների) առումով առավել խոցելի է բնակչության ամձնական սեփականությունը: Հետևաբար, նշված հանցագործությունների դեմ պայքարով զբաղվող սուբյեկտները պետք է առավել մեծ ուշադրություն դարձնեն հենց տվյալ ոլորտի անվտանգության ապահովմանը:

Ավագակությունների կրիմինալոգիական բնութագրի առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև քննարկվող հանցագործությունների գրանցման և բացահայտման հարաբերակցության վերաբերյալ վիճակագրական տվյալները: Այսպես, 2004-2011 թթ. ՀՀ-ում գրանցված ավագակությունների բացահայտման ցուցանիշը 50%-ից քիչ ավելին է: Բացառություն է կազմում միայն 2010 թվականը, երբ գրանցված 107 ավագակություններից բացահայտվել է 68-ը (63.6%): Այս առումով նվազագույն ցուցանիշն արձանագրվել է 2009թ., երբ գրանցված 151 ավագակություններից բացահայտվել են միայն 67-ը (44.4%-ը):

Ամիրաժեշտ ենք համարում վերլուծության ենթարկել նաև ավագակությունների բնութագիրն ըստ հանցանքը կատարելու վայրի (**տե՛ս աղյուսակ 2-ը**):

**Աղյուսակ 2**

**ՀՀ-ում կատարված ավագակությունների բաշխվածությունն ըստ հանցանքը կատարելու վայրի**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
<b>Ընդամենը ավագակություններ</b>	<b>129</b>	<b>108</b>	<b>94</b>	<b>76</b>	<b>126</b>	<b>151</b>	<b>107</b>
Փողոց, պուրակ, այգի	34	27	20	18	33	28	18
Ռեստորան, բար, սրճարան	0	0	1	0	0	0	1
Շենքի մուտք	5	2	3	1	0	5	6
Բնակարան, առանձնատուն, ամառանոց	42	37	30	29	33	51	24
Ավտոմեքենա	1	1	2	0	2	1	0
Տեղեկությունները բացակայում են	47	41	38	28	58	66	58

Ներկայացված աղյուսակից կարելի է հետևություն անել, որ ավագակությունների մեծամասնությունը կատարվում են բնակարաններում, առանձնատներում կամ ամառանոցներում: Այսպես, 2004թ. նշված վայրերում կատարվել է դրանց 33%-ը, 2005թ.՝ 34%-ը, 2006թ.՝ 32%-ը, 2007թ.՝ 38%-ը, 2008թ.՝ 26%-ը, 2009թ.՝ 34%-ը, 2010թ.՝ 22%-ը: Նույն աղյուսակից հետևում է նաև, որ ավագակությունների վերը նշված վայրերին հաջորդում են փողոցները, պուրակները, այգիները: Սասնավորապես, 2004թ. հասարակական այս վայրերում կատարվել են ավագակությունների 26%-ը, 2005թ.՝ 25%-ը, 2006թ.՝ 21%-ը, 2007թ.՝ 24%-ը, 2008թ.՝ 26%-ը, 2009թ.՝ 19%-ը և 2010թ.՝ 17%-ը: Իսկ քննարկվող

հանցագործությունների առավել տարածված այլ վայրերը հաջորդաբար դասակարգվում են հետևյալ կերպ. շենքի մուտք՝ 3%, ավտոմեքենա՝ 1% և ռեստորան, բար, սրճարան՝ 0.3%:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ավագակություններն ավելի քան չորս անգամ առավել հաճախ են կատարվում քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, ինչը, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրի ունևոր բնակչության մեծ մասը կենտրոնանում է հենց քաղաքներում:

ՀՀ-ում ավագակությունների կատարման ժամանակի վերաբերյալ ցուցանիշների մեր ուսումնասիրության արդյունքում (**տե՛ս աղյուսակ 3-ը**) բացահայտվել են հետևյալ առանձնահատկությունները.

**ՀՀ-ում կատարված ավազակությունների բաշխվածությունն ըստ հանցանքը կատարելու ժամանակի**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
<b>Ընդամենը ավազակություններ</b>	<b>129</b>	<b>108</b>	<b>94</b>	<b>76</b>	<b>126</b>	<b>151</b>	<b>107</b>
Ժամը՝ 05:00–09:00	12	10	6	7	8	12	20
Ժամը՝ 09:00–16:00	23	14	23	14	21	27	16
Ժամը՝ 16:00–22:00	34	34	21	22	28	39	29
Ժամը՝ 22:00–05:00	38	24	27	23	34	50	23
տեղեկությունները բացակայում են	22	26	17	10	35	23	19

Ավազակությունների կեսից ավելին կատարվում են երեկոյան կամ գիշերային ժամերին: Այսպես, երեկոյան ժամերին կատարված դեպքերը կազմում են ավազակությունների ընդհանուր թվի 27%-ը, իսկ գիշերային ժամերին կատարվածները՝ 28%-ը:

Դրանց հաջորդում են ցերեկվա ժամերին կատարվածները, որոնք կազմում են ավազակությունների ընդհանուր թվի 17%-ը: Իսկ առավել փոքր մասնաբաժինն ունեն առավոտյան ժամերին կատարված ավազակությունները՝ 10%: Մնացած դեպ-

քերում հանցանքը կատարելու ժամի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ ավազակությունները բավականին հաճախ կատարվում են զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաներ գործադրելով: Դրանք կազմում են ավազակությունների ընդհանուր թվի շուրջ 53%-ը (**տե՛ս աղյուսակ 4-ը**): Իսկ դա վկայում է քննարկվող հանցագործության առավել վտանգավոր տվյալ տեսակի մտահոգիչ տարածվածության մասին:

**ՀՀ-ում կատարված ավազակությունների բաշխվածությունն ըստ հանցագործության գործիքի**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	Ընդամենը (%)
<b>Ընդամենը ավազակություններ</b>	<b>129</b>	<b>108</b>	<b>94</b>	<b>76</b>	<b>126</b>	<b>151</b>	<b>107</b>	<b>791 (100)</b>
հրազենով	29	26	18	24	20	30	9	156 (19.7)
սառը զենքով	4	5	0	0	6	3	1	19 (2.4)
զազային, օդամշ., նետողակ.	0	0	1	0	1	2	2	6 (0.8)
պայթուցիկ նյութ., սարքերով	0	0	0	0	0	1	1	2 (0.3)
ջարդող, կտրող, ծակող առարկ.	26	24	29	32	43	40	39	233 (29.5)
առանց զենքի գործադրման	70	53	46	20	56	75	55	375 (47.3)

Ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ ավազակությունների մոտ 30%-ը կատարվել են կենցաղային նշանակության՝ ջարդող, կտրող, ծակող տարբեր առարկաներ գործադրելով: Սակայն առավել մտահոգիչն այն է, որ ավազակային հարձակումների ավելի քան 22%-ը կատարվում են հրազենով կամ սառը զենքով, ընդ որում, ինչպես գործարանային արտադրության, այնպես էլ ինքնաշեն: Իսկ

նշված մտահոգությունն ավելի է ամրապնդվում, երբ պարզ է դառնում, որ ՀՀ-ում ավազակությունները, թեև հազվադեպ, բայց կատարվում են նաև պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում 2004-2011 թթ. գրանցված բոլոր կողոպուտներին, ապա պետք է նշել, որ ընդհանուր հանցավորության կառուցվածքում դրանց մասնաբա-

Ժինը միջին հաշվարկով կազմում է 1.66%, իսկ սեփականության դեմ ուղղվածների թվում՝ 4.25%: Այս առումով, սակայն, լուրջ մտահոգության տեղիք են տալիս կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությամբ զուգորդված կողոպուտների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները: Մասնավորապես, դրանք կազմում են կողոպուտների ընդհանուր թվի 10.7%-ը (տե՛ս աղյուսակ 1-ը): Ընդ որում, կողոպուտների կառուցվածքում դրանք առավելագույն մասնաբաժինն ունեցել են 2005 թվականին (18.6%), իսկ նվազագույնը՝ 2010 թվականին (6.02%): Մինչդեռ բացարձակ թվերով բռնությամբ զուգորդված ամենաշատ կողոպուտները գրանցվել են 2011թ.: Սակայն այդ տարի գրանցվել է նաև ընդհանուր կողոպուտների բացար-

ձակ թվի աճ, ինչն էլ պայմանավորել է նման ցուցանիշների ձևավորումը:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալներից հետևում է նաև, որ բռնությամբ զուգորդված կողոպուտների կայուն նվազում նկատվում է միայն 2008-2010 թվականներին: Մնացած տարիներին արձանագրվում է մեկ՝ աճ, մեկ՝ նվազում: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ առավելագույն աճն արձանագրվել է 2011 թվականին (+48.4%), իսկ նվազումը՝ 2006 թվականին (-23.3%):

Կրիմինալոգիական բնութագրի առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև կողոպուտները (այդ թվում՝ բռնությամբ զուգորդված) կատարելու վայրի վերաբերյալ տեղեկությունները (տե՛ս աղյուսակ 5-ը):

**Աղյուսակ 5**

**ՀՀ-ում կատարված կողոպուտների բաշխվածությունն ըստ հանցանքը կատարելու վայրի**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
<b>Ընդամենը կողոպուտներ</b>	<b>114</b>	<b>161</b>	<b>171</b>	<b>123</b>	<b>224</b>	<b>265</b>	<b>249</b>
Փողոց, պուրակ, այգի	54	77	76	44	108	157	147
Ռեստորան, բար, սրճարան, դիսկոտեկ	0	0	1	0	1	0	0
Շենքի մուտք, նկուղ	9	4	10	5	4	12	12
Բնակարան, առանձնատուն, ամառանոց	4	12	15	16	15	24	22
Ավտոմեքենա	2	1	1	4	8	9	1
Տեղեկությունները բացակայում են	45	67	68	54	88	63	67

Ներկայացված աղյուսակից կարելի է հետևություն անել, որ կողոպուտների մեծամասնությունը, ի տարբերություն ավագակությունների, կատարվում են փողոցներում, պուրակներում կամ այգիներում: Այսպես, 2004թ. նշված վայրերում կատարվել են կողոպուտների 47%-ը, 2005թ.՝ 48%-ը, 2006թ.՝ 44%-ը, 2007թ.՝ 36%-ը, 2008թ.՝ 48%-ը, 2009թ.՝ 59%-ը և 2010թ.՝ 59%-ը: Նույն աղյուսակից հետևում է նաև, որ կողոպուտների վերը նշված վայրերին հաջորդում են բնակարանները, առանձնատները կամ ամառանոցները: Մասնավորապես, 2004թ. այդ վայրերում կատարվել են կողոպուտների 3.5%-ը, 2005թ.՝ 7.5%-ը, 2006թ.՝ 8.2%-ը,

2007թ.՝ 12.2%-ը, 2008թ.՝ 6.7%-ը, 2009թ.՝ 9.1%-ը և 2010թ.՝ 8.8%-ը: Իսկ քննարկվող հանցագործությունների առավել տարածված այլ վայրերը հաջորդաբար դասակարգվում են հետևյալ կերպ. շենքի մուտք, նկուղ՝ 4.3%, ավտոմեքենա՝ 2.1% և ռեստորան, բար, սրճարան, դիսկոտեկ՝ 0.2%: Այս առումով հարկ ենք համարում նշել նաև, որ կողոպուտները, ինչպես և ավագակությունները, ավելի հաճախ կատարվում են քաղաքներում և քաղաքատիպ ավաններում:

Հանցագործության կատարման ժամանակի առումով ՀՀ-ում կատարված կողոպուտները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով (տե՛ս աղյուսակ 6-ը):

**ՀՀ-ում կատարված կողոպուտների բաշխվածությունը ըստ հանցանքը կատարելու ժամանակի**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
<b>Ընդամենը կողոպուտներ</b>	<b>114</b>	<b>161</b>	<b>171</b>	<b>123</b>	<b>224</b>	<b>265</b>	<b>249</b>
ժամը՝ 05:00–09:00	4	5	5	8	13	5	7
ժամը՝ 09:00–16:00	23	41	46	25	75	96	99
ժամը՝ 16:00–22:00	53	51	66	38	70	87	68
ժամը՝ 22:00–05:00	17	34	31	30	30	34	28
տեղեկությունները բացակայում են	17	30	23	22	36	43	47

Նախ, կողոպուտների մեծամասնությունը կատարվում են երեկոյան ժամերին: Մասնավորապես, նշված հանցագործությունների երեկոյան ժամերին կատարված դեպքերը կազմում են կողոպուտների ընդհանուր թվի 33.1%-ը: Դրանց հաջորդում են ցերեկվա ժամերին կատարվածները, որոնց մասնաբաժինը բոլոր կողոպուտների կառուցվածքում կազմում է 31.0%: Նշված հանցագործությունների գիշերային ժամերին կատարված դեպքերը կազմում են կողոպուտների ընդհանուր թվի 16.1 %-ը, իսկ առավոտյան ժամերին կատարվածները՝ 3.6%-ը: Փաստորեն, կողոպուտների դեպքում ևս, ինչպես և ավագակությունների պարագայում էր, դեպքերի մեծամասնությունն են կազմում երեկոյան և գիշերային ժամերին կատարված հանցանքները, իսկ առավել փոքր մասնաբաժին ունեն առավոտյան ժամերին կատարվածները: Մնացած դեպքերում կողոպուտը կատարելու ժամի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են:

ՀՀ-ում 2004-2011 թթ. գրանցված հանցագործությունների ընդհանուր թվում շորթումների մասնաբաժինը միջին հաշվարկով կազմում է 0.16%, իսկ սեփականության դեմ ուղղվածների թվում՝ 0.40%: Սրանք նույնպես բավականին մտահոգիչ ցուցանիշներ են, հատկապես՝ հաշվի առնելով տվյալ հանցատեսակի հանրային բարձր վտանգավորությունը և լատենտայնության բարձր մակարդակը:

Բացի այդ, հանցավորության կառուցվածքում շորթումները, ինչպես և ավագակությունները, առավելագույն մասնաբաժինն ունեցել են 2008 թ.-ին (0.41%), իսկ նվազագույնը՝ 2011 թ.-ին (0.07%): Ընդ որում, բացարձակ թվերով ամենաշատ

շորթումները, ի տարբերություն ավագակությունների, գրանցվել են հենց 2008 թ.-ին:

Ինչ վերաբերում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում շորթումների մասնաբաժին, ապա պետք է նշել, որ այն, ինչպես և ընդհանուր հանցավորության կառուցվածքում տվյալ հանցագործության մասնաբաժինը, առավել մեծ է եղել 2008 թ.-ին (0.88%), իսկ առավել փոքր՝ 2011 թ.-ին (0.21%): Պատճառը տվյալ դեպքում ևս այն է, որ հենց 2011 թ.-ին է արձանագրվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների աննախադեպ աճ և շորթումների կտրուկ նվազում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում վերլուծության ենթարկել նաև շորթումների բնութագիրն ըստ հանցանքը կատարելու վայրի (**տե՛ս աղյուսակ 7-ը**):

Ներկայացված աղյուսակից կարելի է հետևություն անել, որ շորթումների մեծամասնությունը, ինչպես և կողոպուտների, կատարվում են հասարակական վայրերում (պուրակներում, այգիներում, փողոցներում): Այսպես, 2004թ. նշված վայրերում կատարվել է շորթումների 41.7%-ը, 2005թ.՝ 26.7%-ը, 2006թ.՝ 25.0%-ը, 2007թ.՝ 36.8%-ը, 2008թ.՝ 36.9%-ը, 2009թ.՝ 33.3%-ը, 2010թ.՝ 36.4%-ը: Նույն աղյուսակից հետևում է նաև, որ շորթումների վերը նշված վայրերին հաջորդում են բնակարանները, առանձնատները, ամառանոցները: Մասնավորապես, նշված ժամանակահատվածում այդ վայրերում միջին հաշվով կատարվել են շորթումների 22.6%-ը: Իսկ քննարկվող հանցագործությունների առավել տարածված այլ վայրերն են ռեստորանները, բարերը, սրճարանները և դիսկո-

**ՀՀ-ում կատարված շորթումների բաշխվածությունն ըստ հանցանքը կատարելու վայրի**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
<b>Ընդամենը կողոպուտներ</b>	<b>12</b>	<b>15</b>	<b>12</b>	<b>19</b>	<b>38</b>	<b>15</b>	<b>22</b>
Փողոց, պուրակ, այգի	5	4	3	7	14	5	8
Ռեստորան, բար, սրճարան, դիսկոտեկ	2	1	2	2	7	2	4
Շենքի մուտք, նկուղ	0	0	0	0	0	0	0
Բնակարան, առանձնատուն, ամառանոց	3	5	1	4	8	3	6
Ավտոմեքենա	0	0	0	0	0	0	0
Տեղեկությունները բացակայում են	2	5	6	6	9	5	4

տեկները, որտեղ կատարվել են շորթումների 15.04%-ը: Ուշագրավ է, որ շենքերի մուտքերում, նկուղներում և ավտոմեքենաներում շորթման որևէ դեպք, ի տարբերություն ավազակությունների և կողոպուտների, չի արձանագրվել:

Հարկ ենք համարում նշել նաև, որ շորթումներն էլ, ինչպես և ավազակություններն ու կողոպուտները, գլխավորապես կատարվում են քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, ինչը, թերևս, նույնպես պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրի ունևոր բնակչության մեծ մասը կենտրոնացած է հենց նմանատիպ վայրերում:

ՀՀ-ում շորթումների կատարման ժամանակի վերաբերյալ ցուցանիշների մեր ուսումնասիրության արդյունքում (**տե՛ս աղյուսակ 8-ը**) բացահայտվել են հետևյալ առանձնահատկությունները.

Նախ, շորթումների մեծամասնությունը կատարվում են ցերեկային և գիշերային ժամերին: Մասնավորապես, նշված հանցագործությունների այդ ժամերին կատարված դեպքերը կազմում են շորթումների ընդհանուր թվի 27.1-ական տոկոսը: Այսինքն, ցերեկային և գիշերային ժամերին կատարված շորթումներն ընդհանուր առմամբ կազմում են նշված հանցագործությունների ընդհանուր թվի 54.2%-ը: Դրանց հաջորդում են երեկոյան ժամերին կատարվածները, որոնք կազմում են շորթումների ընդհանուր թվի 25.6%-ը: Իսկ քննարկվող հանցագործությունների կառուցվածքում առավել փոքր մասնաբաժինն ունեն առավտյան ժամերին կատարվածները՝ 12.0%:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ շորթումների որոշ դեպքերում սպառնալիքներով կամ բռնության

**ՀՀ-ում կատարված շորթումների բաշխվածությունն ըստ հանցանքը կատարելու ժամանակի**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
<b>Ընդամենը կողոպուտներ</b>	<b>12</b>	<b>15</b>	<b>12</b>	<b>19</b>	<b>38</b>	<b>15</b>	<b>22</b>
Ժամը՝ 05:00–09:00	2	1	2	3	5	2	1
Ժամը՝ 09:00–16:00	3	3	3	4	12	3	8
Ժամը՝ 16:00–22:00	3	5	1	5	9	4	7
Ժամը՝ 22:00–05:00	3	5	4	6	9	5	3
տեղեկությունները բացակայում են	1	1	2	1	3	1	3

գործադրմամբ ուղեկցվող գույքային պահանջները զուգորդվում են զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաներ գործադրելով (**տե՛ս աղյուսակ 9-ը**): Ու, թեև, շորթումների կառուցվածքում դրանք կազմում են ընդամենը 3.8%, սակայն նման

դեպքերը վկայում են քննարկվող հանցագործության առավել վտանգավոր տվյալ տեսակի մտահոգիչ միտումների մասին:

Ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ շորթումների 2.3%-ը կատարվել են հրազենով, իսկ 1.5%-ը՝ կենցաղային

նշանակության՝ ջարդող, կտրող, ծակող տարբեր առարկաներ գործադրելով:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում 2004-2011 թթ. տրանսպորտային միջոցն առանց հափշտակելու նպատակի փախցնելու գրանցված բոլոր դեպքերին, ապա պետք է նշել,

որ ընդհանուր հանցավորության կառուցվածքում դրանց մասնաբաժինը միջին հաշվարկով կազմում է 0.78%: Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվում այն կազմում է 1.99% (**տե՛ս աղյուսակ 1-ը**): Այսինքն, տվյալ հանցա-

Աղյուսակ 9

**ՀՀ-ում կատարված շորթումների բաշխվածությունն ըստ հանցագործության գործիքի**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	Ընդամենը (%)
<b>Ընդամենը ավազակություններ</b>	<b>12</b>	<b>15</b>	<b>12</b>	<b>19</b>	<b>38</b>	<b>15</b>	<b>22</b>	<b>133 (100)</b>
հրազենով	0	1	1	1	0	0	0	3 (2.3)
սառը զենքով	0	0	0	0	0	0	0	0 (0.0)
զազային, օդաճնշ., նետողակ. պայթուցիկ նյութ., սարքերով	0	0	0	0	0	0	0	0 (0.0)
ջարդող, կտրող, ծակող առարկ.	0	0	1	1	0	0	1	2 (1.5)
առանց զենքի գործադրման	12	14	10	18	38	15	21	128 (96.2)

գործության տեսակարար կշիռն ավելի փոքր է, քան ավազակություններինը և, հատկապես՝ կողոպուտներինը, բայց շուրջ հինգ անգամ ավելի մեծ, քան շորթումներինը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ վերոհիշյալ դեպքերի վերաբերյալ հարուցվող քրեական գործերի մեծամասնությունը հետազայում կարճվել են տուժողի հետ հաշտվելու հիմքով: Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183 հոդվածի համաձայն, ՀՀ քրեական օրենսգրքի 183 հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դասվում է այն հանցագործությունների շարքը, որոնց վերաբերյալ քրեական գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, իսկ կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Ընդ որում, հաշտությունը թույլատրվում է մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալը: Այս կապակցությամբ իրավակիրառական պրակտիկայի մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նմանատիպ քրեական գործերը, որպես կանոն, կարճվում են մինչդատական փուլերում: Հավանաբար հենց դա է պատճառը, որ տվյալ հանցագործության վերաբերյալ հարուցված ոչ բոլոր քրեական գործերն են հասնում դատարան և նման հան-

ցանքներ կատարած ոչ բոլոր անձինք են ենթարկվում քրեական պատասխանատվության:

Այս առումով, սակայն, լուրջ մտահոգության տեղիք են տալիս վիճակագրական այն ցուցանիշները, որոնք վերաբերում են տրանսպորտային միջոցն առանց հափշտակելու նպատակի փախցնելու բռնությամբ զուգորդված դեպքերին, որոնց պարագայում, արդեն, քրեական գործ կարող է հարուցվել նաև առանց տուժողի բողոքի (**տե՛ս աղյուսակ 10-ը**):

Ներկայացված աղյուսակից հետևում է, որ առանց հափշտակելու նպատակի տրանսպորտային միջոցին ապօրինաբար տիրանալու գրանցված բոլոր դեպքերի կառուցվածքում դրանց՝ բռնությամբ զուգորդված դեպքերը կազմում են 3.72%: Ընդ որում, առավել հաճախ հանցավորները կիրառում են կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն կամ դրա գործադրման սպառնալիք: Մասնավորապես, առանց հափշտակելու նպատակի տրանսպորտային միջոց փախցնելու կառուցվածքում այդ հանցանքը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն կամ դրա գործադրման սպառնալիք կիրառելով կատարելու դեպքերի մասնաբաժինը 0.69% է, իսկ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն կամ դրա գործադրման

**Առանց հափշտակելու նպատակի տրանսպորտային միջոցին ապօրինաբար տիրանալու դեպքերի շարժընթացը 33-ում 2004-2011թթ.**

Տարեթիվ Ընդամենը	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Զուգ. կյանքի կամ առ. համար ոչ վտ. բռն. կամ դրա սպառնալիքով դրանցից՝ ք. երևանում	2	2	0	0	0	0	0	0
Զուգ. կյանքի կամ առ. համար վտ. բռն. կամ դրա սպառնալիքով դրանցից՝ ք. երևանում	6	1	5	2	2	2	4	0
	4	1	3	0	2	2	2	0

սպառնալիք կիրառելով կատարելու դեպքերինը՝ 3.03%:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ վերը նշված հանցավոր արարքները գրեթե միշտ կատարվում են փողոցներում, շենքերի բակերում կամ այգիների, պուրակների, հանրախանութների մոտակա տարածքներում, հիմնականում՝ երեկոյան և գիշերային ժամերին: Բացի այդ, առանց հափշտակելու նպատակի տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերը, ինչպես և սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցավոր այլ արարքները, մեծ մասամբ կատարվում են քաղաքներում և քաղաքատիպ ավաններում: Ընդ որում, դրանց՝ բռնությամբ զուգորդված լինելու դեպքերի 60%-ից ավելին տեղի են ունենում Երևան քաղաքում:

**Ամփոփելով ասվածը՝ պետք է նշել, որ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների վերոհիշյալ որակական**

**և քանակական ցուցանիշները նախ և առաջ պայմանավորված է դրանց պաշտոնական գրանցման գործընթացով: Այլ կերպ ասած, քննարկվող հանցագործությունների՝ պաշտոնական վիճակագրությանն անհայտ մնացած (լատենտային) մասը ներկայացված թվային տվյալներում չի արտացոլվել: Մինչդեռ մեր հետազոտությունները ցույց են տվել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում բավականին բարձր է ոչ միայն ավազակությունների, այլև շորթումների և բռնությամբ զուգորդված կոռուպցիոնների ու տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերի լատենտայնության մակարդակը: Իրականում դրանք բոլորն էլ գրանցվում են շատ ավելի հազվադեպ, քան փաստացի կատարվում են: Ուստի, համապատասխան վերլուծություններ իրականացնելիս անհրաժեշտ է միշտ հաշվի առնել նաև տվյալ համգամանքը:**



# ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ՝ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ դատական դեպարտամենտի  
կազմակերպարական վարչության մասնագետ

*Հասարակական հարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորման նպատակին հասնել հնարավոր է ոչ միայն գործող օրենսդրության կատարելագործման ճանապարհով, այլ նաև իրավական համակարգում գոյություն ունեցող կառուցվածքային տարրերի մասնավորապես՝ իրավական ինստիտուտների փոխկապակցվածության որակի բարձրացման ճանապարհով:*

ՀՀ Քրեական օրենսգրքում առկա են նորմեր, որոնք կարգավորում են հատուկ հասարակական հարաբերություններ՝ հանցագործություն կատարելուց հետո անձի կողմից դրսևորած ոչ հանցավոր, պոզիտիվ վարքագծի վերաբերյալ: Սույն նորմերը օրենսդրի կողմից զետեղված են ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի 11-րդ գլխում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված առանձին հոդվածներում (ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ, 200-րդ, 205-րդ, 217-րդ, 218-րդ, 223-րդ, 235-րդ, 236-րդ, 299-րդ, 302-րդ, 312-րդ, 3121-րդ, 3122-րդ, 3271-րդ, 3272-րդ, 339-րդ, 355-րդ, 361-րդ և 362-րդ հոդվածներ): Վկայակոչած նորմերը իրենց իրավական բնույթով կարգավորում են հատուկ տեսակի հարաբերություններ և հանդիսանում են խրախուսական նորմեր: Խրախուսանքի համար անհրաժեշտ է հանցագործություն կատարելուց հետո մեղադրյալի կողմից դրական վարքագիծ դրսևորելը: Ինչպես նշում է **Վ.Մ. Գալկինը**, խրախուսվող նորմերը «սահմանում են

իրավական ոչ պարտադիր, բայց միևնույն ժամանակ սոցիալապես ցանկալի վարքագիծ. որոշ դեպքերում իրավունք ստեղծող, մյուս դեպքերում համապատասխան մարմինների կողմից պարտադիր կիրառվող խրախուսանք»<sup>1</sup>:

Խրախուսական նորմերը իրավական այնպիսի միջոցներ են, որոնք ապահովում են մարդկային կյանքում բարոյական և նյութական հանրային դրական վարքագիծը:

Քրեական իրավունքում քննարկվող նորմերի ամբողջությունը կազմում է քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը:

Մի կողմից քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը վերացնում է բոլոր բացասական հետևանքները հանցագործություն կատարող անձի համար, մյուս կողմից միտված է կանխել հանցագործությունները և խթանել մեղավոր անձանց կողմից հանցագործություն կատարելուց հետո որոշակի դրական վարքագծի դրսևորումը, որը համապատասխանում է քրեական արդարադատու-

<sup>1</sup> Стен Галкин В.М. Система поощрение в советском уголовном праве //Советское государство и право, 1977, N 2, էջ 92:

թյան նպատակներին<sup>2</sup>:

Ինչպես նշում է **Ա.Վ. Ենդոլցևան**<sup>3</sup>՝ քրեական պատասխանատվության ինստիտուտի սոցիալական նշանակությունը հանդիսանում է պետության իրավունքի իրականացումը՝ հանցագործություն կատարող անձին ներում շնորհելը, երբ դատարանն իր որոշմամբ հրաժարվում է պատժից, դատապարտումից: Մինևույն ժամանակ պետությունն ընդհանուր կարգով հրաժարվում է նույն անձի հանդեպ պետական և հանրային այլ հարկադրանքի

զալիս որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերից մեկը: Այն, որպես կանոն, վկայում է անձի վճռակալության մասին, որ նա ապագայում հանցագործություն չի կատարի: Ինչպես նաև հանցագործություններ կատարած անձի հետ փոխզիջման (կոմպրոմիսի) նպատակն ուղղված է ապագայում ծանր հանցագործությունները կանխելուն (որպես օրինակ քրեական օրենսգրքի Յատուկ մասում սահմանված խրախուսվող նորմերը)<sup>4</sup>:

Վերոնշյալ հարցի շուրջ **Լ.Զ Թադևոսյանը** նշում է, որ քրեական իրավունքում փոխզիջման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ քրեական հարկադրանքի սպառնալիքը միավորվում է հանցանք կատարած անձին այլ ճանապարհ

**«...Խրախուսական նորմերը իրավական այնպիսի միջոցներ են, որոնք ապահովում են մարդկային կյանքում բարոյական և նյութական հանրային դրական վարքագիծը...»**

միջոցներ կիրառելուց: Պետությունը, ներելով և վստահելով հանցագործություն կատարած անձին, ակնկալում է, որ ապագայում վերջինս կդրսևորի օրինական վարքագիծ: Քրեական պատասխանատվությունից ազատելը վկայում է անձի հանդեպ հանդուրժողականություն ցուցաբերելու և առանց պատժի կիրառման քրեական արդարադատության նպատակներին հնարավորինս հասնելու մասին<sup>5</sup>:

մատնանշելու նպատակի հետ՝ հնարավորություն ընձեռելով նրան իր կատարածի համար մեղքը քավել առանց պատժի և դրա հետ կապված սահմանափակումներին<sup>6</sup>:

Քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը հանդիսանում է հասարակության զարգացման սոցիալ-տնտեսական պայմանի և մարդկային գիտակցության զործունեության արդյունք: Իրավական ինստիտուտների ձևավորման և զարգացման, նրանց բովանդակության, կառուցվածքի, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մեթոդի վրա զգալի ազդեցություն են ունենում սոցիալական իրականությունում առաջ քաշված բազմազան գործոններ՝

Քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի սոցիալական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ դրա նորմերն ունեն կանխարգելիչ նշանակություն: Հանցագործություն կատարած անձի կողմից դրսևորած պոզիտիվ վարքագիծը շատ դեպքերում հանդես է

<sup>2</sup> Տե՛ս Кузнецова Н.Ф. Профилактическая функция уголовного закона//Уголовное право, 1998, N 1. էջ 11-20:

<sup>3</sup> Տե՛ս Ендольцева А.В. Институт освобождения от уголовной ответственности: теоретические, законодательные и правоприменительные проблемы://дисс. докт. юрид. наук. Москва 2005, էջ 72-73:

<sup>4</sup> Տե՛ս Аликперов Х.Д. Виды норм уголовного законодательства, допускающих компромисс в борьбе с преступностью. Баку-Элм, 1992; Аликперов Х.Д. Проблемы дальнейшего совершенствования уголовно-правовых норм, допускающих компромисс в борьбе с преступностью:

<sup>5</sup> Տե՛ս Тадевосян Л.З. Проблемы ответственности за неоконченную преступную деятельность по уголовному законодательству Республики Армения. Дисс. докт. юрид. наук. Москва, 2009:

պետական շահը, պետությունում քաղաքական ուժերի հարաբերակցությունը և կարգավորումը, իրավագիտակցության հոգեբանական և բարոյական ասպեկտները և այլն: Այդ իսկ պատճառով պետության զարգացման տարբեր փուլերում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի դերի ու էության հասկացությունը տարբեր է, որը, իհարկե, իր արտացոլումն է ստանում օրենսդրությունում:

**«...Հասարակական հարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորման նպատակին հասնել հնարավոր է նաև իրավական համակարգում գոյություն ունեցող կառուցվածքային տարրերի փոխկապակցվածության բարձրացմամբ...»**

Այսպիսով, մեր կարծիքով, ուսումնասիրվող ինքնուրույն ինստիտուտն իր բոլոր հատկանիշներով տարբերվում է գոյություն ունեցող

մյուս իրավական ինստիտուտներից:

Օրենսդիրը մի դեպքում ընդհանրապես բացառում է հանցավորությունը և արարքի պատժելիությունը (որի կապակցությամբ անձը չի ենթարկվում քրեական պատասխանատվության), մյուս դեպքում էլ նպատակահարմար չի գտնում անձին ենթարկել քրեական պատասխանատվության դրանով իսկ վերջինիս ազատելով քրեական պատասխանատվությունից:

Քրեական օրենսգրքում սահմանված

սոցիալական և իրավական բնույթի հանգամանքների առկայությունը հնարավորություն է ընձեռնում գործողություն (անգործություն) իրականացրած անձի դեմ, ում արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված հանցագործության բոլոր հատկանիշները, չկիրառել քրեաիրավական հարկադրանքի միջոցներ: Այսպիսով, վերոնշյալ մոտեցումը արդյունավետ է ուսումնասիրել

երկու խումբ հանգամանքների միջոցով՝ 1) քրեական արարքը բացառող հանգամանքներ, որոնց դեպքում անձը չի ենթարկվում քրեական պատասխանատվության (օրինակ՝ ա) քրեական օրենքի ընդունումը և օրինական ուժի մեջ մտնելը, վերացնում է հանցավորությունը և արարքի պատժելիությունը<sup>6</sup>, բ) անձեռնմխելիության առկայությունը, գ) քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքը<sup>7</sup>, դ) մտավոր զարգաց-

<sup>6</sup> ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված է, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: Սահմանադրական այս դրույթն ավելի կոնկրետացված է ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ «արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակը այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»: Այսպիսով՝ քրեական նոր օրենքին հետադարձ ուժ է տրվում երեք դեպքում՝ 1) եթե նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացումը), 2) եթե նոր օրենքը մեղմացնում է պատիժը, 3) եթե նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

<sup>7</sup> Անձին քրեական պատասխանատվության ենթարկել հնարավոր է այն ժամանակ, երբ վերջինս զիտակցում է իր կատարած արարքի հանրային վտանգավորությունը և սոցիալական բնույթը: Քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի սահմանման անրաժեշտությունը կապված է անձի կողմից իր վարքագծի բնույթն ու սոցիալական նշանակությունը հասկանալու, իր ցանկությունները և մղումները հասարակական պահանջներին, վարքագծի կանոններին համադրելու և քրեական պատասխանատվության իմաստը համակողմանի ընկալելու ընդունակության հետ: Նման ընդունակությունները ծագում են ոչ թե ծննդյան պահից, այլ զգալիորեն ավելի ուշ՝ մարդու սոցիալական և կենսաբանական զարգացմանը զուգընթաց, երբ ձևավորվում է որոշակի իրավական գիտակցություն: Բնականաբար միայն այդ տարիքի հասնելուց հետո անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայմաններից մեկը օրենքով սահմանված որոշակի տարիքի հասած լինելն է:

**ման մեջ անձի հետ մնալը<sup>8</sup> ե) անմեղսունակությունը<sup>9</sup>, գ) առանց մեղքի վնաս պատճառելը<sup>10</sup> է) հանցագործությունից կանոնադրված հրաժարվելը<sup>11</sup>, ը) ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ գլխում նախատեսված հանգամանքներ:**

Այսպիսով, մենք ուսումնասիրեցինք առաջին խմբում նախատեսված հանգամանքները, որոնց առկայության դեպքում չեն կիրառվում քրեաիրավական հարկադրանքի միջոցները: Հարկ ենք համարում նշել, որ այդպիսի հանգամանքները միատեսակ չեն իրենց իրավական և սոցիալական բնույթով: Նրանցից ոմանք չեզոքացնում են արարքի հակահրավական կամ հակաօրինականության բնույթը (օրինակ՝

անմեղսունակությունը, անձեռնմխելիության առկայությունը, հանցագործությունից կանոնադրված հրաժարվելը, հանցագործություն կատարման ժամանակ սահմանված տարիքին չհասնելը): Միաժամանակ, շատ դեպքերում օրենսդիրը համապատասխան նորմերում օգտագործում է «անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության» օրենսդրական ձևակերպումը: Ուսումնասիրվող խմբում ընդգրկված մյուս հանգամանքները չեզոքացնում են արարքի հանրային վտանգավորությունը և որպես հետևանք՝ նաև հակաօրինական բնույթը (օրինակ՝ արարքի նվազ կարևորությունը), իսկ մյուս երրորդ հանգամանքները վկայում են անձի արարքի հասարա-

<sup>8</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է յուրօրինակ «տարիքային անմեղսունակության» մասին հիմք: Տարիքային անմեղսունակությունը հանդիսանում է քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք: Հնարավոր են դեպքեր, երբ անձի 16 տարին լրացել է նախքան հանցանք կատարելը, բայց մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով վերջինս շրջապատող իրականությունը ընկալում և գնահատում է ինչպես երեխա: Նման անձինք ունակ չեն տարբերելու սովորական չարությունը և հանցանքը: Այդ պատճառով, նրանց քրեական պատասխանատվության ենթարկելը չի համապատասխանի արդարության և մարդասիրության սկզբունքներին:

<sup>9</sup> Քրեական իրավունքը հիմնվում է ցանկացած ֆիզիկական անձի իրավունակ և գործունակ (այսինքն՝ ենթակա է քրեական պատասխանատվության), կանխավարկածի վրա, քանի դեռ հակառակը չի ապացուցվել, ուստի օրենսսրդի ուշադրությունը կենտրոնացած է հարցի բացասական կողմի՝ անմեղսունակության հասկացության և նրա չափանիշների սահմանման վրա: Մեղսունակությունը անձի այն հոգեբանական վիճակն է, երբ նա սոցիալ-հոգեկան առողջության մակարդակով ընդունակ է հանցագործության պահին հաշիվ տալ իր գործողության (անգործության) համար ու ղեկավարել այն և որպես հետևանք՝ քրեական պատասխանատվություն ու պատիժ կրել: Անմեղսունակության հասկացությունը բացահայտվում է երկու չափանիշներով՝ բժշկական (կենսաբանական, հոգեբուժական) և իրավաբանական (հոգեբանական): Անձի անմեղսունակությունը կարող է սահմանվել միայն այս երկու չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ նրանցից յուրաքանչյուրն առանձին կարող է բնութագրել հանցագործության նկատմամբ անձի հոգեբանական վերաբերմունքը՝ կամ բժշկական, կամ միայն իրավաբանական տեսանկյունից:

<sup>10</sup> Առանց մեղքի վնաս պատճառելն այն է, որ անձը չի գիտակցում և տվյալ իրադարձության մեջ չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության) հանրային վտանգավորությունը կամ չի նախատեսել վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և տվյալ իրադրության մեջ պարտավոր չէր կամ չէր կարող նախատեսել:

<sup>11</sup> Հանցագործությունից կանոնադրված հրաժարվելու օրենսդրական հիմքի ձևակերպման նպատակը հանցագործությունների կանխումն է: Այսինքն հանցագործությունից կանոնադրված հրաժարվելը խթանում է անձին՝ հետ կանգնելու իր հանցավոր նպատակի իրագործումից՝ հանցագործությունն ավարտին հասցնելուց: ՀՀ նախկին քրեական օրենսգրքում կանոնադրված հրաժարման եղանակը, փաստորեն, բացահայտված չէր: Նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածում նշված էր, որ այն անձը, որը կանոնադրված է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, քրեական պատասխանատվության ենթակա է միայն այն դեպքում, երբ նրա կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում:

կության համար օգտակարության մասին (օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանությունը, ծայրահեղ անհրաժեշտությունը, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը և այլն): Նման դեպքերում, օրենսդիր մարմինը պատահական չէ, որ օգտագործում է **«հանցագործություն չի համարվում...»** օրենսդրական ձևակերպումը:

**«...Քրեական պատասխանատվության ինստիտուտի սոցիալական նշանակությունը հանդիսանում է պետության իրավունքի իրականացումը՝ հանցագործություն կատարող անձին ներում շնորհելը, երբ դատարանն իր որոշմամբ հրաժարվում է պատժից, դատասպարտումից...»**

Վերոնշյալ հանգամանքների իրավական հետևանքը հանդիսանում է արարքում հանցակազմի բացակայությունը կամ այն հանցագործություն չորակելը (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ գլխում նախատեսված հանգամանքներ): Քննարկվող հանգամանքները սկզբունքորեն տարբերվում են այն հանգամանքներից, որոնք նախատեսված են սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվող երկրորդ խմբում: Այսպիսով, քննարկվող հանգամանքների հաստատման դեպքում քրեական գործ հնարավոր չէ հարուցել, իսկ արդեն հարուցված քրեական գործը ենթակա է կարճման:

Սույն հոդվածում ուսումնասիրվող երկրորդ խմբում ընդգրկված հանգամանքների առկայության դեպքում չեն կիրառվում քրեաիրավական հարկադրանքի միջոցներ՝ հիմք ըն-

դունելով որոշ հանգամանքներ, որոնք հնարավորություն են ընձեռում հանցագործություն կատարած անձին **ազատվել քրեական պատասխանատվությունից**: Քննարկվող հանգամանքների իրավական և սոցիալական բնույթը ձևավորվում է նրանով, որ որոշումը կայացվում է այն անձի նկատմամբ, որի կատարած արարքում առկա են հանցա-

կազմի բոլոր հատկանիշները, որոնք նախատեսված են քրեական օրենքով և որն էլ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է հանդիսանում նրան

քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է ինչպես պարտադիր, այնպես էլ ֆակուլտատիվ կարգով:

Ինչպես նշում են **Ն. Ե. Կոչիլովը և Յու. Մ. Տկաչևսկին**. «(...) շատ դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է իրավակիրառողների իրավունքը, այլ ոչ թե

**«...Քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի սոցիալական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ դրա նորմերն ունեն կանխարգելիչ նշանակություն...»**

պարտականությունը, եթե նույնիսկ մնան որոշում կայացնելու համար առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները»<sup>12</sup>:

<sup>12</sup> Стів Крылова Н.Е., Ткачевский Ю.М. Понятие и виды освобождения от уголовной ответственности. Курс уголовного права: В 5 т. / Под ред. Н.Ф. Кузнецовой и И.М. Тяжковой. М., 2002, Т. 2. Общая часть: Учение о наказании, էջ 168:

**Ա.Վ. Ենդոլցևան,** նշում, է որ «(...) քրեաիրավական և քրեադատավարական նորմերի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում եզրահանգել, որ շատ դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելը և քրեական հետապնդումը դադարեցնելը հանդիսանում է իրավասու պետական մարմինների իրավունքը, եթե նույնիսկ առկա են բոլոր անհրաժեշտ ձևական պայմանները»<sup>13</sup>:

Իրավաբանական գրականությունում

**«...Հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է ինչպես պարտադիր, այնպես էլ ֆակուլտատիվ կարգով...»**

շատ հաճախ նշվում է, որ բոլոր պայմանների առկայության դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը պետք է սահմանվի որպես պարտադիր պահանջ<sup>14</sup>: Ներկայումս ժամանակակից գիտնականները կողմնակից են հրաժարվել իրավախախտողի նկատմամբ հայեցողական մոտեցումից:

Չհամաձայնվելով վերոնշյալ մոտեցման հետ՝ **Լ.Վ. Գոլովկոն** նշում է, որ «(...)այդ պատճառով, հանրության դեմ անձի կատարած արարքի վտանգավորության աստիճանը, ինչպես նաև կատարած խախտումների բնույթը որոշվում է միայն գործի կոնկրետ փաստական հանգամանքներից ելնելով, այլ ոչ միայն արարքի իրավական որակումից: Օրենսդիրը, հաշվի առնելով քրեական օրենսգրքում սահ-

մանված հանցակազմերի տեսակները և առանձնահատկությունները, պետական իրավասու մարմիններին գնահատման իրավունք է ընձեռում քրեական գործը կարճելու նպատակահարմարության հարցում՝ չպարտադրելով մեխանիկորեն նրանց ազատել քրեական պատասխանատվությունից»<sup>15</sup>:

Իհարկե, իրավունքում նպատակահարմարությունից ամբողջովին հնարավոր չէ հրաժարվել: Սակայն վաղուց գիտականները սահմանել են, որ իրավունքում բարձրագույն նպատակահարմարությունը հանդիսանում է օրինականությունը<sup>16</sup>:

Մեր կարծիքով, ուսումնասիրությունը առավել արդյունավետ

դարձնելու նպատակով, անհրաժեշտ է պարզել, թե **ՀՀ քրեական օրենսդրությունում քրեական պատասխանատվությունից ազատելը իրավակիրառող մարմնի իրավունքն է, թե՞ պարտականությունը:** Նպատակահարմար ենք համարում ուսումնասիրությունն իրականացնել քննարկվող հիմքերը **2 խմբերի դասակարգելու միջոցով՝ 1. հանգամանքներ, որոնց առկայության դեպքում հանցագործություն կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, 2. հանգամանքներ, որոնց առկայության դեպքում հանցագործություն կատարած անձը, պետք է ազատվի է քրեական պատասխանատվությունից:** Հարկ է նաև նշել, որ վերոնշյալ հիմքերը սահմանող նորմերը նախա-

<sup>13</sup> Տե՛ս Энциклопедия уголовного права. Том 10. Освобождение от уголовной ответственности и наказания. Издание профессора Малинина, СПб ГКА, СПб, 2008, էջ 164:

<sup>14</sup> Տե՛ս Дубинин Т.Т. Основания освобождения от уголовной ответственности, էջ 84-85:

<sup>15</sup> Տե՛ս Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном праве. СПб., 2002, էջ 270:

<sup>16</sup> Տե՛ս Энциклопедия уголовного права. Том 10. Освобождение от уголовной ответственности и наказания. Издание профессора Малинина, СПб ГКА, СПб, 2008, էջ 168:

տեսված են ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես Ընդհանուր, այնպես էլ Հատուկ մասերում: **Առաջին<sup>17</sup>**՝ հանգամանքներ, որոնց առկայության դեպքում հանցագործություն կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից.

**1) գործուն զղջալու դեպքում<sup>17</sup>** (ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդված),

**2) տուժողի հետ հաշտվելու դեպքում** (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդված),

**3) իրադրության փոփոխման դեպքում<sup>18</sup>** (ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդված),

**4) համաներման ակտի ընդունման**

*«...Իրավունքում բարձրագույն նպատակահարմարությունը հանդիսանում է օրինականությունը...»*

<sup>17</sup>Քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զղջալու դեպքում կիրառվում է այն անձի նկատմամբ, որի արարքում առկա են հանցագործությամբ նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Ինչպես արդեն նշել ենք, մի դեպքում վարույթ իրականացնող մարմինը պետք է ազատի քրեական պատասխանատվությունից (օրինակ՝ վաղեմության ժամկետն ապագայում հետևանքով), իսկ մյուս դեպքում վերոնշյալ մարմինը կարող է ազատել քրեական պատասխանատվությունից (գործուն զղջալու դեպքում): Որոշ գիտնականներ կարծում են, որ գործուն զղջալու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է որպես, «խրախուսական» նորմ, իսկ ոմանք համարում են այն «խթանող» նորմ: Մասնավորապես, Լ.Չ. Թադևոսյանը նշում է, որ գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու նորմը թեև իր մեջ պարունակում է խրախուսական տարրեր, ոչ այնքան խրախուսում է հանցագործություն կատարած անձին, որքան ներում է վերջինիս՝ կապված նրա կողմից հանցագործություն կատարելուց հետո դրսևորած դրական վարքագծի հետ, կամ ընդհանրապես նրան ազատում է քրեական պատասխանատվությունից, կամ վերջինիս նման վարքագիծը դիտում է որպես պատիժը մեղմացնող հանգամանք (տես՝ ավելին Թադևոսյան Լ.Չ. Проблемы ответственности за неоконченную преступную деятельность по уголовному законодательству Республики Армения. Дисс. докт. юрид. наук. Москва, 2009): Լ.Չ. Թադևոսյանը բարձրացնելով քննարկվող ինստիտուտի առանձնահատկությունները իր աշխատությունում նշում է նաև, որ գործուն զղջալու նոր հայեցակարգի օրենսդրական ամրապնդումը կայանում է նրանում, որ ներկայումս սույն հասկացությունը հանդիսանում ոչ միայն քրեական օրենսգրքի Ընդհանուր այլ նաև Հատուկ մասի ինստիտուտ, որը կարող է կիրառվել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կատարման դեպքում և իրավակիրառ պրակտիկայում, պետությունը հայտնում է իր պատրաստականությունը փոխզիջման հարցում, ինչպես նաև ցանկություն է հայտնում խնայողաբար օգտագործել դատավարական և նյութական միջոցները՝ հանցագործության դեմ պայքարի գործում (տես՝ նույն տեղում Թադևոսյան Լ.Չ.): Այսպես, գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը փոխզիջման տեսակ է, որն արտահայտվում է պետության անունից՝ իրավակիրառ մարմինների և հանցագործություն կատարած անձի միջև:

<sup>18</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածը սահմանում է, որ առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց: Այսպիսով, քննարկվող հոդվածից պարզ է դառնում, որ օրենսդիրը նախատեսել է քրեական պատասխանատվությունից ազատելու երկու տեսակ՝ 1) իրադրության փոփոխման դեպքում անձը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց 2) իրադրության փոփոխման դեպքում անձի կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց: Միաժամանակ պետք է նշել, որ օրենսդիրը թույլատրում է քննարկվող նորմը կիրառել միայն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարված անձի նկատմամբ:

դեպքում<sup>19</sup> (ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված),

5) քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով<sup>20</sup> (ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդված),

6) դեպքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերում (ՀՀ քրեական օրենսգրքի 3271-րդ, 3272-րդ, 361-րդ և 362-րդ հոդվածներ):

**Երկրորդ՝** հանգամանքներ, որոնց առկայության դեպքում հանցագործություն

կատարած անձը, **պետք է ազատվի** է քրեական պատասխանատվությունից.

1) վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված),

2) դեպքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում (ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ, 200-րդ, 205-րդ, 217-րդ, 218-րդ, 223-րդ, 235-րդ, 236-րդ, 299-րդ, 302-րդ, 312-րդ, 312<sup>1</sup>-րդ, 312<sup>2</sup>-րդ, 327<sup>1</sup>-րդ, 327<sup>2</sup>-րդ<sup>21</sup>, 339-րդ, 355-րդ հոդվածներ):

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշա-

<sup>19</sup> Ա.Վ. Ենդոլցևան ըշում է, որ. համաներումը հանդիսանում է քրեական պատասխանատվությունից ազատելու յուրահատուկ հիմք: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում սահմանված նորմը ամրագրված է որպես ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) իրավունք: Սակայն, համաներման ակտերի մեջ իրենց կիրառումը հանդիսանում է իրավակիրառողի պարտականություն: Վերոնշյալ մոտեցումը հստակեցնելով՝ որոշ գիտնականներ ըշում են, որ քրեական պատասխանատվությունից ազատելու քննարկվող տեսակը իմպերատիվ է: Այսպիսով, որոշ պայմանների առկայության դեպքում համաներման ակտով քրեական պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է քննիչի, դատախազի և դատավորի պարտականությունը (տես՝ ավելին՝ Энциклопедия уголовного права. Том 10. Освобождение от уголовной ответственности и наказания. Издание профессора Малинина, СПб ГКА, СПб., 2008, էջ 164):

<sup>20</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ և միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի որ ուղղվելը հնարավոր է դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Քրեական իրավունքի տեսությունում, քրեական պատասխանատվությունից ազատելը բաժանվում են երկու խմբերի՝ պայմանական (ժամանակավոր) և անվերապահ (վերջնական): Քննարկվող քրեական պատասխանատվությունից ազատելու տեսակը վերաբերվում է պայմանական ազատման տեսակին: Պայմանական բնույթը արտահայտվում է անչափահասի նկատմամբ պարտադիր հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Նյութական իրավունքի տեսանկյունից նման տարանջատման հիմք է հանդիսանում, քրեական պատասխանատվությունից ազատված անձի վրա դնել կամ չդնել որոշակի պարտավորություններ: Նման դեպքում քրեական իրավունքի տեսությունում գոյություն ունեցող տարանջատումը արդարացված է:

<sup>21</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 327<sup>1</sup>-րդ և 327<sup>2</sup>-րդ հոդվածների 4-րդ մասերում սահմանված է, սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած այլընտրանքային աշխատանքային ծառայողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դրանք կատարել է հանգամանքների զուգորդման հետևանքով, կամ ազատվում է քրեական պատասխանատվությունի, եթե ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով ներկայացել է ծառայության վայր, իրավապահ կամ պետական իրավասու մարմիններ:

ՀՀ քրեական օրենսգրքի 327<sup>1</sup>-րդ և 327<sup>2</sup>-րդ հոդվածները վերբերվում են մեր կողմից ուսումնասիրված երկու ենթախմբերին՝ հանգամանքներ որոնց առկայության դեպքում կարող է ազատվել և ազատվում է քրեական պատասխանատվությունից, քանի որ քննարկվող հոդվածները իրենց բնույթով հանդիսանում են ինչպես ֆակուլտատիվ այնպես էլ իմպերատիվ: Այդ իսկ պատճառով, սույն հոդվածները ընդգրկվել են ուսումնասիրված երկու ենթախմբերում:



րադրյալը, կարող ենք եզրակացնել, որ հաշվի առնելով իրավական և սոցիալական բնույթի որոշակի հիմքեր՝ օրենսդիրը նախատեսում է մի շարք հանգամանքներ, որոնց առկայության դեպքում չեն կիրառվում քրեաիրավական հարկադրանքի միջոցներ: Նրանցից ոմանք բացառում են կա՛մ արարքի հակաօրինականությունը, կա՛մ հանրային վտանգավորությունը, կա՛մ երկուսը միաժամանակ, որի դեպքում անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, մյուսները հնարավորություն են ընձեռում հանցագործություն կատարած անձին ազատել քրեական պատասխանատվությունից:

Երկրորդ խմբում թվարկված հանգամանքները, որոնք նախատեսված են ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր, այնպես էլ Հատուկ մասում, իրենց բնույթով էապես տարբերվում են քննարկվող 1-ին խումբը կազմող հանգամանքներից, մասնավորապես նրանով, որ նրանք չեն բացառում ո՛չ հանրային վտանգավորությունը, ո՛չ էլ արարքի անօրինականությունը: Մեր կարծիքով, հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելն իրականացվում է հատուկ հիմքով՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու աննպատակահարմարությամբ, որտեղ քննարկվող հանգամանքները հնարավորություն են

ընձեռում հիմնավորել, որ անձը կորցրել է իր երբեմնի հանրային վտանգավորությունը և որի դեպքում նրա ուղղումը հնարավոր է առանց դատապարտելու (պետության հարկադրանքը՝ դատարանի մեղադրական դատավճռի ձևով) և պատժելու:

Ուսումնասիրված խմբերի շուրջ իրա-

**«... Քրեական իրավունքում քննարկվող նորմերի ամբողջությունը կազմում է քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը...»**

վական գրականությունում առկա են տարբեր մոտեցումներ՝ ներկայացված խմբերի մեջ այս կամ այն հանգամանքների ընդգրկման հարցում: Օրինակ՝ որոշ հեղինակներ կարծում են, որ հանցագործությունից կամովին իրաժարվելը հանդիսանում է այնպիսի հանգամանք, որի դեպքում բացառվում է արարքի հանրային վտանգավորությունը<sup>22</sup>:

Մյուսները առաջարկում են հանցագործությունից կամովին իրաժարվելը համարել քրեական պատասխանատվությունից ազատելու տեսակներից մեկը<sup>23</sup>:

Սույն հոդվածում մեր կողմից ուսումնասիրվող դասակարգումը առաջարկված է ներպետական քրեական օրենքի առանձնահատկությամբ պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով վերջինում սահմանված ձևակերպումները:

<sup>22</sup> Տե՛ս Слущкий И.И. Обстоятельства, исключющие уголовную ответственность. Изд. ЛГУ, 1956, СП; Научно-практический комментарий к Основам уголовного законодательства Союза ССР и союзных республик. Госюриздат, 1961, էջ 64:

<sup>23</sup> Տե՛ս օրինակ՝ Келина С.Г. Освобождение от уголовной ответственности как правовое последствие совершения преступления // Институт государства и права. Уголовное право: Новые идеи. М., 1994. էջ 77; Скорилкин Н.М. Добровольный отказ от преступления и его место в системе обстоятельств, освобождающих от уголовной ответственности: Дисс. канд. юрид. наук. М., 1998, էջ 63:

# ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՉԱՂՏՆԻՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

Վաչե ՍԻՄՈՆՅԱՆ

Յայցող

*Բանկային գաղտնիքի հարցը հանդիսանում է ժամանակակից բանկային և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության արդիական խնդիրներից մեկը: Դա պայմանավորված է նրանով, որ մի կողմից բանկերի հաճախորդների մեծամասնությունը հնարավորինս փորձում են գաղտնի պահել իրենց ֆինանսական հոսքերի և գործարքների մասին տեղեկությունները, մյուս կողմից պետական լիազոր մարմինները հանցագործությունները կանխելու, բացահայտելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար քայլեր են ձեռնարկում պարզեցնելու բանկային գաղտնիքի ձեռքբերման ընթացակարգերը:*

Առանձին իրավաբաններ գտնում են, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության ստացման ընթացակարգը պետք է ընդհանրապես դուրս բերել դատական վերահսկողության ոլորտից: Օրինակ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի բանկային գաղտնիքի մասին նախնական դատական վերահսկողության վերաբերյալ 22.10.2004թ. «Հայագրութանկի» գործով որոշումը, որտեղ արտահայտվել էր այն իրավական դիրքորոշումը համաձայն որի.

«ՀՀ Սահմանադրության 21 հոդվածը դատական վերահսկողության օբյեկտ է դիտում միայն բնակարանը: ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 46-րդ կետը սպառիչ սահմանել է «բնակարան» հասկացության օբյեկտները: Բանկը, կազմակերպությունները, ձեռնարկությունները, բացի ծառայողական կամ անձնական

աշխատասենյակներից, չեն կարող ընդգրկվել «բնակարան» հասկացության մեջ: Հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը իրենց վարույթում եղած գործերով իրավասու էին քրեադատավարական օրենքով սահմանված հիմքերով և կարգով բանկերում և այլ հիմնարկներում ու ձեռնարկություններում իր իսկ որոշմամբ կատարել ցանկացած քննչական գործողություն, այդ թվում՝ խուզարկություն և առգրավում... Միջդատական վարույթն իրականացնող մարմնին չպետք է խոչընդոտի նաև «ՀՀ բանկային գաղտնիքի մասին» օրենքի 10-րդ հոդվածում սահմանված «Բանկերը քրեական գործով մեղադրյալ ճանաչված անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետա-

պնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն խուզարկության մասին դատարանի որոշմամբ՝ ՀՀ քրեական դատավարության համապատասխան» դրույթը :

Նման պայմաններում վարույթ իրականացնող մարմինը խուզարկություն կատարելիս պետք է ղեկավարվի ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածով , ՀՀ քր. դատ. օրհ 1-ին հոդ. և 6-րդ հոդվածի 46-րդ կետով»:<sup>1</sup>

Թեև Պալատի որոշման մեջ առկա հիմնավորումը վերաբերվում էր «բնակարանի» քրեադատավարական հասկացությանը և առանց նախնական դատական վերահսկողության բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ձեռքբերումը բանկում իրականացված խուզարկության տեսանկյունից, այնուամենայնիվ որոշման մեջ ներկայացված իրավական տեսակետը ընդհանրապես բացառում էր դատական վերահսկողությունը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող միմիանների տրամադրելու նկատմամբ:

Սույն տեսակետի կողմնակիցներն առաջնորդվում են այն համոզմամբ, համաձայն որի ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում այդպիսի բանկային գաղտնիքի սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողություն:

Ի սկզբանե համաձայն չենք վերը նշված տեսակետի հետ:

Կարծում ենք բանկային գաղտնիքի տրամադրման դատական վերահսկողության ընթացակարգը հարկ է դիտար-

կել մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի համատեքստում:

Այսպես՝ Սարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումներում տվել է «մասնավոր կյանքի» ընդհանուր հասկացությունը, համաձայն որի, այն իր մեջ ներառում է անհատի կյանքի ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյական կողմերը ինչպես նաև սեռական կյանքը, այլ անձանց հետ հարաբերությունները զարգացնելու իրավունքը՝ այդ թվում մասնագիտական և ձեռնարկատիրական ոլորտներում<sup>2</sup>:

Պետք է նշել, որ բանկային գաղտնիքի ձեռքբերման նկատմամբ դատական վերահսկողության հետ կապված հարաբերությունները ՀՀ օրենսդրությամբ կարգավորվում են հակասական ձևով: **Տվյալ հոդվածում կփորձենք վերլուծել քրեական հետապնդում իրականացնող մարմինների /այսուհետ՝ ԲՀԻՄ/ կողմից բանկային գաղտնիքի ձեռքբերման իրավական ռեժիմները՝ ձեռքբերման կարգը, պայմանները, դատական վերահսկողության ընթացակարգը:**

Հայաստանում վերը նշված ոլորտը կարգավորվում է **ՀՀ քր. դատ. օրենսգրքով**, «**Բանկային գաղտնիքի մասին**» /այսուհետ՝ «ԲԳ մասին», «**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին**» /այսուհետ՝ «ՓԼ և ԱՖ դեմ պայքարի մասին», «**Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին**» /այսուհետ «ՕՀԳ մասին» **ՀՀ օրենքներով:**

Կախված սույն փոխհարաբերությունները կարգավորող իրավական ակտերի ընդհանրություններից և հակա-

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տես. **Սարանգուլյան Հ., Ղամբարյան Ա.** Բանկային գաղտնիքը քրեական դատավարությունում (22.10.2004թ. դատական որոշման մեկնաբանություն): «Օրենք և իրականություն», 2005, թիվ 10, էջեր 14-16:

<sup>2</sup> Де Сальвиа М. Прецеденты Европейского Суда по правам человека. Руководящие принципы судебной практики, относящиеся к Европейской конвенции о защите прав человека и основных свобод. Судебная практика с 1960 по 2002г. СПб., 2004. С. 535-536

սուբյուկտներից մենք կառաջարկենք դրանց ուսումնասիրության հետևյալ համակարգը.

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք,

ՀՀ քր. դատ. օրենսգիրք և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք,

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք:

Առաջին հերթին անհրաժեշտ ենք համարում տալ բանկային գաղտնիքի օրենսդրական սահմանումը՝ այսպիսով, համաձայն «ԲԳ մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի **«Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկություններն ու նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ»:**

1. «ՓԼ և ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13 հոդ. 4-րդ մասը սահմանում է, որ քրեական հետապնդման մարմինների **հարցման** հիման վրա, լիազոր մարմինը՝ ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը /այսուհետ ՖԴԿ/, տրամադրում է իր տրամադրության տակ առկա, այդ թվում օրենքով գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, եթե հարցումը պարունակում է բավարար հիմնավորում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմնավոր կասկածի կամ դեպքի վերաբերյալ:

Փաստորեն, ստացվում է, որ հանցագործության մասին քիչ թե շատ հիմնավորված հաղորդագրության առկայության դեպքում ՔՀԻՍ օպերատիվ տեղե-

կություն իրացնելիս, հարցումով կարող է ստանալ բանկից իր հաճախորդի մասին բանկային գաղտնիք պարունակող ցանկացած տեղեկություններ: Նշենք նաև, որ այս դեպքում օրենքը չի սահմանափակում տեղեկությունների տրամադրումը միայն կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ, նորմը չի նշում նաև անձի տեսակը /ֆիզիկական, թե, իրավաբանական/, բացակայում է նաև հարուցված քրեական գործի պահանջը:

Կարծում ենք, որ ստեղծված իրավիճակում՝ առանց հստակ և օրենքով կարգավորված ընթացակարգի խախտվում է բանկի հաճախորդների բանկային գաղտնիքի իրավունքը:

Ի լրումն վերը շարադրվածին ավելացնենք, որ «ԲԳ մասին» ՀՀ օրենքի 13<sup>1</sup> հոդվածի համաձայն Կենտրոնական բանկի կոմից վերլուծելու արդյունքում, եթե պարզվում է, որ տեղի է ունեցել ապօրինի ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեպք կամ փորձ, Կենտրոնական բանկն ուղղակիորեն հաղորդում է ներկայացնում ՔՀԻՍ: Ի լրումն հաղորդման Կենտրոնական բանկի կողմից կարող են ներկայացվել նաև բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

Առաջարկում ենք նման դեպքերում, հարցման ի պատասխան լիազոր մարմինը ՔՀԻՍ տրամադրի տեղեկանք՝ սահմանափակելով բանկային գաղտնիքի վերաբերյալ տրամադրվող տեղեկատվությունների ծավալը: Օրինակ, այդ տեղեկանքի մեջ կարող է ներառվել անձի բանկային հաշիվների առկայության, նրա կողմից կատարված բանկային գործառնությունների փաստի վերաբերյալ տեղեկատվություն: Այս պարագայում տեղեկանքում ներառված տեղեկատվությունը թեև օրենքի տառի իմաստով սահմանափակում է անձի բանկային գաղտնիքի իրավունքը, սակայն գործնականում տեղականքում տեղ գտած

տեղեկատվության սահմանը առավելագույնս նեղացված է:

Դատավարական առումով տեղեկանքը կարող է օգտագործվել որպես քրեական գործ հարուցելու, ինչպես նաև քննչական գործողություններ կամ այլ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու առիթ կամ հիմք: Սակայն այն չի կարող օգտագործվել որպես ապացույց:

Իրավագիտության դոկտոր **Ա.Ղամբարյանն** անդրադառնալով այն հարցին, թե արդյոք ՀՀ քր. դատ. օր-ի 172-րդ հոդվածի (դատարանի որոշմամբ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ստանալը) և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի (փողերի լվացման դեպքում առանց դատարանի որոշման բանկային գաղտնիք կազմող տեղեկության ստանալը) միջև առկա է հակասություն, նշում է, որ այս օրենքների միջև բացակայում է իրավական հակասություն, այլ խոսքը գնում է ընդհանուր նորմից բացառության սահմանման մասին: Այսպես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում հակասություն չի համարվում ընդհանուր նորմից բացառության սահմանումը: ՀՀ քր. դատ. օր-ի 172-րդ հոդվածն ընդհանուր ձևով սահմանում է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ձեռք բերվել դատարանի որոշմամբ (ընդհանուր նորմ), իսկ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետ,

ընդհանուր կանոնից բացառություն անելով, հնարավորություն է տալիս փողերի լվացման դեպքում այդ տեղեկությունները ստանալ առանց դատարանի որոշման (ընդհանուր նորմից բացառության սահմանում): **Կարծում ենք, որ փողերի լվացման դեպքում պետք է կիրառվի ընդհանուր նորմի բացառությունը՝ այն է առանց դատարանի որոշման, Կենտրոնական բանկի միջոցով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման մասին նորմը:** Մինևույն ժամանակ, հեղինակը իրավակիրառ պրակտիկայում տարակարծություններից խուսափելու նպատակով, առաջարկում է ՀՀ քր. դատ. օր-ում նույնպես նախատեսել փողերի լվացման դեպքում առանց դատարանի որոշման բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման մասին իրավական նորմ:<sup>3</sup>

Կարծում ենք Ա.Ղամբարյանի այս մտտեցումը անընդունելի է: Գտնում ենք, որ Կենտրոնական բանկի կողմից քրեական հետապնդման մարմինների հարցման հիման վրա բանկերի հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը ունի քրեադատավարական բնույթ: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի քննարկվող դրույթը չի կարող համարվել ՀՀ քր. դատ. օր-ի 172-րդ հոդվածի բացառություն, քանի որ, մեր կարծիքով, այս դեպքում որոշիչ է հանդիսանում պաշտպանվող բանկային գաղտնիքի իրավունքը, որի ՔՀԻՄ տրամադրման դատավարական կարգը հստակ սահմանված է քրեական դատավարության օրենսգրքով: Այսինքն, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի այն դրույթը

<sup>3</sup> Տե՛ս **Հովսեփյան Ա., Շահինյան Վ., Ղամբարյան Ա.** Մինչդատական վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտագործնական ձեռնարկ, Եր.: Հրատ «ԵՊՀ», 2009. էջ 268:

քը, համաձայն որի օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ղլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին, կարծում ենք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետը հակասում է ՔԴՕ ՀՀ քր. դատ. օր-ի 172-րդ հոդվածի պահանջներին:

2. «ԲԳ մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա:

Նույնաբովանդակ պայմաններ են նախատեսում ՀՀ քր. դատ. օր-ի 172-րդ հոդ. 3<sup>2</sup>, ինչպես նաև 228-րդ հոդ. 1-ին մասերը՝ համաձայն որոնց ՔՀԻՄ քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

Այս ամենի հետ մեկտեղ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները սահմանող 279 հոդվածում որևէ նշում չկա այն մասին, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ու նման տեղեկություններ պարունակող փաստաթղթերի խուզարկությամբ կամ առգրավմամբ ստանալու հետ կապված քննչական գործողությունները կատարվում են դատարանի որոշմամբ:

Համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնք առաջարկում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ դա-

տարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները սահմանող 279 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման, ավանդների և հաշիվների, այդ թվում իրավաբանական անձանց գործարքների և հաշիվների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն ու նման տեղեկություններ պարունակող փաստաթղթերը խուզարկությամբ կամ առգրավմամբ ստանալու հետ կապված քննչական գործողությունները»<sup>4</sup>:

Վերը նշված նորմերի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել հետևյալ պայմանները, որոնց առկայության դեպքում բանկը պարտավոր է ՔՀԻՄ տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, դրանք են՝

1. քրեական գործի հարուցումը,
2. կասկածյալի կամ մեղադրյալի ներգրավվածությունը,
3. դատարանի որոշումը:

Այսինքն, վերը նշված նորմերի կիրառումը անհնարին է նախքան քրեական գործի հարուցումը, իսկ եթե նույնիսկ առկա է հարուցված քրեական գործ, սակայն անձը դեռևս չունի կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ, ապա բացառվում է նրա վերաբերյալ բանկային գաղտնիքի ձեռքբերումը:

Երկրորդ կարևոր նախապայմանը այն է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են մի-

<sup>4</sup> ՀՀ գլխավոր դատախազության Ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական **Ա.Ս. Գոյունյանի** զեկույցը ՀՀ գլխավոր դատախազ **Ա.Գ. Հովսեփյանին**:

այն կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ, ուստի քրեական դատավարությունում իրավաբանական անձի վերաբերյալ բանկային գաղտնիքի ձեռքբերումը նույնպես բացառվում է: Այս դեպքում կասկածյալի կամ մեղադրյալի ներգրավվածության պայմանը բավականին լուրջ խոչընդոտ է հանդիսանում իրավապահ մարմինների համար ֆինանսական կամ այլ բնույթի հանցագործությունների առավել արդյունավետ բացահայտմանը:

Փաստորեն այս դեպքում ստացվում է հակառակ պատկերը: Եթե «ՓԼ և ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13 հոդ. 4-րդ մասը մաքսիմալ կերպով պարզեցնում է բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների ՔՀԻՄ դրամադրելու կարգը, ապա «ԲԳ մասին» ՀՀ օրենքը և ՀՀ քր. դատ. օրենսգիրքը նախատեսում է բանկային գաղտնիքի ձեռքբերման առավել բարդացված ընթացակարգ:

Ստեղծված իրավական անորոշությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից, **առաջինը՝** բանկային գաղտնիքի բացահայտման և բանկի հաճախորդի իրավունքների խախտման և **երկրորդը՝** վերը նշված իրավական ակտերի նորմերի կիրառմամբ ձեռք բերված տեղեկությունները հետագայում որպես ապացույց օգտագործելու հնարավորությունից:

«ՓԼ և ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ձեռքբերումը չի նախատեսում որևիցե դատավարական կարգ, բացակայում է դատական վերահսկողությունը՝ ինչի արդյունքում ոտնահարվում են բանկի հաճախորդի (ֆիզիկական անձի) անձնական կյանքի անձեռնամխելիության սահմանադրական իրավունքը:

Ինչ վերաբերվում է այս աղբյուրներից ստացված տեղեկատվությունների ապացուցողական նշանակությանը՝ ապա դրանք կարող են օգտագործվել միայն որպես քրեական գործ հարուցելու, ինչպես նաև քննչական գործողություններ կամ այլ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու առիթ կամ հիմք, այլ ոչ թե դատա-

րանում որպես ապացույց:

Սակայն, հիշյալ տեղեկատվության օգտագործմամբ ստացված յուրաքանչյուր դրական արդյունքի դեպքում քրեական հետապնդում իրականացնող մարմինը կոնկրետ անձանց որպես կասկածյալ դիտարկելուց կամ մեղադրյալ ներգրավելուց հետո, բանկային գաղտնիք կազմող ստացված միևնույն տեղեկատվությունը կարող է լեգալացնել ՀՀ քր. դատ. օր-ի 172-րդ հոդ. 3<sup>2</sup>, ինչպես նաև 228-րդ հոդ. 1-ին մասով նախատեսված դատավարական կարգով և պայմանների պահպանմամբ այն վերածել որպես ապացույց:

**3.** «ՕՀԳ մասին» ՀՀ օրենքը սպառնիչ թվարկում է օպերատիվ-հետախուզական միջոցները /այսուհետ՝ ՕՀՄ/: Վերը նշված օրենքի 14-րդ հոդ. 15-րդ կետը, որպես ՕՀՄ ինքնուրույն տեսակ է նախատեսում ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում:

Նույն օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է, որ ֆինանսական տվյալների բանկային կամ այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումը առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները:

«ՕՀԳ մասին» ՀՀ օրենքով ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը հանդիսանում է դատական վերահսկողության առարկա /34-րդ հոդ. 1-ին մաս/ և կարող է անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ:

Առաջին հայացքից թվում է թե՛ «ՕՀԳ մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը չի սահմանափակում տեղեկությունների ստացումը միայն կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ: Սակայն օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը, որը վերնագրված է՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ, սահմանում է, որ օրենքի 14-րդ հոդ. 15-րդ կետերով նախատեսված ՕՀՄ կա-

րելի է անցկացնել միայն այն դեպքում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ:

Իսկ ինչպես հայտնի է «անձ» տերմինի տակ ՀՀ քրեական օրենսգիրքը հասկանում է օրենքով սահմանված քրական պատասխանատվության տարիքը լրացած, մեղսունակ, ֆիզիկական անձ:

ՀՀ քրեական իրավունքում ներկայումս նախատեսված չէ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանն առնչվող դրույթներ, ինչը նույնպես որոշակիորեն խոչընդոտում է անհրաժեշտության դեպքում իրավաբանական անձանց բանկային գաղտնիք պարունակող հաշվեհամարների վերաբերյալ տեղեկատվության ստացմանը: Խոսքը վերաբերում է այնպիսի դեպքերին երբ ՓԼ կամ ԱՖ հանցավոր գործունեության մեջ ներգրավված են լինում իրավաբանական անձանց որոշակի պաշտոնյաներ կամ աշխատակիցներ: Բավարար կասկածի և հիշյալ վարկածի ստուգման նպատակով նույն կարգով քրեական հետապնդում իրականացնող մարմինները կարող են ՖԴԿ-ից պահանջել և ստանալ բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն, մինչդեռ հետագայում այդ տեղեկատվության օգտագործմամբ հանցագործության բացահայտման պրոցեսում իրավաբանական անձի պաշտոնյային կամ աշխատակցին ներգրավելով որպես կասկածյալ կամ մեղադրյալ, նույն եղանակով չեն կարող դիմել դատարան և ստանալ դատարանի թույլտվությունն ապացույց հանդիսացող համապատասխան փաստաթղթային հիմքերը բանկից առգրավելու համար, քանի որ ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ հիշյալ մյուս օրենքներով սահմանված չէ իրավաբանական ան-

ձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները առգրավելու կարգը:<sup>5</sup>

Նշված խնդիրը առաջարկում ենք լուծել «ՕՀԳ մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում լրացում կատարելով, համաձայն որի նույն օրենքի 14-րդ հոդվածի 15-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումը կարելի է անցկացնել «**միայն այն դեպքում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, ինչպես նաև իրավաբանական անձանց նկատմամբ**»:

Հարկե է նշել, որ ահաբեկչության մասով «ՕՀԳ մասին» ՀՀ օրենքի 34 հոդ. 3-րդ մասը ուղակիորեն նախատեսում է, որ նույն օրենքի 29-րդ հոդվածով ՕՀՄ-ի անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ ՀՀ պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, ապա միջոցառումներն իրականացվում են նույնիսկ առանց դատարանի որոշման: Այնուհանդերձ, նման իրավիճակում պահանջվում է, որպեսզի դատարանը միջոցառման իրականացումից հետո 48 ժամվա ընթացքում կամ հաստատի այն, կամ որոշում կայացնի այն դադարեցնելու և ձեռքբերված տեղեկությունները և նյութերը ոչնչացնելու մասին:

Անդրադառնալով «ՕՀԳ մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 15-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառմանը՝ հարկ է նշել, որ տվյալ ՕՀՄ արդյունքները քրեական գործով, համաձայն ՀՀ քր. դատ. օր-ի 125 հոդվածի ապացույց չեն հանդիսանում: Սակայն, միևնույն ժամանակ «ՕՀԳ մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածի

<sup>5</sup> ՀՀ գլխավոր դատախազության Ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբեր-հանցագործությունների գործերով վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական **Ա.Ս. Գոյունյանի** զեկույցը ՀՀ գլխավոր դատախազ **Ա.Գ.Հովսեփյանին**:



1-ին մասի մեկնաբանությունը ցույց է տալիս որ նշված ՕՀՄ արդյունքները կարող են օգտագործվել որպես ապացույց: Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի այն դրույթը, համաձայն որի օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին, ստացվում է որ առաջացած իրավական հակասության պարազայում պետք է առաջնորդվել ՀՀ քր. դատ. օր-ի 125 հոդվածի պահանջներով:

Նման դեպքերում առաջանում է ՕՀՄ արդյունքների լեգալացման խնդիր: Իրավակիրառ պրակտիկայում այս խնդիրը ստացել է հետևյալ լուծումը՝ «ՕՀԳ մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 15-րդ կետով նախատեսված ՕՀՄ արդյունքում ստացված նյութերը ենթարկվում են զննման ՀՀ քր. դատ. օր-ի 217 և 218 հոդվածների կարգով: Չննման արդյունքում կազմված արձանագրությանը կցվում են ՕՀՄ նյութերը, որպես այլ փաստաթղթեր կամ իրեղեն ապացույցներ:

Վերլուծելով վերը շարադրված իրավական ակտերի նորմերը, ուսումնասիրելով դրանց տարբերություններն և ընդհանրությունները անհրաժեշտ ենք համարում արձանագրել հետևյալը՝

1. «ՓԼ և ԱՅ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13 հոդ. 4-րդ մասում, որը սահմանում է քրեական հետապնդման մարմինների հարցման հիման վրա, ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից օրենքով գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրումը,

կատարել փոփոխություն համաձայն որի լիազոր մարմինը ՔՀԻՄ տրամդրի տեղեկանք սահմանափակելով բանկային գաղտնիքի վերաբերյալ տրամադրվող տեղեկատվության ծավալը:

2. «ՕՀԳ մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում կատարելով լրացում, համաձայն որի նույն օրենքի 14-րդ հոդվածի 15-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումը կարելի է անցկացնել «միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, ինչպես նաև իրավաբանական անձանց նկատմամբ»:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները սահմանող 279 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«Դատարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման, ավանդների և հաշիվների, այդ թվում իրավաբանական անձանց գործարքների և հաշիվների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն ու նման տեղեկություններ պարունակող փաստաթղթերը խուզարկությամբ կամ առգրավմամբ ստանալու հետ կապված քննչական գործողությունները»:



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 78 2013

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ

- Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հուզական-բարոյական հարթությունից պետք է անցում կատարել դեպի իրավական հարթություն..... 2
- Ա. Հովսեփյանի ելույթի արձագանքները..... 8

### ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ դատախազության կոլեգիայում..... 13
- Միջազգային կապեր..... 15
- Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում ..... 18
- Լույս է տեսել..... 18

### ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀՈՒՆԱՐՁԱՆՆԵՐ

- Գառնիկ ՍԱՖԱՐՅԱՆ Մխիթար Գոշի քրեաիրավական հայեցակարգը ..... 19

### ԴԱՏԱՆԱԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

- Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ, Արամ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՀՀ գլխավոր դատախազի և հսկող դատախազի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու լիազորության տարանջատման հիմնադրոհիցները ..... 28

### ՏԵՍԱԿԵՏ

- Արթուր ՂԱՎԹՅԱՆ, Գևորգ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ Սուտ մատնության քրեաիրավական և քրեադատավարական ասպեկտների հարաբերակցությունը ..... 33

### ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Գոռ ԱԼՈՅԱՆ Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կրիմինալոգիական բնութագիրը ..... 38

### ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ քրեական իրավունքի ինքնուրույն ինստիտուտ ..... 47

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Վաչե ՍԻՍՈՆՅԱՆ Քրեական հետապնդման մարմինների կողմից բանկային գաղտնիքի ձեռքբերման իրավական ռեժիմը և դատական վերահսկողության հիմնախնդիրները..... 56